

375

0-98

375:373

Ծ-98

MAR 2010

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅՈՑ ԹԵՍԱԿԱՆ ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ

Ա Ռ Ա Ր Կ Ա Ն Ե Ր Ի

Ս. ԷՋՄԻԱՆԻՆ

Էլեկտրապատկերային Մանր Արտույ

1916

11 5 MAY 2013

375:373

5-98

այ

22


Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ

Ա Ռ Ա Ր Կ Ա Ն Ե Ր Ի

ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ

ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ



Ս. ԷԶՄԻԱՇԻՆ

Էլեկտրոնային Տպագրության Մայր Աթոռ

1916

375 | 30345

5-98 | Ծրագիր

հայոց բժշակ. հոգևոր. ղեկ.

VII 5-2988 8/1-8/

30345

Գ Գ Ք Մ Գ Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԵՈՐԳԵ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԾՐԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Ի վերայ իսկականին՝
«Հաւան գետի, հաստատեմք
տամք ի գործադրութիւն»:
26 Մարտի 1916 ամի.

Գ Է Ս Բ Գ Ե.
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ ԵՒ ՃԵՄԱՐԱՆԻ
ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Կրօնի դասաւանդութեան նպատակն է աշակերտներէ մէջ
գարթեցնել և զարգացնել Կրօնական-բարոյական զգացումը և հիմք
դնել Կրօնական-բարոյական աշխարհայեցողութեան:

Դրա համար անհրաժեշտ է Կրօնական և բարոյական ար-
ժէքների հիմնական տարրերն այն չափով ըմբռնելի կացուցանել,
որ նրանց ճշմարտութիւնն առանց այլ և այլութեան արմատաւանայ
աշակերտների գիտակցութեան մէջ: Այդ նպատակին հասնելու
ամենալաւ ճանապարհն է Կրօնական կեանքի զարգացման կամ
պատմութեան ընթացքն ուսուցանելը, որի ժամանակ գլխաւոր
ուշադրութիւնը պէտք է դարձնել այն ամենի վրայ, ինչ որ Կրօ-
նական-բարոյական տեսակէտով արժէքաւոր է և կարող է խթան
լինել նոր կեանք առաջացնելու: Ուրեմն պէտք է կենդանի կեր-
պով նկարագրել և նկարագրել տալ աշակերտներին այնպիսի անձ-
նաւորութիւնների հոգեկան կեանքը, որոնք Կրօնական-բարոյական
գաղափարի մարմնացումն են կամ ստեղծել ու զարգացրել են
Կրօնական-բարոյան արժէքներ: Այդ բանն այնքան աւելի կյաջո-
ղուի, որքան աշխատանք գործ դրուի ըստ կարելւոյն հաւատա-
րիմ մնալու ու Գրքի բնագրին, որը ամենագլխաւոր աղբիւրն է
Կրօնի ուսուցման:

Կրօնի դասաւանդութեան համար հիմք ընդունելով այս հայ-
եացքը, ամբողջ ծրագիրը բաժանուած է երեք շրջանի.

Ա. շրջան I և II դասարաններ, ուր պէտք է անցնել նոր-
ուխտի սրբազան պատմութիւն և Առաքելական շրջանի ու կա-
թողիկէ եկեղեցու հաստատութեան պատմութիւնը: (Ենթադրու-
մ է ի հարկէ, որ պատրաստական դասարանի Դ. բաժանմունքում
կանոնաւոր աւանդուել է հին ուխտի սրբազան պատմութիւն):

Բ. շրջան՝ III, IV և V դասարաններ, ուր անհրաժեշտ է
ծանօթացնել աշակերտներին ս. Գրքի ընդհանուր բնութեան
և մասնաւոր բովանդակութեան հետ, կարդալով և բացատրելով
դասարանում մարգարէական գրքերի, սաղմոսների, աւետարան-
ների և առաքելական թղթերի ամենաընտիր հատուածները, հա-
մաձայն ցոյց տրուած ծրագրի:

Գ. շրջան, VI և VII դասարաններ, որտեղ կրօնի դասաւան-
դութեան նպատակը պէտք է լինի աշակերտների մէջ ըստ կարելի-
ւոյն հաստատել քրիստոնէական բարոյական աշխարհայեացքը,
ապացուցանելով միեւնոյն ժամանակ, որ քրիստոնէութեան քա-
րողած բարոյականութիւնը մարդկութեան բարձրագոյն դադափարն
է, որին չէ հասել ոչ մի այլ կրօն:

VI դասարանում աւանդելով հայոց եկեղեցու դաւանաբանու-
թեան և քրիստոնէական բարոյագիտութեան հիմնական սկզբունք-
ները, վերջին VII դասարանում պէտք է ուսուցանել կրօնների
պատմութիւն, համեմատական եղանակով, ցուցադրելով քրիստո-
նէական կրօնի բացարձակ առաւելութիւնն ու գերադանցութիւնը
իբրեւ ճշմարիտ կրօն:

Ա. Դասարան

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՈՒՆՏԻ

1. Հին և նոր Ուխտի և նրանց առնչութիւնը. համառոտ
աղնարկ հրէից կրօնական և քաղաքական վիճակի մասին: (Տա-
ճարի պաշտամունքը, Դպիրներ, Փարիսեցիներ և Սադուկեցիներ):

2. Աւետումն և Ծնունդ Յիսուսի. մոգերի երկրպագութիւնը,
ընծայումն ի տաճար, փախուստ Եգիպտոս, 12 տարեկան Յիսուս
տաճարում:

3. Յովհաննէս Մկրտչի ծնունդն ու քարոզութիւնը: Յիսուսի
մկրտութիւնը և փորձութիւնը:

4. Առաքեալների ընտրութիւնը.

5. Լերան քարոզը.

6. Անդամալոյծի բժշկութիւնը Կափառնայում քաղաքում:

7. Դիւանարի բժշկութիւնը.

8. Յիսուսի հայեացքը պահեցողութեան, լուացման և շաքա-
թի մասին.

9. Սերմնացանի, որոմի, մանանխի, խմորի, մարգարտի և
ուռկանի առակները:

10. Յիսուսն ուղարկում է աշակերտներին քարոզելու.

11. Յովհաննէսի աշակերտների հարցը և Յիսուսի պատասխանը.

12. Հերովդէսի կարծիքը Յիսուսի մասին և Յովհաննէսի մահը:

13. Քանանացի կինը.

14. Պետրոսի խոստովանութիւնը Փրիպպեայ Կեսարիայում.

15. Աշակերտները վիճում են, թէ ով է մեծ երկնքի ար-
քայութեան մէջ:

16. Փարիսեցիներ և մաքսաւորը.

17. Կորուսեալ ոչխարի և գրամի առակը.

18. Անառակ որդու առակը.

19. Չար ծառայի առակը.

20. Ողորմած սամարացու առակը.

21. Փարիսեցիների հարցը ապահարզանի մասին.

22. Յիսուս և մանուկները.

23. Հարուստ երիտասարդը.

24. Այգու մշակների առակը.

25. Մաքսաւոր Զաքէոսը.

26. Քանքարների առակը.

27. Անիւբաւ դատաւորի առակը.

28. Այրի կնոջ լուման.

29. Կափառնայումի հարիւրապետը.

30. Անմիտ հարուստը.

31. Մեծ ընթրիքի առակը.

32. Հարստի և աղքատ Ղազարոսի առակը.

33. Տասն Կոյսեր.

34. Վերջին դատաստանի մասին.

35. Յիսուս և սամարացի կինը.

36. Յիսուսի օծումը Բեթանիայում.

37. Յիսուս մտնում է Երուսաղէմ.

38. Վէճ իշխանութեան, Կայսեր հարկի և յարութեան մասին:

39. Յուդայի մատնութիւնը.
40. Ուտնալուայ և խորհրդաւոր ընթրիք.
41. Յիսուս Գեթսեմանի պարտիզում.
42. Յիսուս քահանայապետի առաջ և Պետրոսի ուրացութիւնը.
43. Յիսուս Պիղատոսի առաջ. Հարչարանք, խաչելութիւն և մահ:
44. Յիսուսի թաղումը, յարութիւնը և համբարձումը:
45. Հոգեգալուստ:

Բ. Դասարան

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ Ա. ԴԱՐՈՒՄ ԵՒ
ԿԱԹՈՒՂԻԿԵ ԵԿԵՂԵՅՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

1. Հոգեգալուստ: Պետրոսի քարոզը և առաջին քրիստոնեայ համայնք—համայնական կեանք (Գործք Բ. 44—47 և Դ. 32—37):
2. Կաղի բժշկութիւնը և առաջին հալածանք առաքեալներին դէմ և վկայութիւն.
3. Անանիա և Սափիրա. Առաքեալների բանտարկութիւնը և դատը. Գամաղիէլի խորհուրդը.
4. Եկամուտ և բնիկ հրէաներ. Եօթը վերակացունների ընտրութիւնը և Ստեփանոսի վկայութիւնն ու նահատակութիւնը:
5. Հալածանք առաքեալների դէմ. Փիլիպպոսը Սամարիայում. Սիմոն մոգ. Եթովպացի ներքինին.
6. Սաւուղի դարձը.
7. Կոնստիտոս հարիւրապետի դարձը և Պետրոսի տեսիլը:
8. Յակովբոս առաքեալի մարտիրոսական մահը և Պետրոսի ազատութիւնը:
9. Պողոսի առաքելական առաջին ուղևորութիւնը.
10. Հեթանոս քրիստոնեաների խնդիրը և առաքելական ժողովը Երուսաղէմում:
11. Պողոսի առաքելական երկրորդ և երրորդ ուղևորութիւնը:
12. Պողոսի կալանաւորումը, դատը և ուղևորութիւնը Հռոմ:
13. Պետրոս և Յովհաննէս առաքեալներին գործունէութիւնն ու մահը:
14. Քրիստոնէութեան տարածումը առաջին երեք դարերում

և գլխաւոր կենդրոնները (Անտիոք, Փոքր Ասիա, Զմիւռնիա, Եփեսոս, Հայաստան, Աղէքսանդրիա, Հռոմ և Լիոն):

15. Հեթանոս աշխարհի հալածանքը զէնքով և գրչով. վկաներ և ջատագոյններ (Պիլիպպոս Զմիւռնացի, Իրենիոս, Յուստինոս և Տերտուլիանոս):

16. Կաթողիկէ եկեղեցու կազմակերպութիւնը. (Եպիսկոպոս, Երէց և Սարկաւագ: Պաշտամունք, Նոր Կտակարանի կանոն. աշանդներ և ժողովներ):

17. Քրիստոնէութիւնը Գ. դարու վերջում, վերջին հալածանքները և յաղթանակը (Դիոկղետիանոս, Կոստանդին Մեծ, Նիկիոյ ժողով):

ԿԱՐԳ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

1. Գիտելիք աստուածաշտութեան մասին.
2. Եկեղեցու շէնքը և նրա մասերը.
3. Եկեղեցու խորհուրդները.
4. Ժամակարգութիւն և իւր տեսակները: Պատարագ:
5. Սրբազան անօթներ, զարդեր և զգեստներ.
6. Եկեղեցական նուիրապետութիւն (հայ և օտար):

Գ. Դասարան

ՈՒՍՈՒՄՆ Ա. ԳՐՈՅ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

1. Ներածութիւն. Հին Կտակարանը և նրա մասերը—Օրէնք, մարգարէք և Գիրք. (համառօտ մատենագրական ակնարկ):
2. Իսրայէլի ժողովրդի ծագումը, կրօնի հաստատութիւնը և Քանանի նուաճումը: ա. Իսրայէլի հնագոյն օրհնութիւններն իբրև Իսրայէլի կրօնի նախնական արտայայտութիւններ. (Ծնունդը Խթ. 1—27, Ելք ԺԵ. 1—19, Բ. Օր. ԼԳ. 1—29, Դերովրայի երգը. Դատ. Ե. 1—31. և Դաւթի ողբը. Բ. Թագ. Ա. 19—27): բ. Օրէնստուութիւն. (Ելք Ի. 1—ԻԳ. 19, Բ. Օր. Ե. 1—21). բացատրել այս օրէնքների մարգասիրական և արդար բնաւորութիւնը հեթանոսների օրէնքների համեմատութեամբ: գ. Աստուծոյ գաղափարը Իսրայէլի կրօնի մէջ և նրա յարաբերութիւնը դէպի ժողովուրդը. (Բ. Օր. 2. 1—21, ԻԳ. 20—26, ԻԴ. 6—22.):

3. Մարգարէներ ծագումը և նոցա դերը Իսրայէլի մէջ (տեսնող և ոգևորող խմբեր պատերազմների ժամանակ): Եղիա մարգարէ՝ նախանձախնդիր մի և ճշմարիտ Աստուծոյ գաղափարի:

4. Իսրայէլի վիճակը Ամովսի ժամանակ: Ամովս առաջին հեղինակ մարգարէ. (Ամովս. Ա. 1—Դ. 3, Ե. 1—25, Է. և Ը. Թ. 7—10. Ամովսի ըմբռնումը մարգարէի կոչման մասին, Աստուծոյ անպայման արգարադատութիւնը, ազգերի անխորականութիւնը Աստուծոյ առաջ):

5. Ովսէ մարգարէ (ԺԱ. և ԺԲ. գլուխները. Արդարութեան Աստուածը՝ սիրոյ և ողորմութեան Աստուած):

6. Եսայի մարգարէ (Զ. գլ. տեսիլը. Ա. գլ. ամբողջովին, Բ. 5—Դ. 18, Ե. Ը. Սամարիայի կործանումը. ԼԶ. և ԼԷ. Երուսաղէմի պաշարումն ու աղատութիւնը: Է. Թ. 1—6 և ԺԱ. 1—10 մեծախառն գուշակութիւններ):

7. Երեմիա մարգարէի կեանքը և Երուսաղէմի կործանումը. (Ա. գլ. մարգարէի կոչումը. Բ. 1—Դ. 10, Դ. 5—2. վերջը. Իսրայէլի ամբարշտութիւնը, մարգարէի յորդորները և հոգեկան տաղանապը. Է—Թ. 24, Աստուծոյ պահանջած արգարութիւնը և ժողովրդի խտասրտութեան հետեանքները:

ԺԵ. 5—ԺԷ. 18 մարգարէի սուգը: Ի. 1—10 և 14—18. մարգարէի յուսահատութեան բուռները.

Լ. 1—ԼԱ. ԼԴ. գուշակութիւններ երջանիկ ապագայի):

8. Հրէաները գերութեան մէջ. մարգարէութիւններ գերութիւնից աղատուելու մասին Եզեկ, ԼԷ 1—14, Ես. Խ, ԽԲ, ԽԴ, Ծ. 4—ԾԴ. ԿԱ. և ԿԲ:

9. Սաղմոսները որպէս Իսրայէլի կրօնական զգացմունքների բանաստեղծական արտայայտութիւն.

Ա. Գ. Դ. Ե. Զ. ԺԲ. ԺԴ. ԻԳ. ԻԵ. ԻԶ. Լ. ԼԴ. Խ. ԽԱ. Ծ. Ը. Դ. ԶԻ. ԶԻԱ. ԶԼԶ. ԶԽԵ.:

Ծանօթութիւն.—Ս. Գրքի ցոյց տրուած բոլոր հատուածները պէտք է գառարանում կարդալ և բացատրել:

Դ. Դասարան

ՈՒՍՈՒՄՆ Ս. ԳՐՈՑ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

(Աւետարաններ)

1. Նոր Կտակարանի բաղկացուցիչ մասերը և գրքերը. համառոտ մատենագրական ակնարկ Նոր Կտակարանի գրուածքների մասին. Համատեսութեան գաղափարը և Յովհաննու աւետարանի առանձնայատկութիւնը:

2. Պատմական ակնարկ Հրէական ժողովրդի դրութեան մասին Հռովմայեցոց տիրապետութեան ժամանակ: Տաճար, ժողովարան, Դահանայաւետութիւն, Փարիսեցիք և Սադուկեցիք:

3. Գրիստոսի վարդապետութեան էական մասերը. Լերան քարոզը. Մատթ. Ե—Է. համեմատելով Ղուկ. Զ. 20—49, ԺԱ. 1—13, 33—36, ԺԲ. 22—31, 57—59.

(Երանութիւններ, Յիսուսի դիւրքը դէպի հին օրէնքը և նոր օրէնքի կատարելութիւնը, նոր բարեպաշտութիւն, ողորմութիւն, աղօթք (համեմատել Ղուկ. ԺԸ 9—14) պահք. օրէնք կենցաղավարութեան):

4. Աշակերտների ընտրութիւնը և առաքելական կոչումը. Մատթ. Դ. 18—22, Ղուկ. Ե. 1—11, Մարկ. Ա. 16—20, Մատթ. Ժ. ամբողջ, Ղուկ. Ժ. 1—12, ԺԲ. 1—12, 49—53:

5. Յիսուսի առաքիները (մանրամասն բացատրութեամբ). ա. Առաքիներ Աստուծոյ արքայութեան գաղափարի մասին. Մատթ. ԺԳ 1—50, Ղուկ. Ը 4—15, ԺԳ 18—21. Մարկ. Դ. 1—20, 26—32:

բ. Առաքիներ երկնաւոր Հօր գաղափարի, Հայրական սիրոյ, ներողամտութեան մասին: Կորուսեալ ոչխարի և դրամի առակը. Ղուկ. ԺԵ. 3—10. Անառակ որդու առակը ԺԵ 11—32. Չար ծառայի առակը Մատթ. ԺԸ 21—35. Ողորմած Սամարացու առակը Ղուկ. Ժ 25—37.

Չար մշակները Մատթ. ԻԱ 33—46., Մարկ. ԺԲ 1—12. Ղուկ. ԻԳ—19: Անիրաւ տնտեսը Ղուկ. ԺԶ 1—13: Քանքարների առակը Մատթ. ԻԵ 14—30, Ղուկ. ԺԹ. 11—27: Մեծ ընթրիքը Մատթ. ԻԲ. 1—14. Ղուկ. ԺԴ 15—24: Այգու մշակները Մատթ. Ի. 1—16:

Աղքատ Ղազարոսի առակը Ղուկ. ԺԶ. 19—31.

6. Յիսուսի վերջին քարոզները և վերջին դատաստան. Մատթ. ԻԲ. 15—ԻԵ. 46:

(Կայսեր հարկ, վէճ յարութեան մասին, սիրոյ մեծ պատուիրանը, փարիսեցիական արտաքին բարեպաշտութեան քննադատութիւնը: Վերջին դատաստան, տասն կոյսեր, վարձք ու պատիժ):

7. Սիրոյ քարոզը. Յովհ. ԺԴ. 31—ԺԶ. —ի վերջը:

Ե. Դասարան

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԹՂԹԵՐ

1. Մատենագրական համառօտ ակնարկ թղթերի ծագման և նոր կտակարանի մէջ մտնելու մասին:

2. Պօղոս առաքեալի թղթերը. Պօղոսի համառօտ կենսագրութեանը և գլխաւոր թղթերը:

Առ Հռովմայեցիս թուղթ

ա. Հաւատով արգարութիւն և օրէնքի դաստիարակչական դերը. Հռովմ. Ե.—Է գլուխները համեմատել Գաղ. Գ. 1—Դ. գլխի վերջը:

բ. Հոգւոյ արդիւնքը և աստուածային շնորհներով պայմանաւորուած կեանքը. Հռովմ. Ը—ԺԲ համեմ. Գաղ. Ե. 13—Զ. 10:

գ. Կորնթացոց թղթերը. հերձուածներ, խաչի հաւատ և հոգեւոր իմաստութիւն:

Ա. Կորնթ. Ա. 10—Գ. 23:—Հոգւոյ շնորհները Ա. Կորնթ. ԺԲ:—Սիրոյ օրհներգը. Ա. Կորնթ. ԺԳ:—Յարութեան յոյսը Ա. Կորնթ. ԺԵ:—Հաւատացեալի աննկուն տոկոսութիւնը ներդութեանց մէջ. Բ. Կորնթ. Զ:

դ. Առ Եփեսացիս և առ Փիլիպպեցիս թղթերը: Բրիստոնէական համայնքի միութիւնը և նրանից պահանջուած առաքինութիւնները. Եփես. Դ—Զ., Փիլիպ. Ա. 27—Բ. 18:

3. Կաթողիկէայց թղթեր. (այսպէս կոչուելու պատճառը):

ա. Յակովբոսի թուղթը. համբերութիւն փորձութեան մէջ և լրջմիտ խոհականութիւն. լեզուի պատճառած չարիքը. Յակ. Ա. 13—27, Գ., Դ.—Երկրաւոր հարստութեան ունայնութիւնը և աղօթքի ոյժը. Յակ. Ե:

բ. Յովհաննու առաջին թուղթը. Աստուածային սիրոյ համապատասխան եղբայրական սէր.—Ա. Յովհ. Գ. Դ և Ե. 1—5:

4. Համառօտ տեղեկութիւն Եբրայեցոց թղթի և Յովհաննու Յայտնութեան մասին:

Զ. Դասարան

ԴԱՒԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. Կիսամիակ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՒԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Հաւատոյ Հանգանակն իբրեւ հիմք դաւանաբանական ուսման.

1. Աստուծոյ յայտնութիւնը տիեզերքի, բարոյական աշխարհի, անհատական կեանքի և ազգերի պատմութեան մէջ: Հաւատը միակ հոգեկան կարողութիւն աստուածայինն ըմբռնելու համար: Ճշմարիտ Աստուծոյ գաղափարի և բարոյական գիտակցութեան անբաժան զուգորդութիւնը:

2. Աստուծոյ էութիւնն ու յատկութիւնները. սուրբ, արդար, հոգի է Աստուած, ամենակարող, ամենակալ, Աստուած արբիչ և նախախնամող, առաջնորդ կատարելութեան, Աստուած հայր, աղբիւր սիրոյ և ողորմութեան:

3. Աստուծոյ կատարեալ յայտնութիւնը յանձին Որդւոյ. Քրիստոսի մարդեղութիւնն ու փրկագործութիւնը (բացատրել Որդի Աստուծոյ, Որդի մարդոյ, Որդի Դաւթի, Մեսիա և Փրկիչ գաղափարները):

4. Քրիստոսի Խաչելութեան փրկարար զօրութիւնը. Հաւատ դէպի Յարուցեալը, մեր կեանքի վերանորոգիչը:

5. Աստուածային յայտնութիւնը Սուրբ Հոգու միջոցով «յօրէնս, ի մարգարէս և յաւետարանս»: Ս. Հոգու Կենսագործող և շնորհատու զօրութիւնը քրիստոնէական համայնքի մէջ:

6. Քրիստոնէական եկեղեցին և իւր խորհուրդները. վերստին ծնունդ հոգով, ապաշխարութիւն և մեղաց թողութիւն: Յարութեան և յաւիտենական կեանքի երաշխիք:—

Ամփոփումն երրորդութեան գաղափարի («Իսկ մեք փառաւորեսցուք»):

7. Հաւատոյ հանգանակի պատմական ծագումը. նիկիական և հայոց եկեղեցու գործածած հանգանակները:

8. Մարդեղութեան շուրջը ծագած վէճեր և բնութեանց խնդիր: Հայոց, յունաց և հռովմէական եկեղեցիների դաւանաբանական տարբերութիւնները: Սուրբ հոգւոյ բղխման խնդիր և տարբեր ծէսեր ու տօնակատարութիւն:

Բ. Կ ի ս ա մ ն ա կ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Բարոյական զգացում. բարոյական գիտակցութիւնն իբրեւ ուղեցոյց բանական, նպատակաւոր կեանքի. բարոյականութիւնն իբրեւ օրէնք և իբրեւ ներքին հրամայողական պահանջ. երջանկութիւն, թէ կատարելութիւն բարոյական կեանքի նպատակը:

2. Քրիստոնէական արդարութիւնը. ներքին բերմամբ կատարուած գործը միայն բարոյական. անսահման սէրը աղբիւր, չափ և նպատակ ամենայն արդարութեան. ճշմարիտ և կատարեալ սիրոյ յատկանիշը:

3. Սէր առ Աստուած. անհատական կոչումը. հաւատարմութիւն կոչման մէջ. կատարելութեան պահանջը և չափանիշը, նպատակակէտը:

4. Սէր առ ընկերն. համակրութեան բնական զգացումը և բարոյական արժէքը, եսական զգացման յաղթող զօրութիւնը. յանձին ընկերի կատարելութեան գաղափարի զարգացման նպատելու պահանջը. սէր առ թշնամին. անձնուրացութիւն և անձնագոհութիւն:

5. Ընտանեկան կեանք. բնական հակմանց արժէքը բարոյական կեանքի զարգացման համար. բարոյապէս վսեմացացած բնական սէրը ամուսինների, ծնողաց և զաւակների, և հարազատների մէջ. ընտանիքն աղպիսով առաջին և ամենակարևոր կըրթարան բարոյական կեանքի. ամուսնական սէրն իբրեւ ուսուցիչ փոխադարձ զիջման, ծնողական սէրն իբրեւ ուսուցիչ պարտաճանաչութեան, որդիական սէրն իբրեւ ուսուցիչ պատկառանքի, հարազատների սէրն իբրեւ ուսուցիչ ընկերական յարաբերութեան և փոխադարձ օգնութեան:

6. Ընկերական կեանք. յարաբերութիւն ազգականների և բարեկամների մէջ. ընտանեկան հաւաքումներն իբրեւ միջոց անմեղ հաճոյքի և ընկերական ոգու զարգացման. լաւ կողմերով միմեանց երևալու պահանջը. խաղը և գեղարուեստը իբրեւ միջոց անկաշկանդ զուարճութեան. գնահատելի նոցա այն արտայայտութիւնները, որ համակրական զգացումներ են զօրացնում և խոտելի, ինչ որ եսական բնաւորութիւն ունի:

7. Հասարակական կեանք. քաղաքացու պարտականութիւնները. մարդու և կնոջ դերը հասարակական կեանքի մէջ. հասարակական (սոցիալական) խնդիրը և նորա լուծումը քրիստոնէական տեսակէտից. քաղաքակրթութեան արժէքը բարոյական տեսակէտից. գեղարուեստի և բարոյականութեան առնչութիւնը. քրիստոնէական աշխարհակեցութեան ուղիղ ըմբռնումն և այս նկատմամբ տաճածուած թիւր կարծիքները. նիւթականից չփախչելու, այլ իբրեւ միջոց նկատելու և ի բարին գործադրելու պահանջը:

8. Պետական կեանք. կայսերը կայսրին տալու սկզբունքը. Պետութիւնն իբրեւ անհրաժեշտ կարգաւորութիւն արտաքին ապահովութեան և ազգերի փոխադարձ յարաբերութիւնը կանոնաւորելու համար. իշխանութեան և օրէնքին հնազանդելու պարտականութիւնը. հայրենասիրութեան զգացումը և նրա բարոյական սահմանը. պատուի գիտակցութիւն և նրա պաշտպանութեան բարոյական միջոցները:

9. Քրիստոնէական բնաւորութիւն, առաքինութիւն և պարտք:

Է. Դ ա ս ա ր ա ն

ԿՐՕՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս առարկայի դասաւանդութեան միտքն ու նպատակն է ծանօթացնելով միւս նշանաւոր կրօնների էութեան հետ, համեմատական եղանակով վեր հանել քրիստոնէութեան առաւելութիւնն ու բացարձակութիւնը նրանց վերաբերութեամբ—կրօնական և բարոյական խնդիրներում:

1. Կրօնի էութիւնն ու ծագումը:

2. Նախնական ազգերի կրօնը: Բնութեան ոգիացում և

7. Հաւատոյ հանգանակի պատմական ծագումը. նիկիական և հայոց եկեղեցու գործածած հանգանակները:

8. Մարդեղութեան շուրջը ծագած վէճեր և բնութեանց խնդիր: Հայոց, յունաց և հռովմէական եկեղեցիների դաւանաբանական տարբերութիւնները: Սուրբ հոգւոյ բղխման խնդիր և տարբեր ծէսեր ու տօնակատարութիւն:

Բ. Կ Ր Ս Ա Մ Ն Ա Կ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Բարոյական զգացում. բարոյական գիտակցութիւնն իբրեւ ուղեցոյց բանական, նպատակաւոր կեանքի. բարոյականութիւնն իբրեւ օրէնք և իբրեւ ներքին հրամայողական պահանջ. երջանկութիւն, թէ կատարելութիւն բարոյական կեանքի նպատակը:

2. Քրիստոնէական արդարութիւնը. ներքին բերմամբ կատարուած գործը միայն բարոյական. անսահման սէրը աղբիւր, չափ և նպատակ ամենայն արդարութեան. ճշմարիտ և կատարեալ սիրոյ յատկանիշը:

3. Սէր առ Աստուած. անհատական կոչումը. հաւատարմութիւն կոչման մէջ. կատարելութեան պահանջը և չափանիշը, նպատակակէտը:

4. Սէր առ ընկերն. համակրութեան բնական զգացումը և բարոյական արժէքը, եսական զգացման յաղթող զօրութիւնը. յանձին ընկերի կատարելութեան գաղափարի զարգացման նպատակելու պահանջը. սէր առ թշնամին. անձնուրացութիւն և անձնագոհութիւն:

5. Ընտանեկան կեանք. բնական հակմանց արժէքը բարոյական կեանքի զարգացման համար. բարոյապէս վսեմացացած բնական սէրը ամուսինների, ծնողաց և զաւակների, և հարազատների մէջ. ընտանիքն այդպիսով առաջին և ամենակարեւոր կրթարան բարոյական կեանքի. ամուսնական սէրն իբրեւ ուսուցիչ փոխադարձ զիջման, ծնողական սէրն իբրեւ ուսուցիչ պարտաճանաչութեան, որդիական սէրն իբրեւ ուսուցիչ պատկառանքի, հարազատների սէրն իբրեւ ուսուցիչ ընկերական յարաբերութեան և փոխադարձ օգնութեան:

6. Ընկերական կեանք. յարաբերութիւն ազգականների և քարեկանների մէջ. ընտանեկան հաւաքումներն իբրեւ միջոց անմեղ հաճոյքի և ընկերական ոգու զարգացման. լաւ կողմերով միմեանց երեւալու պահանջը. խաղը և գեղարուեստը իբրեւ միջոց անկաշկանդ զուարճութեան. գնահատելի նոցա այն արտայայտութիւնները, որ համակրական զգացումներ են զօրացնում և խոտելի, ինչ որ եսական բնաւորութիւն ունի:

7. Հասարակական կեանք. քաղաքացու պարտականութիւնները. մարդու և կնոջ դերը հասարակական կեանքի մէջ. հասարակական (սոցիալական) խնդիրը և նորա լուծումը քրիստոնէական տեսակէտից. քաղաքակրթութեան արժէքը բարոյական տեսակէտից. գեղարուեստի և բարոյականութեան առնչութիւնը. քրիստոնէական աշխարհակեցութեան ուղիղ ըմբռնումն և այս նկատմամբ տարածուած թիւր կարծիքները. նիւթականից չփախչելու, այլ իբրեւ միջոց նկատելու և ի բարին դործադրելու պահանջը:

8. Պետական կեանք. կայսերը կայսրին տալու սկզբունքը. Պետութիւնն իբրեւ անհրաժեշտ կարգաւորութիւն արտաքին ապահովութեան և ազգերի փոխադարձ յարաբերութիւնը կանոնաւորելու համար. իշխանութեան և օրէնքին հնազանդելու պարտականութիւնը. հայրենասիրութեան զգացումը և նրա բարոյական սահմանը. պատուի գիտակցութիւն և նրա պաշտպանութեան բարոյական միջոցները:

9. Քրիստոնէական բնաւորութիւն, առաքինութիւն և պարտք:

Է. Դ ա ս ա ր ա ն

ԿՐՕՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս առարկայի դասաւանդութեան միտքն ու նպատակն է ծանօթացնելով միւս նշանաւոր կրօնների էութեան հետ, համեմատական եղանակով վեր հանել քրիստոնէութեան առաւելութիւնն ու բացարձակութիւնը նրանց վերաբերութեամբ—կրօնական և բարոյական խնդիրներում:

1. Կրօնի էութիւնն ու ծագումը:

2. Նախնական ազգերի կրօնը: Բնութեան ոգիացում և

հմայութիւն (անիմիզմ և ֆետիշիզմ): Հոգիները պաշտամունք: Տաքու և տոտեմ: Նախնական ազգերի ըմբռնումն Աստուծոյ, մարդու և տիեզերքի մասին:

3. Եգիպտական և Ասորա-Բաբելական կրօններ: Երկնային մարմինների պաշտամունք: Մահ, գերեզման և ստորերկրեայ աշխարհ. պաշտամունք և բարոյականութիւն:

4. Իրանական կրօն. Իրանական կրօնի ծագումը՝ կապուած բնութեան և միջավայրի հետ: Զրադաշտ և նրա վարդապետութիւնը բարու և չարի պետութեան մասին:

5. Չինական և Ճապոնական կրօններ. Կոնֆուցիոսի և Լաո-ձէի վարդապետութիւնները:

6. Հնդկական կրօն. Համառօտ տեսութիւն Վեդայի և Բրահմականութեան, կանգ առնել զլիաւորապէս բուդդայականութեան վրայ, համեմատելով քրիստոնէութեան հետ:

7. Յունական և հռովմէական կրօններ. Համառօտ տեսութիւն յունական և հռովմէական կրօնների սկզբնական շրջանի մասին: Յունական կրօնի կրօնա-փիլիսոփայական շրջանը (Սոկրատէս, Պլատոն, Ստոյիկեաններ և այլն) համեմատելով քրիստոնէութեան հետ:

8. Իսրայէլի կրօնը և միաստուածութեան գաղափարի զարգացումը:

9. Իսլամ և նրա կախումը հրէութիւնից և քրիստոնէութիւնից:

10. Եզրակացութիւն. Քրիստոնէութիւնն իբրև բացարձակ վսեմ և ճշմարիտ կրօն:

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հայոց եկեղեցական պատմութեան ուսուցման նպատակն է կենդանացնել և վառ պահել աշակերտների յիշողութեան մէջ ազգային անցեալի առանձնայատկութիւնները և զօրացնել ազգային ինքնագիտակցութիւնը, պատկերացնելով նրանց առաջ այն ուրոյն դէմքը, որ ստացել է Հայ ազգը քրիստոնէութիւն ընդունելով, և նկարագրելով այն զարգացումը, որ անցել է նա դարերի ընթացքում: Դրանով ըմբռնելի կլինի աշակերտների համար անցեալից բոլոր ներկան և անցեալը խրատ կդառնայ ներկայի և ապագայի համար: Անշուշտ այստեղ էլ, ինչպէս և առ հասարակ բոլոր պատմական առարկաների մէջ, զլիաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնել իրերի և երևոյթների ոչ թէ արտաքին յաջորդականութեան, այլ ներքին կապակցութեան վրայ, անհնաժեշտաբար բացատրելով այն պատճառներն ու մղիչ ոյժերը, որ յառաջ են բերում պատմական երևոյթներ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ե. Դ ա ս ա ր ա ն .

Ներածութիւն. 1. Քրիստոնէութեան ծաւալումը յոյն-հռովմէական աշխարհում և նպաստող հանգամանքները. 2. Առաքելական հայրեր և ջատագոյններ. 3. Գլխաւոր աղանդները (որոնց նկատմամբ որոշ դիրք է բռնել Հայոց եկեղեցին). 4. Հալածանքներ քրիստոնէական եկեղեցու դէմ. 5. Քրիստոնէական եկեղեցու ներքին կեանքն ու կազմակերպութիւնը. 6. Անապատական և վանական կեանք:

Ա. շրջան.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՇՐՋԱՆՈՒՄ

1. Հայոց առաջին դարձն ի քրիստոնէութիւնս թաղէոս և
Բարդուղիմէոս առաքեալներ և այլ աւանդութիւններ ու պատմա-
կան տեղեկութիւններ: 2. Ս. Գրիգոր Լուսաւորիչ և հայոց ազ-
գովին քրիստոնեայ դառնալը: Լուսաւորչի որդիների և թոռների
գործունէութիւնը (Մասնակցութիւն Նիկիոյ ժողովին և Վրաց ու
Աղուանից քրիստոնէութիւն ընդունելը): 3. Մեծն Ներսէս և նրա
գործերը (Աշտիշատի ժողով): Ասորոց և Յունաց եկեղեցիների
հակադդեցութիւնը Հայաստանում: Հայոց եկեղեցու յարաբերու-
թիւնների ընդհատումը Կեսարիայի աթոռի հետ: 4. Ս. Սահակ Պար-
թև, Մեսրոպ Մաշտոց և Հայոց գրականութեան սկզբնաւորութիւնը
(Թարգմանիչներ): 5. Մծղնէից աղանդ և մաքառում նրա դէմ.
Շահապիւանի ժողովը: 6. Կրօնական պատերազմներ պարսիկների
դէմ և. դարում. Վարդան և Վահան Մամիկոնեան. Գիւտ և
Յովհաննէս Մանդակունի:

Բ. շրջան

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔԸ ԴԱԽԱՆԱԿԱՆ ՎԷՃԵՐԻ ՄԷՁ ԵՒ
ԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ

1. Համառօտ ակնարկ երեք տիեզերական ժողովների մասին:
Քաղկեդոնի ժողովը և նրա յառաջ բերած հետեանքները: Հայ և
Յոյն եկեղեցիների յարաբերութիւնների ընդհատումը: Բարդէն կա-
թողիկոսի ժողովը Դուինում: Մաքառումն Նեստորականութեան դէմ:
2. Հայոց եկեղեցու ազդեցութեան զօրանալը. Գրիգորափոր Ա. և
Ներսէս Բ., Դուինի ժողով և միութիւն ասորիների հետ: 3. Հա-
յոց եկեղեցու դրութիւնը 2. դարու վերջին և 3. սկզբին: Սիւ-
նեաց և Աղուանից շարժումները. Վրաց բաժանումը: Մովսէս
կաթողիկոս և Վրթանէս տեղապահ. Արրահամ կաթողիկոս. Կո-

միտաս կաթողիկոսի գործունէութիւնը: 4. Հերակլ կայսր և Հայ
ու Յոյն եկեղեցիների միութեան փորձեր: Եզր կաթողիկոս և
միակամեայ խնդիր. Կարնոյ ժողով: Ներսէս Գ. Շինող. Դուինի
ժողով: 5. Ներքին կեանք. Գրական շարժում. Եկեղեցիների շի-
նութիւն (ճարտարապետութիւն). Հայոց տոմար: 6. Արարական
արշաւանքներ և հալածանքներ: Սահակ Գ. Ջորափորեցի: Աղանդ-
ներ Հայոց եկեղեցու մէջ Ը. դարու սկզբին. Պատկերամարտներ,
Պօղիկեաններ և Երևութականներ: Յովհան Օձնեցի և նրա գործերը.
Մանազկերտի ժողով:

Գ. շրջան

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐԱՒԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ
ԵՒ ԲԱԿՐԱՏՈՒՆԵԱՅ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Շրջանի բնորոշումը: Բազրատունեաց զօրանալը: Կոս-
տանդնուպոլսի Փոռ պատրիարքը և Ջաքարիա կաթողիկոս: Գէորգ
Բ. Դառնեցի և նրա յաջորդները: Աթոռի փոխադրութիւնը Ար-
գինա և Անի: 2. Անանիա Մոկացի և նրա յաջորդները: 3. Պետ-
րոս Գետադարձ և Սաչիկ Բ: Համառօտ տեսութիւն Թոնդրակեցիների
աղանդի մասին: Վանքեր և վանական դպրոցներ. Եկեղեցական
ժառանգութիւն և շինարարութիւն:

Զ. Դասարան

Դ. շրջան

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՓՈՐՁԵՐ ՅՈՅՆ ԵՒ ԼՍՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ

1. Հայրապետական աթոռի աստանդական վիճակը: Պահլա-
ւանեաց տան կաթողիկոսներ (Գրիգոր Վկայասէր, Գրիգոր Գ.
Պահլաւունի և Աղթամարայ կաթողիկոսութեան սկզբնաւորութիւ-
նը, Ներսէս Շնորհալի, Գրիգոր Դ. Տղայ, Գրիգոր Ե. Քարավէժ և
Գրիգոր Զ. Ապիրատ): Միութեան փորձեր: Ներսէս Լամբրոնացի
և արևելեան Հայոց վարդապետները:

2. Յովհաննէս Մեծաբարոյ և Դաւիթ: Զաքարիա Սպասալար և Վրահայոց խնդիրը:

3. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Լատին եկեղեցու հետ: Կոստանդին Բարձրաբերդցի և Գրիգոր Անաւարդացի: Սսի և Աղանայի ժողովները:

4. Ունիթորութիւն և ռաբառումն նրա դէմ: Յովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի: Արևմտեան և արևելեան վանքերը որպէս գրչութեան արուեստի և գրականութեան կենտրոններ:

Ե. Զըջան

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷԶՄԻԱ-
ԾԻՆ ԵՒ ՎԵՐԱՆՈՐՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

1. Հայրապետական աթոռի նսեմանալը Կիլիկիայում Ռուբինեանների անկամամբ: Թովմաս Մեծոփեցին և Հայրապետական աթոռի փոխադրութիւնը Ս. Էջմիածին: Համառօտ ակնարկ Էջմիածնի խառնակ վիճակի մասին մինչև ժ.է. դարու սկիզբը:

2. Սիւնեաց անապատի հաստատութիւնը և վերանորոգութեան փորձեր: Մովսէս Սիւնեցի, Փրիլպպոս Աղբակեցի և Յակոբ Զուղայեցի:

3. Կաթողիկոսութեան քարոզութեան զօրանալը: Եղիազար, Նահապետ, Աղէքսանդր Ա. և Ղազար Զահկեցի կաթողիկոսներ: Իսրայէլ Օրու գործունէութիւնը և յարաբերութիւնը այս շրջանի կաթողիկոսների հետ:

4. Սիմէօն Երևանցի և Ղուկաս Կարնեցի: Գաղթաւայրեր և նուիրակութիւն:

5. Երուսաղէմի և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքութիւնը. իրաւասութիւնների սահմանները և յարաբերութիւնը Էջմիածնի կաթողիկոսական աթոռի հետ: Կաթողիկոսութեան ծաւալումը Տաճկաստանի հայոց մէջ: Մխիթար Սեբաստացի և նրա միաբանութիւնը: Կաթողիկ Հայ համայնքի ջանքերն ազատուելու Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքի իրաւասութիւնից և նրանց հոգևոր վարչութեան կազմութիւնը: Հասունեանք և հակահասունեանք: Բողոքականութեան սկզբնաւորութիւնը Հայոց մէջ և բողոքական Հայ համայնքի հոգևոր վարչութիւնը:

Զ. Զըջան

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍՍՍՏԱՆԻ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՑ

1. Դաւիթ-Դանիէլեան խռովութիւնները. Յովսէփ Արղու-թեանի դերը: Դաւիթ և Դանիէլ միաժամանակ կաթողիկոս: Ռուսաց կառավարութեան միջամտութիւնը և աղղեցութիւնը Հայոց կաթողիկոսութեան գործերում: Էջմիածնի Սիւնհոգոսի հաստատութիւնը:

2. Եփրեմի կաթողիկոսութիւնը: Ներսէս Աշտարակեցու դերը Էջմիածնի գործերում: Աղուանից կաթողիկոսութեան վախճանը: Եփրեմի հրաժարականը:

3. Յովհաննէս Ը. Կարեցի և Պոլոժնիէի հաստատութիւնը: Ներսէս Ե. Աշտարակեցի:

4. Մատթէոս Ա.: Դպրանոցական գործը սրա ժամանակ: Գէորգ Դ. Մեծագործ և Մակար կաթողիկոսներ:

5. Ընդհանուր ակնարկ հայոց եկեղեցու վիճակի մասին Ի. դարու շէմքին:

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ

Մ Ի Ի Ս Ա Ռ Ը Ր Կ Ա Ն Ե Ր Ի

ԾՐԱԳԻՐ

ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա. Ն Պ Ա Տ Ա Կ

Գրաբար լեզուի և հին գրականութեան ուսման նպատակն է կարդալ և հասկանալ Ս. Դիրքը և մեր հին գրականութեան ոչ խրթին լեզուով գրած կարեոր երկերը, գրաբարի մթերքներով հարստացնել նոր գրական լեզուն և ծանօթանալ Հայ մտքի հին ստեղծագործութեանը:

Բ. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Քերականութիւն, րնթեցանութիւն եւ քառգմանութիւն: Յիշեալ նպատակին հասնելու համար՝ պէտք է Գ. և Դ. դասարաններում կարդալ ու թարգմանել նիւթի և լեզուի կողմից դիւրամատչելի յօդուածներ և անցնել գրաբարի քերականութիւնն ամբողջապէս՝ ուշադրութիւն դարձնելով գլխաւորապէս լեզուական այն ձեւերի վրայ, որոնցով գրաբարը տարբերուած է աշխարհաբարից: Ընթերցումը պէտք է լինի միշտ մտքի համեմատ առողջանելով: Թարգմանութեան ժամանակ աշակերտները պէտք է ըմբռնեն հին լեզուի ոգին, լաւ հասկանան բառերի նշանակութիւնն ու ճշտութեամբ վերածեն մաքուր ու կանոնաւոր գրական լեզուով, պահելով յաճախ բնագրի բառերը՝ վարժուելու համար աշխարհաբարում քիչ պատահող բառերի ճիշդ գործածութեանը:

Ե. և յաջորդ դասարաններում պէտք է հետզհետէ պակասեցնել բերանացի թարգմանութիւնները և կարդալ մատենագրական ընտիր հատուածներ: Աւելի մեծ չափով պէտք է կարդալ դասական պատմագրներից (Կորիւն, Ագաթանգեղոս, Բիւզանդ, Ղազար Փարպեցի, Եղիշէ, Մովսէս Սորենացի), իսկ ոչ դասական հեղինակներից բաւական կլինի կարդալ, նայելով ժամանակին, երեքից վեց բնորոշ և գեղեցիկ հատուածներ՝ չափաւոր ծաւալով: Ընթերցանութեան ընթացքում ուսուցիչը պէտք է միշտ բացատրէ դժուար

բառերը, դարձուածներն ու նոր պատահող քերականական ձևերը, հարկ եղած դէպքում կրկնել տալով և լրացնելով սովորածները: Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել հին և նոր լեզուների քերականական ձևերի ու բառերի իմաստի համեմատութեանը՝ միանգամայն խուսափելով համեմատական լեզուաբանական բացատրութիւններից: Պիտի կարդան աւելի յաճախ աշակերտները, քան ուսուցիչը: Կարդալուց առաջ դասատուն պէտք է տեղեկութիւններ տայ հեղինակի մասին, որից առնուած է երկը, երկի գրութեան ժամանակի, բովանդակութեան, գրական և պատմական արժէքի մասին՝ առանց բանասիրական խնդիրների ու կարծիքների մանրամասնութիւնների մէջ մտնելու. կարդալու միջոցին նա պիտի դիտել տայ ոճական և ձևական առանձնայատկութիւնները: Որոշ թուով ընտիր հատուածներ պէտք է վերլուծել կարդալուց յետոյ: Ծրագրում նշանակուած են հեղինակներից մի քանիսի համար կարդալու հատուածների տեսակներն ու մօտաւոր ծաւալը. դասատուն սակայն ազատ է դրանց տեղ նոյն տեսակի ուրիշ հատուածներ անցնելու, բայց որոշուած հեղինակներից ու երկերից:

2. ՊԵՐԱՆՈՐ. Գ. և Դ. դասարաններում պիտի անել տալ երկու շաբաթը մի անգամ գրաւոր աշխատանք. իսկ Ե. Զ. և Է. դասարաններում երեք շաբաթը մի անգամ: Գ. և Դ. դասարաններում գրաւորներից մէկը պիտի յատկացնել քերականական վարժութիւնների, որ պիտի պատրաստեն տանը. իսկ միւսը պէտք է լինի գրաբարից աշխարհաբար թարգմանութիւն, որ պիտի կատարեն գլխաւորապէս դասարանում: Թարգմանութեան համար պիտի ընտրել կանոնաւոր, գեղեցիկ և հարուստ լեզուով փոքրիկ հատուածներ նախապէս սովորածներից: Սահմանուած գրաւորներից երեքը տարուայ ընթացքում պէտք է լինի ստուգողական: Սրբագրութեան ժամանակ ուսուցիչը պիտի ուշադրութիւն դարձնէ առանձնապէս թարգմանութեան ճշտութեանն ու կանոնաւորութեանը:

3. ԱՆԳԻՐ ԱՆԵՂ. Լեզուին վարժուելու համար մեծ նշանակութիւն ունի նաև անգիր անելը, ուստի պէտք է Գ. և Դ. դասարաններում բերան սովորել և առողջանել տալ արձակ բանաստեղծական փոքր հատուածներ, թուով երեքից հինգ՝ ամեն դասարանում:

Գ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 3 դաս.

1. Ընթերցանութիւն և թարգմանութիւն. Մատթէոսի Աւետարանից (Բ.—ԺԲ. գլուխներ, Լերան քարոզի սկիզբն անգիր): Առակներ Աւետարանից: Մաղմոսներ (թուով մինչև վեց հատ. մէկն անգիր): Մովսէսի օրհնութիւն՝ Օրհնեսցուք զտէր. . . Երից մանկանց օրհնութիւն՝ Օրհնեալ ես Տէր Աստուած. . . Եղիշից հատուածներ (Առաջին և երկրորդ յեղանակից: Աւարայրի ձաւատամարտը: Հայ կանայք. մասամբ անգիր):

2. Քերականութիւն. Կանոնաւոր խոնարհում: Կրաւորականի կազմութիւն: Բաղադրեալ ժամանակներ: Անոնների կանոնաւոր հոլովում: Դերանուններից հոլովել՝ (ես, դու, ինքն, նա, այն, ոք, ոմն, նոյն): Ածականի և գոյականի համաձայնութիւն: Կողմնակի լրացումների և վերագիրների յետագասութիւն: Կարդացած յօդուածների մէջ պատահած նախդիրների նշանակութիւն:

3. Գրաւոր. Ամիսը մի անգամ թարգմանութիւն գրաբարից գլխաւորապէս դասարանում և մի քերականական վարժութիւն տանը պատրաստած:

Դ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 3 դաս.

1. Ընթերցանութիւն և թարգմանութիւն. Հատուածներ Ագաթանգեղոսից (Խոսրով և Անակ. Տրդատի պատերազմները. Լուսաւորչի չարչարանքներից. Հոփսիսիմեանների նահատակութիւնից. Մեհեանների կործանումից): Փաւստոս Բիւզանդ (վիպական գեղեցիկ հատուածներ. ոճական բնորոշ կտորներից մէկն անգիր): Մովսէս Խորենացի (Հայկ և Բէլ): Հայկի նկարագիրն անգիր: Արադեղեցիկ: «Երկնէր երկին» (անգիր): Մի քանի պարզ ու գեղեցիկ շարականներ:

2. Քերականութիւն. Անկանոն խոնարհում և անկանոն հոլովում: Բայերի ժամանակների գործածութիւն: Անորոշ անուն:

ների և դերանունների հոլովում ու գործածութիւն: Յարաբերական դերանուն, յօդերի և հոլովների գործածութիւն: Նախադրութիւններ և շաղկապներ:

3. Գ ր ա լ ո թ . նոյնը, ինչոր նախորդ դասարանում:

Ե. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 3 դ ա ս .

1. Ը ն թ ե ր ց ա ն ու թ իւ ն . I. Ընդհանուր հայեացք հին անգիր բանահիւսութեան վրայ: Կարգալ խորենացուց հին առասպելական և վիպական հատուածներ: Յովհան Մամիկոնեանից Մուշեղի և Գայլ Վահանի մասին: II. Ընդհանուր աղնարկ Հայ գրականութեան սկզբի մասին: Գրերի գիւտ և Աստուածաշնչի թարգմանութիւն. գրական տեսակներ: Կորիւն (Ս. Մեսրոպի կենսագրութիւն և գրերի գիւտն անցնել Կորիւնից կարդալով): Եղնիկ (Հայոց հեթանոսական հաւատալիքներից և Պարսից քէշի Եղծից): Ագաթանգեղոսի և Բիւզանդի մասին (եթէ նախորդ դասարանում պակաս են կարդացել, լրացնել): Ղազար Փարպեցի (Այրարատեան դաշտի նկարագիրը. հատուածներ Պատմութիւնից և Թղթից): Եղիշէ (Վասակի դատաստանը): Մովսէս Խորենացի (Վաղարշակի նամակը և գլուխներ պատմական մասերից. վերջին ողբը): Անանիա Շիրակացի. Սեբէոս. Ղևոնդ երէց (մի քանի հատուած ամեն մէկից): Յովհաննէս կաթողիկոս (կենսագրական և պատմական հատուածներ): Թովմա Արծրունի (Սասունայ և Գագիկ թագաւորի մասին): Մովսէս Կաղանկատուցի (Ողբ ի մահն Զիււանշիրի): Ասողիկ (վանքերի մասին): Գրիգոր Նարեկացի (Որդի Աստուծոյ կենդանւոյ):

2. Ք ե ռ ա կ ա ն ու թ իւ ն : Այս և յաջորդ դասարաններում հարկաւոր դէպքում միշտ պիտի կրկնել և լրացնել սովորածը՝ ընթերցանութեան միջոցին:

3. Գ Ր ա լ ո թ . երեք շաբաթը մի անգամ թարգմանութիւն գրաբարից:

2. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 2 դ ա ս .

1. Ը ն թ ե ր ց ա ն ու թ իւ ն : Արիստակէս Լաստիվերտցի (կարգալ նաև քնարական հատուածներից): Մատթէոս Ուռհայեցի (կարգալ նաև մի քանի ժողովրդական-վիպական գոյն ունեցող պատմութեան): Ներսէս Շնորհալի (հատուածներ Եդեսիոյ ողբից, Ընդհանրականից. խրատներից մէկը, մի երկու տաղ և մի քանի առակներ): Ծանօթութիւն հայերէն տաղաչափութեան մասին: Ներսէս Լամբրոնացի (Ատենաբանութիւնից): Մխիթար Գոշ. (Դատաստանագիրք): Անսիղք Անտիոքայ, (Սմբատ Գունաստաբլ): Կիրակոս Գանձակեցի (Մխիթար Գոշի կենսագրութիւն և կենսագրական հատուածներ): Վարդան Բարձրաբերդցի (Տեսակցութիւն թաթար խանի հետ): Ստեփաննոս Օրբէլեան (կարգալ նաև Ողբից): Թոմա Մեծոփեցի (մի հատուած Լանկթամուրի մասին): Առաքել Սիւնեցի:

2. Ք ե ռ ա կ ա ն ու թ իւ ն և գ Ր ա լ ո թ . նոյնը ինչ որ նախորդ դասարանում:

Ե. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 3 դ ա ս .

1. Ը ն թ ե ր ց ա ն ու թ իւ ն : I. Առաքել Դաւրիթեցի (բռնի գաղթ. Զաւալիներ. էջմիածնի վիճակի մասին. Սիւնեաց անապատ և ուսման վերածնութեան սկիզբ): Զաքարիա Սարկաւազ (մի քանի ազգապրական հատուածներ): Միքայէլ Զամչեան (իրեն ժամանակակից մասերից): II. Առակներ. Վարդան Այգեկցի: III. Միջնադարեան երգիչներ. Կոստանդին Երզնկացի. Մկրտիչ Նաղաշ. Յովհաննէս Թլկուբանցի. Գրիգոր Աղթամաբցի. Բուշակ Նահապետ. Յրիկ և ուրիշներ: IV. Գրաբար գրականութիւն ժթ-րդ դարում: Յովհան Վանանդեցի: Յար. Ալամդարեան. Մ. Թադիսդեան: Մխիթարեանը և թարգմանական ու գիտական գրականութիւն: Արսէն Բագրատունի (մի երկու հատուած Հայկ Դիւցազնից):

14 շաբաթ
10 շաբաթ

2. Քերականութիւն և գրաւոր. նոյնը ինչ որ Ե. դասարանում:

3. Գրականութեան ամփոփում. 1. Ընդհանուր տեսութիւն Հայոց լեզուի մասին. Հնդեւրոպական ծագում. օտար ազդեցութիւններ (պարսկական, ասորական, յունական, արաբական և այլն): Ե-րդ դարու լեզուն իբրև օրինակելի դասական լեզու: Գրաբար չեզուի կերպարանափոխութիւնը յաջորդ դարերում. դպրոցական դրաբար: Միջնադարեան ռամկօրէն գրաբար: 11. Ընդհանուր ակնարկ Հայոց հին գրականութեան վրայ: Ա. Հին առասպելներ և վիպասանութիւն. Բ. Հին գրականութեան ընդհանուր բնաւորութիւնը (օտար ազդեցութիւններ. աղգային եկեղեցական ոգի). գրական տեսակներ: 1. Պատմագրութիւն: Դասական պատմագիրներ և նրանց ընդհանուր յատկանիշներ. խորհնացու և Եղիշէի ազդեցութիւնը յաջորդ դարերում: Ոչ-դասական պատմագիրներ ու ժամանակագիրներ և նրանց ընդհանուր յատկանիշները: Պատմագրութեան անկումը և վերածնութիւն ժե-րդ դարում: 2. Բանաստեղծութիւն. ա. Հոգևոր բանաստեղծութիւն մինչև ժ.Գ-րդ դար (ցանկալի է շարականներից ու Նարեկացուց լրացնել ընթերցանութիւնը): Բ. Բանաստեղծութեան աշխարհիկ բնաւորութիւնը ժ.Գ-րդ դարուց ի վեր: Գ. Նոր գաղափարներ և տեսակներ ժ.Գ-րդ դարում. Կեղծ դասականութիւն: 3. Ուրիշ հին գրական տեսակներ և նրանց բնաւորութիւնը: (Եթէ ժամանակ լինի, ցանկալի է կարդալ մի-մի նմուշ այն հին գրական տեսակներից, որոնցից չեն կարդացում, ինչպէս՝ ճառ, մեկնութիւն և այլն):

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ն Պ Ա Տ Ա Կ

Հայոց աշխարհաբար լեզուի և նոր գրականութեան ուսման նպատակն է կարգալ և հասկանալ գրական նոր լեզուով գրուած կարևոր երկերը. ազատ խօսել և անսխալ գրել կանոնաւոր, հաջադատ և մաքուր գրական Հայերէնով, հմտանալ Հայոց նոր լեզուի գիտութեան և ծանօթանալով Հայոց նոր մտքի ստեղծագործութեանը՝ սիրել Հայ լեզուն և գրականութիւնը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

1. Ընթերցանութիւն եւ խօսել. վերը յիշած նպատակին հասնելու համար աշակերտները պէտք է լաւ առողջանութեամբ կարդան թէ ոտանաւոր և թէ արձակ գրուածներ. մեր ականաւոր հեղինակներից, ինչպէս և այնպիսի բովանդակութեամբ յօդուածներ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, որ առնուած լինեն կամ իրենց սովորած առարկաների շրջանից կամ Հայ և օտար կեանքից ու գրականութիւնից: Աշակերտներին վերացական մտածութեան վարժեցնելու համար պէտք է կարդալ նաև մի քանի փոքրիկ հատուածներ դատողական բովանդակութեամբ: Երկրորդ դասարանից սկսած այս յօդուածների մօտ մի երրորդը պէտք է լինի Թիւրքահայ գրական լեզուով: Բոլոր յօդուածները պէտք է գրուած լինեն մաքուր, կանոնաւոր և հարադատ Հայերէնով և նախապատրաստեն աշակերտներին նոր գրականութեան ուսման: Ամեն անգամ, երբ առիթը ներկայանայ պէտք է գաղափար տալ աշակերտներին գրական տեսակների և ոճաբանական ձևերի մասին: Վերջին երկու դասարաններում (2. և 3.) պէտք է վերլուծուին նոր նշանաւոր հեղինակներից գոնէ մի մի երկ, որոշելով նրանց գլխա-

ւոր և երկրորդական գաղափարները, յօրինուածքը, մասերի յա-
րաբերութիւնը, տիպերը և ոճը: Ծրագրում նշանակուած ընդարձակ
երկերի մի մասը թէ ուսուցիչը և թէ մանաւանդ աշակերտները
պէտք է կարգան դասարանում, իսկ մնացորդը աշակերտները
պէտք է լրացնեն տանը և համար տան դասարանում: Գրական
երկերի վերլուծութեան ժամանակ ուսուցիչը չպէտք է գրականու-
թեան պատմութիւնից պատրաստ բանաձևեր հաղորդէ աշակերտ-
ներին կարգացած երկի մասին, այլ պէտք է աշխատէ յարմար
հարցերով աշակերտներին վարժեցնել ինքնուրոյն մտածողութեան
և անհրաժեշտ դէպքում միայն, ամփոփելիս՝ լրացնէ վերլուծու-
թեան պակասը: Խիստ օգտակար է որևէ գրական երկ համե-
մատել իւր աղբիւրների և նոյն նիւթն ունեցող ուրիշ երկերի հետ:
Աշակերտները պէտք է իրենց մտքերն արտայայտեն կապակցօրէն
և կանոնաւոր ու մաքուր Հայերէնով: Այստեղ ուսուցիչն ինքը
պէտք է օրինակ հանդիսանայ՝ ուշադիր վերաբերուելով թէ դէպի
աշակերտների և թէ դէպի իւր իսկ արտայայտութիւնները: Նկա-
տելով, որ մայրենի լեզուի զարգացման մեծագլխաւ նպաստում է
նաև միւս առարկաների ուսումը՝ Հայերէն աւանդուող առարկա-
ների բոլոր ուսուցիչները պէտք է ուշադրութիւն դարձնեն աշա-
կերտների լեզուի կանոնաւորութեան և մաքրութեան վրայ: Օտար
լեզուների դասատուներն ևս, իրը մի բնագիւր թարգմանում են
Հայերէն, պէտք է հսկին աշակերտների լեզուի կանոնաւորութեան
և մաքրութեան վրայ: Լեզուի ուսման համար շատ օգտակար է
անդիր անել ընտիր լեզուով և ոճով գրուած ոտանաւոր և արձակ
հատուածներ, ուստի աշակերտները պէտք է որոշ քանակութեամբ
հատուածներ բերանացի սովորեն: Ծրագրի մէջ ընթերցանութեան
նիւթերը յիշատակուած են տեսակներով, ուսուցիչները պէտք է
այս կամ այն տեսակից խառն դասաւանդեն, ձանձրոյթ պատճա-
ռելուց խուսափելու համար:

2. Քերականութիւն. Մայրենի լեզուի քերականութիւնն ա-
շակերտի համար մի չափանիշ պէտք է լինի թէ իւր և թէ ուրիշ-
ների արտայայտութեան կանոնաւորութիւնը և ճշտութիւնը գի-
տակցաբար որոշելու համար և մի միջոց՝ խուսափելու սխալներից
և բարբառական ձևերից: Քերականութեան ուսումը Ա. և Բ. դա-
սարաններում պէտք է կապուած լինի ընթերցանութեան գրու-
թեան և խօսելու հետ և պէտք է աստիճանաբար ընդարձակուի՝
միշտ հինը կրկնելով և նորը կցելով: Գ. դասարանում մայրենի
լեզուի կազմութիւնը գիտակցօրէն ըմբռնելու համար՝ քերակա-

նութեան ուսումը պէտք է ամբողջանայ և համակարգի բերուի,
յունուարից սկսած որոշ օրեր դասերի կէսը այդ նպատակին յատ-
կացնելով: Մինչև Դ. դասարան քերականական ուսումը պէտք է
իւրացնել տալ ստուգաբանական և խօսքի կազմութեան բերանացի
վարժութիւններով: Յաջորդ դասարաններում պէտք է ընդարձա-
կել և ամբողջացնել աշակերտների շարահիւսական ծանօթութիւն-
ները՝ ընթերցանութեան և գրաւոր աշխատանքներին զուգընթաց:
Յատկապէս պէտք է ջանալ, որ աշակերտները խուսափեն օտա-
բարանութիւններից և վարժուեն մայրենի լեզուի արտայայտու-
թեան հարստութիւններին:

3. Գրաւոր աշխատանքներ. Գրաւոր աշխատանքների նիւթերը
պէտք է առնուեն գլխաւորապէս Հայերէնի դասերից, բայց այդ
նպատակով կարելի է օգտագործել նաև գրաւարի, օտար լեզու-
ների, պատմութեան, գրականութեան և աշխարհագրութեան ու-
սումը: Վերին երկու դասարաններում աշակերտները կարող են
գրել և ընդհանուր բովանդակութեամբ շարադրութիւններ, բայց
այնպիսի նիւթերի մասին, որ կապուած լինին դպրոցական ուս-
ման հետ և համապատասխանեն աշակերտների զարգացման աս-
տիճանին: Բոլոր դասարաններում շարադրութիւնները պէտք է
գրուեն պարզ խօսքերով և աշակերտները պէտք է խուսափեն
անկանոն և երկար պարբերութիւններից: Աշակերտները չպէտք է
գործ ածեն այնպիսի օտար բառեր, որոնց համարժեքները կան
մայրենի լեզուով: Պէտք է ամեն կերպ ջանալ, որ աշակերտների
շարադրութիւնները չունենան ընդարձակ ծաւալ, չպահանջեն մտքի
լարում և չձանրաբեռնեն նրանց: Սկսած ստորին դասարաննե-
րից գրաւոր աշխատանքները պէտք է տարուեն այն կարգով, որ
աշակերտներն աստիճանաբար վարժուեն ինքնուրոյն մտածողու-
թեան, գլխաւոր և երկրորդական գաղափարները որոշելուն և ի-
րանց մտքերը պատշաճօրէն ու կարգով շարկապելուն: Առաջին
դասարանից սկսած աշակերտները պէտք է վարժուեն իրենց
կարգացած յղուածները բերանացի և գրաւոր վերապատմելուն և
իրենց կեանքից կարևոր դէպքեր գրի առնելուն, երբեմն նամակ-
ների ձևով: Բոլոր շարադրութիւնները պէտք է ունենան նախադէր,
որ պէտք է մշակուին դասարանում: Աշակերտները սակայն պիտի
ազատ լինին նիւթի դասաւորութիւնը փոփոխելու գրութեան
ժամանակ, բայց միշտ պէտք է հետևեն ընդունած նախադէրին: Այս
աշխատանքներին վարժեցնելու համար պէտք է կարգացած յօդուած-
ների նախադէրը կազմել դասարանում բերանացի և երբեմն

գրաւոր՝ տանը: Աշակերտներն երբեմն իրենք ևս պէտք է կազմեն շարադրութեան նախագծեր և նրանց համեմատ գրեն: Մինչև Գ. դասարանը աշակերտները պէտք է շաբաթական մի գրաւոր աշխատանք կատարեն. յաջորդ դասարաններում երեք շաբաթը մի աշխատանք (կարդացած յօդուածների գրաւոր նախագծերը հաշուելի չեն առնուում): Ուղղագրութեան ուսումը պէտք է կապի քերականութեան հետ և վերջանայ Գ. դասարանում. բայց եթէ աշակերտների ուղղագրութիւնն անբաւարար նկատուի՝ վարժութիւնները կարելի է շարունակել և յաջորդ դասարաններում: Ուղղագրական գրաւորները պէտք է լինին նախապատրաստութեամբ և յարմարացուին դասարանի ուղղագրական թերութիւններին: Շարադրութիւնները սրբագրելիս ուսուցիչը պէտք է ուշադրութիւն դարձնի նախագծի ամբողջական գործադրութեան, մասերի կապակցութեան, խօսքերի կանոնաւորութեան, լեզուի բազմազանութեան և ուղղագրութեան վրայ:

Ա. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 7 դաս.

1. Ընթերցանութիւն. Կարդալ արձակ և ոտանաւոր յօդուածներ նոյն դասարանում աւանդուող առարկաների շրջանից (հէքլիաթներ, առակներ, թեթև պատմութիւններ, զրոյցներ, յօդուածներ՝ հայրենական պատմութիւնից, բնագիտութիւնից և աշխարհագրութիւնից):

2. Քերականութիւն. ա) բառակազմութիւն.—պարզ, բարդ և ածանցական բառեր, դադափար արմատի մասին: Ձայնաւորների փոփոխութիւնը. շատ գործածական ածանցներ: Ուղղագրութիւն՝ նկատի ունենալով ձայնաւորների փոփոխութիւնը բառակազմութեան ժամանակ: Բարդ և ածանցական բառերի ուղղագրութիւն:

բ) Բառերի տեսակները.—գոյական, յատուկ և հասարակ առնունք և նրանց ուղղագրութիւնը: Անուան թիւը, յօդերը: Կանոնաւոր և անկանոն հոլովում: Դերանուն. նրանց տեսակները. թիւը, հոլովումը, ուղղագրութիւնը: Ածական. նրանց տեսակները: Թուական: Ածական առնունքների գոյականաբար գործածութիւնը: Մակբայ. նրա տեսակները: Յատկութեան աստիճաններ: Բայ.

դէմք, թիւ, ժամանակ, եղանակ, դերբայներ, բայերի կանոնաւոր խոնարհումը գրական և բացասական ձևով: Նախադրութիւն ու յետադրութիւն, շղկապ և ձայնարկութիւն:

գ) Շարահիւսութիւն. պարզ, համառօտ և ընդարձակ խօսք կամ նախադասութիւն: Ընդարձակ նախադասութեան անդամները. ենթակայ, ստորոգեալ, խնդիր, պարագայ, և վերադիր (որոշող): Պարագաների տեսակները՝ տեղի, ժամանակի, ձևի, պատճառի և նպատակի: Կոզմակի լրացումներ: Գոյականի, ածականի և մակբայի պաշտօնը նախադասութեան մէջ: Բացայայտիչ: Դրական և բացասական, հաստատական և հարցական, ուղղակի, անուղղակի և միջանկեալ նախադասութիւններ: Միջանկեալ բառեր: Վարժութիւններ կոչական, սեռական և հայցական հոլովների համար: Բայի խնդիրների տեսակները: Բայերի սեռը: Ենթակայի և բայի համաձայնութիւնը: դ) Կետագրութիւն. վերջակէտ, միջակէտ և ստորակէտ և նրանց գործածութիւնը: Հարցական, բացականչական նշաններ. Հակերտ և փակագիծ:

3. Գործնական վարժութիւններ: Քերականական վարժութիւններ. բերանացի կազմել պարզ խօսքերի օրինակներ: Բացատրական ընթերցանութիւն կարդացածի բովանդակութիւնը խրաջնելու համար: Կազմել կարդացած յօդուածների նախագծերը բերանացի, չորբեմն՝ գրաւոր: Կարդացածի համառօտ և ընդարձակ վերապատում: Անդիր անել առնուազն եօթ ոտանաւոր և երկու արձակ ընտիր հատուած և արտասանել առգգանութեամբ:

4. Դրաւոր շաբաթական մի անգամ: Ուղղագրական արտագրութիւն: Նախապատրաստութեամբ թելադրութիւն: Ստուգողական թելադրութիւն (տարեկան 4 անգամ): Անդիր տրամը զրիւ յիշողութեամբ: Յօրինել փոքրիկ պատմութիւններ՝ ըստ տուած նախագծի: Կարդացածի վերապատումներ:

Բ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 6 դաս.

1. Ընթերցանութիւն. Նախորդ դասարանի ձևով:

2. Քերականութիւն. ա) ընդարձակել ածանցական մասնիկների մասին ծանօթութիւնները: բ) Ստուգաբանութիւն.

անկանոն բայերի խոնարհումը: Բայերի երկրորդական բաղադրեալ ժամանակները (գնալիս լինել, գնացած լինել և այլն): գ) Շարահիւսութիւն. պարզ նախադասութեան շարահիւսութիւն: Բառերի ստորադասութիւնը: Բառերի կապակցութիւնը նախադասութեան մէջ: Համաձայնութիւն: Հոլովների նշանակութիւնն ու գործածութիւնը: Նախադասութիւնների ստորադասութիւն: Գլխաւոր և երկրորդական նախադասութիւններ: Երկրորդական նախադասութիւնների տեսակները. ենթակայ, խնդիր, պարագայական (տեղի, ժամանակի, ձևի, հետեանքի, պատճառի, նպատակի, պայմանական և զիջական) և վերադիր (որոշող) նախադասութիւններ: Երրորդական և գլխաւոր նախադասութիւնների կապակցութիւնն իրար հետ: Նախադասութիւնների համադասութիւն: Միաւորեալ նախադասութիւններ (խօսքի բաղմակի մասեր): Համադաս նախադասութիւններ: Բաղահիւսական և ներհակական կապակցութիւններ և իրենց տեսակները: դ) Կէտադրութեան մասին ամբողջական ծանօթութիւն:

3. Գործնական վարժութիւններ. Բերականաւոր վերլուծութիւն. բերանացի կազմել բարդ խօսքերի օրինակներ: Բացատրական ընթերցանութիւն՝ կարդացածի յօրինումքը և գլխաւոր գաղափարը ցոյց տալու համար: Ընդարձակ և համառօտ վերապատում կարդացած յօդուածների: Անգիր անել առնուազն հինգ ոտանաւոր և մէկ ընտիր հատուած և առդանութեամբ արտասանել:

4. Գրաւոր. նախորդ դասարանի նման (բացի արտագրութիւնը), յատուկ ուշադրութիւն դարձնելով կէտադրութեան վրայ:

Գ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 5 դաս.

1. Ընթերցանութիւն. Նկարագրական և ուղեգրական թեթև յօդուածներ: Փոքրիկ կենցաղական պատկերներ: Պատմական հատուածներ: Փոքրիկ քերթուածներ: Բալլադներ: Ժողովրդականին մօտիկ բանաստեղծութիւններ: Դատողական թեթև յօդուածներ: (Բոլորը ինքնուրոյն և թարգմանական):

2. Քերականութիւն. Ստուգաբանութեան և շարահիւսութեան սխտեմատիք կրկնութիւն՝ կէտադրութեան բոլոր կանոններով, ընդարձակելով և լրացնելով: Անենթակայ խօսքեր:

Ընդարձակում հոլովների գործածութեան: Սովորական և շրջանաւարտութիւն: Բայի եղանակների և ժամանակների գործածութիւն: Բարդ նախադասութիւնների վերածումը պարզ նախադասութեան. (երկրորդական խօսքերի կրճատում), Բաղմարարդ նախադասութիւնների և պարբերութիւնների մասին ծանօթութիւն՝ ընթերցանութեան միջոցով:

3. Գործնական վարժութիւններ նախորդ դասարանների ձևով՝ աւելի բարդ բովանդակութիւն ունեցող յօդուածների և ոտանաւորների վրայ:

4. Գրաւոր շաբաթը մի անգամ, չորս գրաւորից մէկը տանը: Նոյն վարժութիւնները ինչ որ նախորդ դասարանում (բացի արտագրութիւնից): Փոքրիկ նկարագրեր ուսուցչի տուած նախագծով: Նամակաձև շարագրութիւն:

Գ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 3 դաս.

1. Ընթերցանութիւն. հայ ժողովրդական վէպից և զրոյցներից: Հատուածներ հայոց, ընդհանուր և քաղաքակրթական պատմութիւնից և բնագիտութիւնից. վիպական գրուածներ, առակներ, պատմական քերթուածներ, բալլադներ, ինքնուրոյն և թարգմանական: Տեղեկութիւններ հեղինակների կեանքից և ծանօթութիւն բանաստեղծական տեսակների և ձևերի մասին, որքան աչտք է գրուածքը հասկանալու համար: Ծանօթութիւն պատկերաւոր և արձակ ոճի և ոճական ձևերի մասին՝ յօդուածները կարդալու ընթացքում:

2. Քերականութիւն. այս և յաջորդ դասարաններում կարդացած յօդուածների հիման վրայ ընդարձակել շարահիւսութեան և պարբերոյթների մասին ունեցած ծանօթութիւնները:

3. Գրաւոր. երեք շաբաթը մի անգամ (տարեկան 10 հատ) դասարանում և տանը՝ նախագծերը մշակելով թէ ինքնուրոյն և թէ դասատուի առաջնորդութեամբ: Կարդացած յօդուածների ազատ վերապատում, ամփոփելով և ընդարձակելով: Շարագրութիւն տուած թեմաներով՝ բնութագիր անձերի, պատմուածքներ, նկարագրութիւններ, դատողական գրուածներ:

Ե. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 4 դ ա ս .

1. Ը ն թ ե ռ ց ա ն ու թ իւն . Ժողովրդական և ոչ ժողովրդական քնարական բանաստեղծութիւններ, Տեսարաններ թատերական երկերից (ողբերգական, կատակերգական, դրամայական)՝ մնացածը լրացնելով տանը : Հատուածներ ճարտասանական, հրապարակաբանական, քննադական, դատողական և դրական-ուսումնասիրական երկերից՝ հայ և օտար հեղինակներից առնուած : Ծանօթութիւն կարգացած գրական տեսակների և նրանց յօրինուածքի մասին՝ դասի ընթացքում, որքան հարկաւոր է գրուածքը հասկանալու համար :

2. Գ Ր Ա Ն Ո Ր երեք շաբաթը մի անգամ (10 հատ)՝ դասարանում և տանը, նոյն ձևով մշակած նախագծերով : Կարգացած յօդուածների ազատ վերապատում, ամփոփելով և ընդարձակելով : Շարադրութիւն տուած թեմաներով՝ բնութագիր անձերի, պատմուածքներ, դատողական գրուածքներ :

Զ. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 3 դ ա ս .

1. Ը ն թ ե ռ ց ա ն ու թ իւն . Աշխարհաբարի հետքերը հին գրականութեան մէջ : Բարբառներ : Ժողովրդական բանահիւսութիւն (կարգալ Սայաթ Նովայից, Դաւիթ և Մհերից, տարբեր տեսակի ժողովրդական երգեր և մի քանի ոտանաւոր ժ. Դարի առաջին կիսի աշուղներից) : Արեւմտեան և արեւելեան գրական լեզուների առաջանալը (կարգալ սկզբնական շրջանի աշխարհաբարի նմուշներ) : Մ. Թադիսեանի աշխարհաբար գրուածքները : Հ. Ղ. Ալիշան. Նահապետի երգերը : Խ. Արծիւան (Վէրք Հայաստանի) : Մ. Պէշիկ-թաշլեան : Պ. Պոստեան (Հացի խնդիր) : Ռ. Պատկանեան (բոլոր տեսակի ոտանաւորներից) : Մ. Նալբանդեան (ոտանաւոր, հրապարակախօսական և քննադատական երկերից) : Ղ. Աղայեան (երկու ջոյր) : Ս. Շահադիզ (Լեոնի վշտից ոտանաւորներ) : Մ. կաթ. Խրի-

մեան (Հրաւիրականից, Սիրաք և Սամուէլ) : Գ. Կալ Սրուանձաեան (ուղեգրական երկերից) : Շիլլէր. (Վիլհելմ Տելլ) : Ամեն մի բանաստեղծից դասարանում պէտք է կարդալ մի քանի ոտանաւոր և վերլուծել առնուազն երկուսը : Վէպերից և քերթուածներից դասարանում պէտք է կարդալ հատուածներ՝ մնացածը ամբողջացնել տանը և համար տալ դասարանում : Բացի ոտանաւորներից դասարանում ամբողջովին պէտք է վերլուծել երկու վէպ և մի թատերական գրուածք :

2. Գ Ր Ա Ն Ո Ր . Երեք շաբաթը մի անգամ (տարեկան 10), ինքնուրոյն և դասատուի օգնութեամբ մշակած նախագծով : Կարգացած գրուածքների ամփոփ, բացատրական վերապատում : Բնութագրութիւն տիպերի՝ անձատ և համեմատելով նման տիպերի հետ : Դատողական գրուածքներ : Վերլուծութիւն ոտանաւորի յօրինուածքի և գողափարների : Շարադրութիւնների ընդհանուր թեմաներով կեանքից և դրականութիւնից :

Ե. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 3 դ ա ս .

1. Ը ն թ ե ռ ց ա ն ու թ իւն . Յով. Յովհաննիսեան. Յով. Թուճանեան (Անուշ) : Աւ. Իսահակեան : Բաքի (Խենթ) : Մուրացան (Նոյի ազգաւր) : Նար-Դոս (Աննա Սարոյեան) : Շիրվանզադէ (Քառս) : Ա. Ահարոնեան (Մի պատկեր) : Գ. Սունդուկեան (Պէպօ) : Պ. Դուրեան : Շանթ (Երազ օրեր) : Ծերենց (Երկունք Թ. դարու) : Տիւսար (Մայտա) : Յ. Պարոնեան (Մեծապատիւ Մուրացիաններ. Ազգային Զոյեր) : Գ. Զոհրապ (Մի պատկեր) : Մի քանի ոտանաւորներ ուսուսայ և թիւրքահայ նոր բանաստեղծներից : Գ. Մօպսսան (Մի պատկեր) : Շէքսպիր (Լիր թագաւոր) :

Ամեն մի բանաստեղծից կարգալ մի քանի ոտանաւոր և դասարանում վերլուծել երկուսը : Վէպերը, քերթուածները և թատերական երկերը մասամբ կարդալ դասարանում, մասամբ լրացնել տանը և համար տալ դասարանում : Տարուայ ընթացքում դասարանում ամբողջովին վերլուծել երկու վիպական և երկու թատերական գրուածք :

2. Ը ն դ հ ա ն ու Ր հայեացք հայոց նոր գրականութեան վրայ,

նկատի առնելով հայ մտքի և գրական արուեստի զարգացման գլխաւոր շրջանները ժ.թ. դարում՝ եւրոպական ու ռուս մտքի և գրականութեան, ինչպէս և քաղաքական ու ընկերական պայմաններին ազդեցութեան տակ: Գրական նոր տեսակների առաջանալը Հայոց մէջ, նրանց զարգացումը, ազգայնացումը և հայրենացումը:

3. Գրաւոր երեք շաբաթը մի անգամ, (տարեկան 10): Հեղինակների բնութագրութիւն կարգացած երկերի հիման վրայ: Տիպերի վերլուծութիւն: Պատկերների ամբողջական վերլուծութիւն: Բարքերի բնութագրութիւն: Տիպերի համեմատական վերլուծութիւն: Զեկուցումներ:

ԾՐԱԳԻՐ

ՌՈՒՍ ԱՅ Լ Ե ԶՈՒՐ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Թեմական եօթնամեայ դպրոցը աւարտելիս՝ աշակերտը 1. պիտի ազատ կարգայ ռուսերէն և ազատ հասկանայ կարգացած ամեն մի գիրք: 2. պիտի տիրապետի խօսակցական լեզուին, կարողանայ ազատ և կանոնաւոր արտայայտել իր մտքերը, թէ՛ բանաւոր և թէ՛ գրաւոր: 3. կարգացած լինի ռուս գրականութեան ժ.թ. դարու նոր և նորագոյն շրջանների ամենաընտիր երկերը և ծանօթ լինի ռուս գրականութեան զարգացմանը:

Այս պահանջների համաձայն ռուսաց լեզուի դասաւարտելու հետեւալն է՝ I—III դասարաններում աւանդում է լեզուն, IV—VII լեզուն և գրականութիւնը:

Լ Ե ԶՈՒՐ ԴԱՍԱԴԱՆ ԴՈՒՄԸ

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ մեր աշակերտութիւնը ոչ մի միջոց չունի իւրացնելու խօսակցական լեզուն դպրոցից դուրս, դպրոցի գլխաւոր պարտականութիւններից մէկն է՝ սովորեցնել աշակերտներին խօսել ռուսերէն:

Այս արդիւնքին հասնելու համար անհրաժեշտ է հետեւալ սկզբունքներին հետեւել.

I. Լեզուի դասատուութեան ժամանակ 1—7 դասարաններում պիտի տիրապետի գործնական-խօսակցական եղանակը: Մանաւանդ առաջին երեք տարուայ ընթացքում, բացի վարժ կարգալուց և կարգացած իւրացնելուց, աշակերտը պիտի հարստացնէ բառերի և ոճերի պաշարը: Դասագրքի յօդուածները և առանձին պատմութեան անցնելիս, ուսուցիչը պիտի ընտրի այնպիսիներն, որոնք նիւթի և լեզուի տեսակէտից մօտ են առօրեայ կեանքին և լեզուին: Այդ տեսակ յօդուածներն ու պատմութեանը, բացի բառերի և դարձուածքների պաշարը հարստացնելուց, պիտի նիւթ

մատակարարեն ազատ զրոյցներին աշակերտներին հետ:

Առ հասարակ մեծ և լայն ծաւալ պէտք է տալ ազատ զրոյցներին կարգացածի մասին, աշխատելով, որ աշակերտները պատմեն կարգացածը ոչ միայն հեղինակի այլ և իրանց սեպհական խօսքերով, սովորեն արտայայտել իրանց մտքերը և տպաւորութիւնները գրուածքի մասին: Մեծ տեղ պէտք է յատկացնել նաև ազատ զրուցատրական դասերին և բանաւոր շարագրութիւններին, պահանջելով, որ աշակերտը սեպհական խօսքերով կարողանայ կարճ, բայց ամփոփ պատմել առօրեայ երևոյթների, շրջապատի մասին իւր լսածը և տեսածը:

Զրուցատրական դասերին ուսուցիչն ամբողջ ժամը նուիրում է ազատ խօսակցութեան, աշխատելով կենդանի խօսակցութիւն ստեղծել տրամախօսութեան (դիալոգի) ձևով իւր և աշակերտի կամ մի քանի աշակերտների մէջ: Դրան պիտի նպաստէ ծրագրի մէջ մտցրած տնային պարտադիր ընթերցանութիւնը: Աշակերտներին տրուում են տանը կարգալու համար գեղարուեստական գրուածներ, որ նա ինքնուրոյն կարգայ և վերլուծէ և ապա հաշիւ տայ դասի ժամանակ ուսուցչին կարգացած գրքի մասին: Կարգացածի բովանդակութիւնը պատմելը կամ նրա գաղափարը վերլուծելը կարող է նոյնպէս հարուստ և յարմար նիւթ մատակարարել վերոյիշեալ դասարանական զրոյցների համար:

II. Յանկալի է, որ աշակերտները դպրոցում, դասերից գուրոյ միջոց ունենան վարժուելու խօսակցութեան լեզուի մէջ:

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ստուգարանութեան և շարահիւսութեան դասաւանդութիւնը պիտի նպաստէ գլխաւորապէս խօսակցութեան և գրութեան. ուստի դասաւանդութիւնը պիտի լինի ոչ տեսական, այլ գործնական: Օրինակ՝ հոլովում և խոնարհումը աւանդուում է նախադասութիւններով և կենդանի օրինակներով: Անհրաժեշտ է, որ հէնց առաջին դասարանում անցնեն քերականութեան ամենաէական մասերը և հետզհետէ լրացուեն: Աշակերտները պէտք է ընտելանան և իւրացնեն ուսուցչի լեզուի առանձնայատկութիւնները: Օրինակ նախդիրների և նախադաս մասնիկների գործողութիւնները մտքի փոփոխութեան համեմատ, բայերի կերպերի (вѣдѣ) գործածութիւնը, գոյականների, ածականների և բայերի գործա-

ծութիւնը և այլն: Այս վերջին վարժութիւնները անպայման պիտի տեղի ունենան սկսած I մինչև VII դասարանը, թէպէտ վերջին դասարաններում քերականութեան դասեր կան յատկացուում:

Գ Ր Ա Ի Ո Ր

Դրաւոր աշխատութիւնները միևնոյն նպատակն ունին, ինչ որ բանաւորը և ընթանում են զուգընթացաբար: Հարկաւոր է սովորեցնել աշակերտներին ինքնուրոյն շարագրութիւններ գրել, հէնց երկրորդ դասարանից փոքրիկ շարագրութիւններ պիտի որոշ տեղ բռնեն գրաւոր վարժութիւնների մէջ և հետզհետէ բարդանալով, IV դասարանից սկսած միանգամայն փոխարինեն թելադրութեանը:

Դրաւոր աշխատանքները պիտի տարուեն այն ուղղութեամբ, որ աշակերտները սկզբից իսկ գրեն անսխալ, ուստի անհրաժեշտ է ընտրել համապատասխան յօդուածներ: Անհրաժեշտ է նոյնպէս տալ աշակերտներին ամեն մի յարմարութիւն անսխալ գրել (բառարաններից օգտուելը, ուսուցչին հարցնելը, և այլն):

Եւամեայ դասընթացքն աւարտող աշակերտը պիտի կարողանայ արտայայտել իւր մտքերը բաւականին ազատ, կանոնաւոր, ուսերէնով, առանց խոշոր սխալների և այնքան տիրապետի լեզուին, որ IV դասարանում կարելի լինի անցնել Ռուսաց գրականութեան գլխաւոր երկերը և նրանց բովանդակութիւնը վերլուծելը:

Ռ Ո Ւ Ս Ա Յ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Դրականութեան դասընթացքը սկսուում է IV դասարանում և վերջանում է VII-ում: Այս ժամանակամիջոցում կարգացուում են և վերլուծուում (թէ դասարանում և թէ տանը) ԺԹ. դարի ուս գրականութեան ամենաընտիր գեղարուեստական գրուածները նոր և նորագոյն շրջաններից: Այդ գրուածները պիտի նիւթ մատակարարեն VI և VII դասարաններում անցնելիք գրականութեան զարգացման ամփոփմանը:

Ամեն մի դասարանի դասընթացքը բաղկացած է երկու մասից՝ Ա. Գեղարուեստական երկերի ընթերցումից և վերլուծումից դասարանում: Բ. Տնային պարտադիր ընթերցանութիւնից:

Ա. Այս բաժնում նշանակուած են ուսուցչի դասական

հեղինակների, Գրիբոեդովի, Պուշկինի, Լերմոնտովի և Գոգոլի գլխավոր գրողները, որոնք անպայման կարգացուում են և վերլուծուում դասի ժամանակ:

Ներկերը դասաւորուած են ծրագրի մէջ դասարանից դասարան ըստ մտքի, բովանդակութեան և լեզուի դժուարութեան: Ուստի ուսուցիչն անպայման պիտի անցնէ նշանակուած գրողներն այն կարգով, ինչպէս յիշատակուած է ծրագրի մէջ: Նթէ գրուածքը շատ մեծ է, կարելի է կրճատումներ անել, միևնույն ժամանակ աչքի առաջ ունենալով, որ աշակերտն անպայման ծանօթ լինի ամբողջ գրուածքի բովանդակութեանը:

Մանօր. V և VI դասարանների ծրագրում գետեղուած են ի միջի այլոց և այն գեղարուեստական գրուածներն, որոնց նիւթը վերցրած է ուսաց պատմութիւնից: Այդ գրուածները կարգացուում են ուսաց պատմութեան համապատասխան մասերն անցնելուց յետոյ:

Բ. Տնային պարտադիր ընթերցանութիւնը նպատակ ունի զարգացնել աշակերտների մէջ սէր դէպի ընթերցանութիւն, ինքնուրոյն վերաբերմունք և ինքնուրոյն վերլուծութիւն գրուածների՝ առանց ուսուցչի օգնութեան և ցուցմունքների: Ծրագրի մէջ յանձնարարուում են ամէն մի դասարանի համար համապատասխան գրքեր ուսաց գրականութիւնից Գոգոլից յետոյ. ընտրութիւնը թողնուում է ուսուցչի կամքին:

Ըստ ծրագրի տնային պարտադիր ընթերցանութիւնն սկսուում է II դասարանից, իսկ գրքերի ցուցակը բերուած է III-ից: II դասարանում գրքերի ընտրութիւնը վերապահուում է ուսուցչին: Ինչ վերաբերում է I դասարանին, այստեղ ուսուցիչն ինքն է կարգում դասի ժամանակ, թէ դասերից դուրս՝ աշակերտներին: Մինչև IV դասարանը կարգացած գրքերի արագութիւնը կատարուում է դասերի ժամանակ ամիսը 2—3 անգամ, իսկ բարձր՝ 1—2 անգամ. այդ կախուած է գրքի ծաւալից և բովանդակութեան բարդութիւնից:

Գրականութիւնը VI և VII դասարաններում աւանդելու նպատակն է՝ ծանօթացնել աշակերտներին ուսաց գրականութեան զարգացմանը նրա սկզբնաւորութիւնից մինչև 10-ական թուականները, կապելով մտաւոր, հասարակական և գրական հոսանքների հետ:

Մինչև ԺԹ. դարը գրականութիւնն աւանդուում է համառօտ: Տրուում են գլխաւորապէս ընդհանուր տեսութիւններ, միայն հարկ

եղած դէպքում ուսուցիչը կարգում է դասարանում առանձին հատուածներ երկերից՝ գրականական ուղղութիւնները և հեղինակին բնորոշելու համար: Աշակերտները ծանօթանում են սանտիմենտալ, քամանտիկ և բէալ ուղղութիւններին: ԺԹ. դարու գրականութիւնը մինչև Գոգոլն անցնում է բաւականին լրիւ: Աշակերտներն ուսումնասիրում են դասական հեղինակների՝ Գրիբոեդովի, Պուշկինի, Լերմոնտովի և Գոգոլի գրական գործունէութիւնն այդ ժամանակուայ մտաւոր, հասարակական և գրական ուղղութիւնների հետ միասին:

ПРОГРАММА ПО РУССКОМУ ЯЗЫКУ

ПЕРВЫЙ КЛАССЪ [7 Уроковъ]

ПРАКТИЧЕСКІЯ УПРАЖНЕНІЯ.

1. Объяснительное чтение связныхъ статей по хрестоматіи или небольшихъ разсказовъ. 2. Устный пересказъ прочитаннаго съ соблюденіемъ формы подлинника или съ измѣненіями ея. 3. Курсорное чтение статей учениками въ классѣ и изложеніе прочитаннаго. 4. Чтение статей самимъ учителемъ и изложеніе прочитаннаго учениками. 5. Устный пересказъ по картинамъ. 6. Заучиваніе наизусть стихотвореній съ упражненіемъ въ выразительномъ чтеніи. 7. Бесѣды и устные сочиненія на темы изъ окружающей жизни; разсказы о видѣнномъ и слышанномъ.

ПО ПИСЬМЕННОМУ. (4 работы въ мѣсяцѣ)

1. Списываніе съ пройденнаго текста. 2. Писаніе наизусть заученныхъ стихотвореній. 3. Диктовка объяснительная и провѣрочная. 4. Диктовка пройденныхъ статей. 5. Письменное изложеніе содержанія небольшихъ легкихъ статей, разработанныхъ въ классѣ, по вопросамъ и безъ

вопросовъ. 6. Краткія самостоятельныя сочиненія, составленіе писемъ; описанія комнаты, класса, двора и т. д. съ помощью учителя. 7. Послѣдовательное прохожденіе правилъ правописанія. 8. Практическое ознакомленіе со знаками препинанія.

ПО ГРАММАТИКѢ

1. Правильное склоненіе именъ существительныхъ; орфографія окончаній. 2. Склоненіе именъ прилагательныхъ на *ый, ая, ое, ій, яя, ея*; склоненіе наиболее употребительныхъ мѣстоименій. 3. Глаголь, дѣленіе на два спряженія; спряженіе наиболее употребительныхъ глаголовъ, правильныхъ и неправильныхъ, въ оборотахъ рѣчи: *Утвердительномъ, вопросительномъ и вопросительно-отрицательномъ*; орфографія окончанія глаголовъ. 4. Наиболее употребительные предлоги и союзы.

ПРАКТИЧЕСКІЯ УПРАЖНЕНІЯ ПО ГРАММАТИКѢ

Устные и письменныя.

1. Склоненіе именъ существительныхъ, прилагательныхъ и мѣстоименій въ предложеніяхъ и съ наиболее употребительными предлогами. 2. Спряженіе глаголовъ въ предложеніяхъ въ вышеуказанныхъ оборотахъ рѣчи. 3. Упражненія въ управленіи словъ.

II. КЛАССЪ [6 Уроковъ]

ПРАКТИЧЕСКІЯ УПРАЖНЕНІЯ.

1. Объяснительное чтеніе статей изъ хрестоматіи болѣе сложныхъ, чѣмъ въ I классѣ, съ дѣленіемъ на части и разработкой плана; чтеніе цѣльныхъ произведеній, нетрудныхъ по слогу и языку. 2. Устное изложеніе прочитаннаго, подробное и краткое, съ соблюденіемъ формы подлинника и съ измѣненіемъ ея. 3. Упражненіе въ пересказѣ рассказовъ, курсорно прочитанныхъ въ классѣ. 4. Заучиваніе наизусть стихотвореній и басенъ Крылова. 5. Бесѣды и устные сочиненія на темы изъ окружающей жизни, о видѣнномъ и слышанномъ. 6. Устный пересказъ по картинамъ. 7. Чтеніе учителемъ сложныхъ статей или отрывковъ и передача ихъ содержанія учениками.

Обязательное домашнее чтеніе. Чтеніе небольшихъ художественныхъ произведеній учениками дома съ проверкой преподавателемъ въ классѣ 2—3 раза въ мѣсяцъ.

ПО ГРАММАТИКѢ

1. Словообразованіе; понятіе о корнѣ, представкѣ, суффиксѣ, флексіи; слова простыя и сложныя; главнѣйшія измѣненія гласныхъ и согласныхъ корня. 2. Повтореніе по этимологіи пройденнаго въ I классѣ.

Имена прилагательныя; ихъ дѣленіе; полное склоненіе, орфографія окончаній. *Степени сравненія.* *Мѣстоименія*; ихъ склоненія. Склоненіе мѣстоименій: *никто, ничто съ предлогами.* *Глаголь*: виды, наклоненія и залого; образованіе причастій и дѣепричастій всѣхъ залоговъ. Глаголы одно-

кратные; глаголы опредѣленные и неопредѣленные: *бродить* и *брести*; *бѣгать* и *бѣжать*; *водить* и *вести*; *гонять* и *гнать*; *лазить* и *лзть*; *летать* и *летѣть*; *носить* и *нести*; *плавать* и *плыть*; *ходить* и *ити*; *ѣздить* и *ѣхать* и другіе; ихъ спряженіе; ихъ употребленіе съ разъясненіемъ отглагольных и отличій.

Нарѣчіе. образованіе нарѣчій; перечень нарѣчій, наиболѣе затруднительныхъ для правописанія.

Предлоги и ихъ управленіе.

Примѣчаніе. При прохожденіи этимологіи необходимо обратить особенное вниманіе: 1. на правописаніе прилагательныхъ, оканчивающихся на *ній*. 2. на образованіе нарѣчій отъ прилагательныхъ на *скій* и *цкій*. 3. на употребленіе мѣстоименій *свой*, *себя*. 4. на то, чтобъ не смѣшивали мѣстоименій *свой* и *его*; *кто-то* и *кто-нибудь*; *куда-то* и *куда-нибудь* и т. д.

ПО СИНТАКСИСУ

Понятіе о предложеніи простомъ и сложномъ. Простое распространенное предложеніе и его члены. Понятіе о придаточномъ предложеніи. Наиболѣе простыя формы придаточныхъ опредѣлительныхъ и временныхъ предложений, какъ полныхъ, такъ и сокращенныхъ, для практическаго усвоенія причастій и дѣепричастій. Рѣчь косвенная и прямая.

Употребленіе знаковъ препинанія: точки, точки съ запятой, двоеточія, знаковъ вопросительнаго и восклицательнаго; знаки препинанія въ предложеніяхъ опредѣлительныхъ и временныхъ.

ПРАКТИЧЕСКІЯ УПРАЖНЕНІЯ ПО ГРАММАТИКѢ. (Устные и письменныя)

1. Склоненіе именъ существительныхъ, прилагательныхъ и мѣстоименій а) въ предложеніяхъ, б) со всеми предлогами. 2. Спряженіе глаголовъ, главнымъ образомъ неправильныхъ и однократныхъ, въ предложеніяхъ; составленіе предложений съ глаголами опредѣленными и неопредѣленными. 3. Составленіе предложений опредѣлительныхъ и временныхъ, полныхъ и сокращенныхъ. 4. Упражненія въ обращеніи прямой рѣчи въ косвенную и косвенной въ прямую. 5. Упражненія въ управленіи словъ.

ПО ПИСЬМЕННОМУ (4 Работы въ мѣсяцѣ)

1. Списываніе. 2. Писаніе наизусть заученныхъ стихотвореній. 3. Диктовка пройденныхъ статей. 4. Диктовка объяснительная и провѣрочная. (Послѣдовательное прохожденіе правилъ правописанія). 5. Пересказъ разработанныхъ въ классѣ статей. 6. Пересказъ по картинамъ подъ руководствомъ преподавателя. 7. Краткія самостоятельныя сочиненія на темы изъ окружающей жизни, о видѣнномъ и слышанномъ.

III КЛАССЪ [5 Уроковъ]

I. 1. Чтеніе и разборъ небольшихъ художественныхъ произведеній или цѣльныхъ отрывковъ выдающихся русскихъ писателей съ выводомъ идеи, составленіемъ плана и характеристикой дѣйствующихъ лицъ. 2. Устное изложеніе прочитаннаго, какъ подробное, такъ и краткое. 3. Заучи-

ваніе наизусть лирических и эпических стихотвореній русских классиковъ, а также басенъ Крылова.

II. Обязательное домашнее чтеніе художественныхъ произведеній съ провѣркой учителемъ въ классѣ отъ 2 до 3 разъ въ мѣсяцъ.

III. Заучиванье наизусть стихотвореній. (Обязательно заучить отъ 5—7 ст). Примѣрный списокъ приведенъ ниже въ курсѣ IV класса.

ПО ПИСЬМЕННОМУ (4 Работы въ мѣсяцъ)

1. Диктовка изъ незнакомаго текста, объяснительная и провѣрочная, для усвоенія всѣхъ правилъ правописанія и знаковъ препинанія въ предложеніяхъ простыхъ и сложныхъ. 2. Письменное изложеніе содержанія цѣльныхъ произведеній или отрывковъ, прочитанныхъ въ классѣ или дома. 3. Самостоятельныя сочиненія, болѣе обстоятельныя, и сложныя, чѣмъ въ предыдущемъ классѣ, о видѣнномъ и слышанномъ по плану, разработанному въ классѣ или же составленному учениками. 4. Легкія и небольшія сочиненія по картинамъ.

ПО ГРАММАТИКѢ

Этимологія. Повтореніе пройденнаго по этимологіи въ предыдущихъ классахъ. **Дополненіе:** Неправильное склоненіе именъ существительныхъ на ъ, ь, о, а, я. Прилагательныя—существительныя; имена, употребляющіяся въ одномъ множественномъ числѣ, и ихъ склоненіе.

Особенности степеней сравненія. Неправильныя степени сравненія. Особенности первого и второго спряженія.

Образованіе совершеннаго вида; особенности образованія совершеннаго вида.

Синтаксисъ. 1. Повтореніе пройденнаго по синтаксису въ первыхъ двухъ классахъ. 2. Синтаксисъ сложнаго предложенія со сводомъ всѣхъ правилъ о знакахъ препинанія.

а) Предложеніе сложное. Предложенія подчиняющія и подчиненныя, сочиненныя и соподчиненныя.

б) Придаточныя опредѣлительныя предложенія; способы ихъ подчиненія главнымъ и ихъ сокращеніе.

в) Дополнительныя; способы ихъ подчиненія главнымъ, ихъ сокращеніе.

д) Обстоятельственныя предложенія:

1. времени; способы ихъ подчиненія; сокращеніе.

2. мѣста; способы ихъ подчиненія, сокращеніе.

3. образа дѣйствія; собственно образныя, сравнительныя и изъяснительныя.

4. причины; способы ихъ подчиненія; сокращеніе.

5. цѣли; способы ихъ подчиненія, сокращеніе.

6. уступительныя предложенія; способы ихъ подчиненія.

7. предложенія условныя; способы ихъ подчиненія.

Практическія упражненія по грамматикѣ тѣ же, что и въ предыдущихъ классахъ; сверхъ того слѣдуетъ при прохожденіи курса синтаксиса упражнять учениковъ въ составленіи придаточныхъ предложеній, требуя, чтобы они 1. пользовались пройденными статьями. 2. составляли самостоятельныя предложенія изъ обыденной повседневной жизни.

Примѣчаніе. Обратитъ особое вниманіе на умѣнье обозначать: 1. время (во всѣхъ его видахъ), 2. мѣсто (различіе предлоговъ *въ* и *на*), 3. причину, 4. цѣль, 5. послѣдовательность, 6. распределеніе.

Для чтенія въ классѣ и для обязательнаго домашняго чтенія рекомендуются слѣдующія произведенія:

Пушкинъ—Повѣсти Бѣлкина, Дубровский. **Лермонтовъ**—Бѣглець. **Тургеневъ**—Бирюкъ, Льговъ, Перепелка (Сказки). **Муму**. **Гаршинъ**—Сигналъ, Медвѣди, Сказаніе о гордомъ Апеѣ. **Телешовъ**—Домой. **Тютчевъ**—Одинъ день на полѣ сраженія. **Толстой**—Разказы. **Данченко**—Махмудкины дѣти. **Гусевъ**—Оренбургскій—По теченію. **Серафимовичъ**—Въ бурю. **Станюковичъ**—Васина тайна, Человѣкъ за бортомъ, Нянька. **Маминъ**—Кара Ханымъ, Акъ Бозать, Последняя треба. **Митропольскій**—Вода. **Чеховъ**—Дѣтвора, Мальчики, Каштанка.

IV КЛАССЪ [4 Урока]

1. Чтеніе и разборъ произведеній русской словесности (въ классѣ).

Пушкинъ—Бахчисарайскій фонтанъ, Капитанская дочка. **Лермонтовъ**—Бѣла, Максимъ Максимичъ.

Гоголь—Старосвѣтскіе помѣщики, Шинель, Ссора Ивана Ивановича. **Гончаровъ**—Дѣтство Обломова. **Тургеневъ**—Хоръ и Калиничъ.

2. Краткія свѣдѣнія о сочиненіи и изъ теоріи словесности о содержаніи и формѣ разбираемыхъ въ этомъ классѣ произведеній.

3. Основы стихосложенія.

4. Для заучиванія въ III и IV кл. наизусть рекомендуются слѣдующія стихотворенія: (Обязательно заучить отъ 4—6 стихотв.). **Пушкинъ**—Пѣснь о вѣщемъ Олегѣ, Пророкъ, Брожу ли я, Безумныхъ лѣтъ, Эхо.

Лермонтовъ—Пророкъ, Парусъ, Ангелъ, Молитва, Сосна,

Выхожу одинъ я, Умиравшій гладіаторъ, Дубовый листокъ, Тучки небесныя.

Кольцовъ—Что ты спишь, мужичокъ, Пѣсня пахаря, Лѣсъ.

Жуковский—Лѣсной царь. Лучшія стихотворенія **Некрасова**, **Никитина**, **Надсона** и **Майкова**.

ПО ПИСЬМЕННОМУ (2 Работы въ мѣсяцъ)

1. То же, что и въ III классѣ (за исключеніемъ диктовки). 2. Составленіе характеристикъ въ классѣ. 3. Изложеніе содержанія и выводъ идеи разказовъ или отрывковъ, какъ пройденныхъ въ классѣ или дома, такъ и прочитанныхъ учителемъ въ классѣ.

ПО ГРАММАТИКѢ

1. Повтореніе полного курса синтаксиса сложнаго предложенія. 2. Управленіе словъ, посредственное и непосредственное. 3. О представкахъ—предлогахъ. (Какое значеніе придаютъ глаголамъ предлоги).

Для обязательнаго домашняго чтенія рекомендуются—

Жуковский—Наль и Дамаянты. **Пушкинъ**—Братья разбойники. **Гоголь**—Портретъ (1-ая часть). **Тургеневъ**—Записки охотника. **Григоровичъ**—Антонъ Горемыка, Деревня, Свѣтлое Христово Воскресенье. **Короленько**—Въ Дурномъ обществѣ (Дѣти подземелья), Въ ночь подъ свѣтлый праздникъ, Старый звонарь. **Левъ Толстой**—Повѣсти и разказы. **Потаненко**—Шестеро, Проклятая слава. **Станюковичъ**—Морскіе разказы. **Андреевъ**—Ангелочекъ, Валя.

V КЛАССЪ [4 Урока]

1. Чтеніе и разборъ произведеній русской словесности (въ классѣ). **Карамзинъ**—Бѣдная Лиза. **Пушкинъ**—Кавказскій пленникъ, Цыганы, Скупой Рыцарь, Полтава. **Гоголь**—Тарасъ Бульба, Мертвыя души (Маниловъ, Собакевичъ, Ноздревъ, Коробочка, Плюшкинъ, характеристика Чичикова). **Лермонтовъ**—Пѣсня про купца Калашникова.

2. Краткія свѣдѣнія изъ теоріи словесности о содержаніи и формѣ разбираемыхъ въ классѣ произведеній.

3. а) Заучиванье наизусть отрывковъ изъ поэтическихъ произведеній, указанныхъ въ I отдѣлѣ. б) **Пушкинъ**—Поэтъ, Поэту, Поэтъ и чернь, Памятникъ, Къ морю, Я помню чудное мгновеніе. **Лермонтовъ**—Дума, Кинжалъ. Сравненіе лирики Пушкина и Лермонтова.

4. Для *обязательнаго домашнего чтенія* рекомендую: **Пушкинъ**—Мѣдный всадникъ, Арапъ Петра Великаго. **Тургеневъ**—Свиданіе (параллель «Бѣдной Лизѣ»), Гамлетъ Щигровскаго уѣзда, Степной король Лиръ, Ася, Первая любовь, Вешнія воды, Яковъ Пасынковъ, Пѣснь торжествующей любви. **Левъ Толстой**—Утро помѣщика, Люцернъ, Семейное счастье, Набѣгъ, Казаки, Рубка лѣса, Хозяинъ и работникъ. **Алексѣй Толстой**—Князь Серебряный, Трилогія. **Островскій**—Свои люди, Бѣдность не порокъ. **Короленко**—Убивецъ, Сонъ Макара, Слѣпой музыкантъ. **Гаршинъ**—Atalea princeps, Четыре дня, Записки Иванова, Трусъ. **Потаненка**—На дѣйствительной службѣ. **Чеховъ**—Лучшіе рассказы.

ПО ПИСЬМЕННОМУ (2 Работы въ мѣсяцѣ)

1. Изложеніе содержанія и разборъ произведеній, съ выводомъ идей, какъ пройденныхъ въ классѣ и дома, такъ и прочитанныхъ учителемъ въ классѣ отрывковъ или цѣльных разсказовъ (по плану, выработанному учащимися въ классѣ); для послѣдней цѣли рекомендуются стихотворенія въ прозѣ Тургенева, мелкіе рассказы Чехова, Короленко и Гаршина. 2. Составленіе характеристикъ. 3. Самостоятельныя сочиненія на общія темы изъ жизни и литературы.

VI КЛАССЪ [4 Урока]

1. Чтеніе и разборъ произведеній русской словесности (въ классѣ).

Пушкинъ—Моцартъ и Сальери. **Грибоѣдовъ**—Горе от ума. **Лермонтовъ**—Демонъ, Мцыри, Герой нашего времени (Княжна Мери). **Гоголь**—Ревизоръ.

2. Краткія свѣдѣнія изъ теоріи словесности о содержаніи и формѣ проходимыхъ въ классѣ произведеній.

3. *Краткій очеркъ развитія русской литературы со временъ возникновенія до Пушкина.*

Введеніе. Значеніе изученія русской литературы. Краткій обзоръ устной народной словесности. Былины богатырскія (познакомить учениковъ съ 2—3 былинами). Краткій обзоръ древне-русской письменности до XVIII в. Начало письменности. Кириллъ и Меѳодій и славянская азбука.

Собственно русская литература. Лѣтописи. Поученіе Владиміра Мономаха и Слово о полку Игоревѣ. Монастыри и древнее просвѣщеніе. Юго-западная образованность XVIII вѣка.

Общій характеръ Петровской эпохи, ея культурное и просвѣтительное значеніе.

Краткій обзоръ ложно-классическаго направленія.

М. В. Ломоносовъ; краткія свѣдѣнія о его жизни и дѣятельности; его заслуги предъ языкомъ и литературой (прочитать въ классѣ для образца отрывки изъ его одъ). **Сумароковъ** и ложно-классическая драма. Начало русскаго театра.

Общая характеристика литературныхъ теченій Екатерининскаго времени. **Нозиковъ** и **Радищевъ**. **Фонъ-Визинъ** и его комедія «Недоросль». **Державинъ** и его оды (прочитать ученикамъ въ классѣ отрывки изъ одъ «Богъ» и «Фелица»).

Сентиментальное направленіе. **Карамзинъ**, краткія свѣдѣнія о его жизни и дѣятельности. Карамзинъ, какъ писатель («Бѣдная Лиза»), какъ реформаторъ языка и какъ историкъ. Зарожденіе романтизма. **Жуковский**, какъ переводчикъ, его баллады — (Графъ Габсбургскій, Кубокъ, Перчатка, Ивовы журавли).

Крыловъ. Его басни, относящіяся къ вопросу о просвѣщеніи, о трудѣ образованіи и воспитаніи, недостатковъ общества; басни историческія. Значеніе Крылова въ русской литературѣ.

Грибоѣдовъ, его біографія. Комедія «Горе отъ ума», ея литературное и общественное значеніе.

4. *Обязательное домашнее чтеніе*; рекомендуются **фонъ-Визинъ** — Недоросль. **Островскій** — Гроза, Доходное мѣсто. **Гончаровъ** — Обыкновенная исторія, Обломовъ. **Тургеневъ** — Вѣшнія воды, Рудинъ, Наканунъ, Фаустъ, Гамлетъ и Донъ-Кихотъ. **Гаршинъ** — Художники, Красный цвѣтокъ. **Чеховъ** — Разсказы и повѣсти.

VII КЛАССЪ [3 Урокъ]

1. Чтеніе и разборъ произведеній: **Пушкинъ** — Евгений Онегинъ, Борисъ Годуновъ.

2. *Очеркъ развитія русской литературы въ XIX в.*

Характеристика эпохи 20-ыхъ и 30-ыхъ годовъ XIX столѣтія.

Обзоръ романтизма 30-ыхъ годовъ. **Пушкинъ**, его біографія; его предшественники (Батюшковъ).

Поэмы Пушкина и ихъ значеніе. Романъ «Евгеній Онегинъ»; литературное и общественное значеніе романа. Драмы Пушкина. Лирика Пушкина. Значеніе поэзіи Пушкина. Пушкинъ, какъ основатель реальнаго направленія.

Лермонтовъ, его біографія. Разборъ и характеристика его лирики; произведенія «Дума» и «На смерть Пушкина»: Эпическія произведенія. Романъ «Герой нашего времени», его литературное и общественное значеніе. Значеніе поэзіи Лермонтова. Байронизмъ въ русской литературѣ.

Гоголь, его біографія. Повѣсти изъ малороссійскаго быта. Повѣсти изъ петербургской жизни. «Ревизоръ» и «Мертвыя души»: литературное и общественное значеніе этихъ произведеній. Значеніе Гоголя въ русской литературѣ; натуральное школа, созданная Гоголемъ.

Общій обзоръ литературы послѣ-гоголевскаго періода.

Обязательное домашнее чтеніе; рекомендуются: **Тургеневъ** — Дворянское гнѣздо, Отцы и дѣти, Дымъ, Новь. **Достоевскій** — Записки изъ Мертваго дома, Униженные и

оскарбленные, Преступление и наказание. Толстой—Война и миръ. Лермонтовъ—Герой нашего времени (полностью) Гоголь—Мертвые души (полностью) Шекспиръ—Макбетъ (параллель «Борису Годунову»).

ПО ПИСЬМЕННОМУ ВЪ VI И VII
КЛАССАХЪ.

1. Самостоятельныя сочиненія на темы изъ пройденнаго курса, характеристики.
2. Сочиненія на общія темы изъ жизни и литературы.

ԾՐԱԳԻՐ

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Մեր թեմական դպրոցներում գերմաներէնի դասաւանդութեան նպատակը պէտք է լինի հնարաւորութիւն տալ աշակերտներին պարզ նախադասութիւններով իրենց մտքերն արտայայտել գերմաներէն լեզուով և հասկանալ գերմանական գրականութեան պարզ ոճով գրուածները:

Գերմաներէն լեզուի ուսուցումը պէտք է հիմնել խօսակցական եղանակի և դիտողութեան վրայ: Աշակերտներին նախ պէտք է սովորեցնել շրջապատող առարկաների անունները պարզ և կարճ նախադասութիւններով. այդպիսով աշակերտները ձեռք են բերում որոշ թուով բառերի պաշար և իւրացնում են գլխաւոր նախադասութեան պարզ ձեւերը: Սկզբում նոքա պատասխանում են ուսուցչի տուած հարցերին և ապա իրենք պատմում: Դասարանում և իրենց շուրջը գտնուող առարկաների անունները սովորելուց յետոյ, աշակերտները նոյն ձեւով սովորում են նաև նկարագրել պատկերները:

Այդպիսի բանաւոր վարժութիւններից յետոյ աշակերտները դասագրքից կարդում են փոքրիկ արձակ յօդուածներ և ամեն անգամ կարդացածը հասկանալուց յետոյ պատմում են բովանդակութիւնը: Այսպիսով գլխաւոր ուղադրութիւնը դարձնում է գործնական վարժութիւնների վրայ և հետզհետէ շատանում է աշակերտների բառապաշարը:

Թարգմանութիւն գերմաներէնից հայերէն պէտք է տեղի ունենայ վերին դասարաններում, ուր պէտք է յատկապէս ուղադրութիւն դարձնել մայրենի և օտար լեզուի տարբերութիւնների և վերջնիս ուրոյն արտայայտութեան ձեւերի վրայ:

Ընթերցանութիւն: Որպէսզի աշակերտը կանոնաւոր շեշտադրութեամբ և հասկանալով կարդալ սովորէ, պէտք է հէնց սկզբից առանձին ուղադրութիւն դարձնել ընթերցանութեան կանոնաւոր

թուփեան վրայ, ծանկալի է, որ ուսուցիչն սկզբում ինքը յօդուածը կարդայ և ամեն կերպ աշխատի աշակերտների ընթերցանութեան փոքրիկ սխալներն անգամ ուղղել: Սմբական ընթերցանութիւն կարելի է միմիայն ստորին դասարաններում կիրառել:

Քեռականութիւնից պէտք է անցնել միմիայն ամենակարևորը, ինչ որ անհրաժեշտ է կարդացածը հասկանալու կամ խօսելու համար: Քերականութիւնը պէտք է անցնել ներածական (ինդուկտիւ) եղանակով: Երբ աշակերտները բաւականաչափ նոյնանման երեւոյթների դիտողութիւններ են ձեռք բերում, ապա միայն այդ երեւոյթներից ընդհանուր կանոններ են հանում և դասաւորում: Այսպիսով աշակերտներն անզգալի կերպով հետզհետէ ձեռք են բերում ամբողջ քերականական գիտելիքները՝ ընթերցանութեան յօդուածների և խօսակցական եղանակի միջոցով: Ուսուցման նիւթի մշակութիւնը նոյն եղանակով պէտք է շարունակուի սկզբից մինչև վերջը նաև բարձր դասարաններում:

Բ. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 3 դ ա ս .

1. Բ ա ն աւ ու թ վ ա ը ժ ու թ իւ ն ն եր . Դասարանի առարկաները, աշակերտների անուններն ասելը, ընտանիքի անդամների անունները, հազուստի մասերը, համրանք մինչև 100: Նկարագրութիւն դասարանի, դպրոցի, պատկերների օգնութեամբ նկարագրել տունը, բնակարանը, ընտանիքը, բակը, պարտէզը, ընտանի կենդանիներ:

2. Դ ա ս ա գ ը ր ի ց կարդալ փոքրիկ արձակ յօդուածներ և հասկանալուց յետոյ պատմել գերմաներէն՝ նախադասութեան եղանակին դարձնելով յոգնակի և ընդհակառակը, Ա. դէմքը Բ-ի, Գ-ի և ընդհակառակը: Մի քանի փոքրիկ ոտանաւորներ բերանացի:

3. Ք ե ռ ա կ ա ն ու թ իւ ն . Գոյական անուններ որոշեալ և անորոշ յօդերով. գոյական անունների սեռերը. գոյականների հոլովումը՝ որոշեալ և անորոշ յօդերի հետ միասին. արական, իգական և չէզոք սեռերի գոյականների հոլովումները: Haben և Sein օժանդակ բայերի սահմանական եղանակի ներկայ և անկատար ժամանակները, բայերի խոնարհումը՝ սահմանական եղանակի ներկայ և անցեալ անկատար ժամանակները, հրամայական եղանակ.

ածական անուն. ածականների աստիճանները. նախդիրների հոլովառութիւնը. բառերի դասաւորութիւնը հաստատական և հարցական նախադասութիւնների մէջ:

4. Գ ը աւ ու թ վ ա ը ժ ու թ իւ ն ն եր (գրաւորները բոլոր դասարաններում ամիսը երկու անգամ): Նախադասութեան թելադրութիւն. ուսուցչի հարցումների պատասխանները. արտագրութիւն գրատախտակից և տանը դասագրքից:

Գ. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 3 դ ա ս .

1. Կարդալ աշակերտների շրջապատին վերաբերեալ մատչելի յօդուածներ: Կարդացածը նախ հարցերի օգնութեամբ և ապա առանց հարցերի պատմել՝ ներկայ և լայլ ժամանակներով. բերանացի մի քանի ոտանաւոր:

2. Ք ե ռ ա կ ա ն ու թ իւ ն : Ածականների համաձայնութիւնը գոյականի հետ. ածականների հոլովումը. թուական անուն. քանակական և թուական ածականներ. անձնական, ստացական, հարցական, յարաբերական և ցուցական գերանուններ, դոցա հոլովումը. բայերի խոնարհումը. սահմանական եղանակի անցեալ կատարեալը, յարակատարը և ապառնին. կրաւորական բայերի խոնարհումը. փոխադարձ և ածանցական բայերի խոնարհումը. անդէմ բայեր. անորոշ դերբայ. Շն-ով և առանց Շն-ի ներկայ դերբայ. յատուկ անունների գործածութիւնը և հոլովումը: Երկրորդական նախադասութիւնների մէջ բառերի դասաւորութիւնը և պատկերների նկարագրութիւն:

3. Գ ը աւ ու թ . Թելադրութիւն նախապատրաստութեամբ և պատկերների նկարագրութիւն:

Դ. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 3 դ ա ս .

1. Բ ա ն աւ ու թ . կարդալ մանր պատմութեան և Գրիմի հէքիաթներից ընթերցանութեան միջոցին ուղադրութիւն դարձնել քերականական լեզուական վարժութիւնների և գործնական խօ-

սակցական վարժութիւններ Վրայ: Ուսուցիչը գերմաներէն լեզուով է բացատրում դասը: Մի քանի ընտիր ոտանաւորներ բերանացի:

2. Ք եր ա կ ա ն ու թ իւ ն. լրացնել ստուգաբանութեան պակաս մասերը. խոնարհման ստորագրասականն ու պատմականը. անկանոն բայերի խոնարհումը. բաժանուող և չբաժանուող մասնիկներով բայերի խոնարհումը. նախադասութեան գլխաւոր մասերը:

3. Գր աւ ու թ. կարգացած ու սովորած յօդուածների փոխադրութիւն և թելադրութիւն:

Ե. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 2 դ ա ս.

1. Բ ա ն աւ ու թ. կարգաւ որեւէ դիւրին պատմութեանը կամ փոքր պատմութիւններ. կարգացածը պատմել, ըստ կարիւլոյն, սեպհական խօսքերով. խօսակցական վարժութիւններ. տանը կարգաւ ու տալ փոքրիկ զրքոյկներ և դասարանում պատմել տալ դոցա բովանդակութիւնը:

2. Ք եր ա կ ա ն ու թ իւ ն. ստուգաբանութեան սխտեմատիկ ամփոփումն. ուղղակի, անուղղակի, հարցական, պայմանական և ըղձական նախադասութիւնների կազմութիւնն ու գործածութիւնը. կարգացած յօդուածների մէջ պատահող համաձայնական կանոնները բացատրել. ուղղակի խօսակցական ձևը փոխել անուղղակի խօսակցական ձևի և ընդհակառակը:

3. Գր աւ ու թ. կարգացած յօդուածների փոխադրութիւն:

2. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 2 դ ա ս.

1. Բ ա ն աւ ու թ. կարգաւ մանր նկարագրական և գեղարուեստական յօդուածներ և պատմութեանը. կարգացածը պատմել սեպհական խօսքերով. խօսակցական վարժութիւններ. կարգացած զրքերի բովանդակութիւնը պատմել:

2. Ք եր ա կ ա ն ու թ իւ ն. համաձայնութիւն. ստուգա-

բանական և համաձայնական վերլուծութիւններ կարգացած յօդուածների:

3. Գր աւ ու թ. կարգացած յօդուածների փոխադրութիւններ:

Ե. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 2 դ ա ս.

1. Բ ա ն աւ ու թ. կարգաւ գերմանական ժամանակակից հեղինակների կենսագրութիւններն ու գեղարուեստական պատմութեանը ու ազատ պատմել. պատմել տանը կարգացած զրքերի համառօտ բովանդակութիւնը:

2. Ք եր ա կ ա ն ու թ իւ ն. քերականական վերլուծութիւններ:

3. Գր աւ ու թ. Գրել փոխադրութիւններ, կենսագրութիւններ և ինքնուրոյն փոքր շարադրութիւններ:

ԾՐԱԳԻՐ

Մ Ա Թ Ե Մ Ա Տ Ի Կ Ա Յ Ի

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Մաթեմատիկան զարգացնում է մտածողութիւնը, նպաստում է ինքնուրոյն դատողութեան, թեթեւացնում է բնութեան երևոյթ-
ների օրէնքների ուսումնասիրութիւնը և սովորեցնում է պարզ
ճշգրիտ լեզուով արտայայտել մտքերը:

Մաթեմատիկան սերտ շաղկապուած է միւս բոլոր գիտու-
թիւնների հետ: Այդ նկատի առնելով՝ մաթեմատիկայից առնուած
են միայն այն մասերը, որոնք կրթական տեսակէտից բարձր են
գնահատուած. այդ նիւթը դասաւորուած է այնպէս, որ նպաստի
աշակերտի աստիճանական զարգացման:

I. Մաթեմատիկան ընդլայնում է մտաւոր զարգացման ա-
պարէզը:

1. Աշակերտին սովորեցնելով ֆունկցիօնալ դատողութիւն:
2. Վարժեցնելով արագ ըմբռնողութեան և հնարամտութեան:
3. Զարգացնելով յանգիլ ճիշտ եզրակացութիւնների:
4. Ծանօթացնելով դատողութեան տիպիկ եղանակների:
5. Նպաստելով ստեղծագործական ոգու զարգացման:
6. Սովորեցնելով օգտուել սիմբոլիկ լեզուից:

II. Երևակայութեան ասպարիզում տալիս է տարածութեան
զադաիւար:

III. Կամքի ոյժի ասպարիզում զարգացնում է ակտիւ ու-
շադրութիւն:

IV. Զգացմունքի ասպարիզում զարգացնում է էստետիկ
ճաշակ և առաջացնում է

ա. սէր դէպի գիտութիւն

բ. յարգանք դէպի ճշմարտութիւն:

ԾՐԱԳԻՐ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ա. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 4 դաս.

1. Թուերի բաժանականութիւնը.
2. 2-ի, 3, 4, 5, 6, 8, 9, 10 և 25-ի վերայ բաժանուող
թուերի կանոնները:
Բաժանման նշանացոյցները:
Բարդ թուերի վերլուծելը պարզ բաղմապատկիչների:
Ամենամեծ ընդհանուր բաժանարար:
Ամենափոքր բաժանելի:
Մետրական չափեր:
Տասնորդական կոտորակների չորս գործողութիւնը. (վերացա-
կան և անուանական թուերով):
Գործողութիւններ հասարակ կոտորակների հետ. (վերացա-
կան և անուանական):
Տասնորդական կոտորակների մնացած մասը՝ պարբերական
կոտորակները հասարակ կոտորակ դարձնելը: Հասարակ կոտորակը
տասնորդական դարձնելը և տասնորդական կոտորակը հասարակ
կոտորակ դարձնելը:
Վերոյիշեալ կանոններին վերաբերեալ բանաւոր և գրաւոր
խնդիրների լուծումն:

Բ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 3 դաս.

Տարբերական և քանորդական յարաբերութիւններ և համեմատութիւններ:

Յարաբերութիւնների և համեմատութիւնների յատկութիւնները:

Պարզ և բարդ երկից կանոն:

Տոկոսների կանոն:

Զեղջման կանոն:

Համեմատական բաժանման կամ ընկերութեան կանոն:

Խառնուրդի կանոն:

Ընդհանուր խնդիրներ:



ԾՐԱԳԻՐ

ՀԱՆՐԱՀԱՇՈՒԻ

Բ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Սկզբնական հասկացողութիւն: Տառերի գործածութիւնը հանրահաշուի մէջ: Հանրահաշուական արտայայտութիւն: Հանրահաշուական արտայայտութեան թուական մեծութիւնը: Աստիճան բարձրացնել: Արմատ հանել: Գործակից: Փակագծերի գործածութիւնը: Դրական և բացասական քանակութիւններ և նրանց չորս գործողութիւնը: Միանդամանի և բազմանդամանի արտայայտութիւն: Նման անդամներ և նրանց միացում: Գումարում և հանում միանդամանիների և բազմանդամանիների: Միանդամանու բազմապատկումը միանդամանու հետ: Հանրահաշուական միանդամանիների բաժանում: Հանրահաշուական կոտորակներ: Միանդամանի կոտորակների կրճատում և չորս գործողութիւնները: Զերո և բացասական աստիճանացոյց:

Գ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Բազմանդամանու բազմապատկում միանդամանու հետ: Բազմանդամանու բազմապատկում բազմանդամանու հետ: Բանաձևեր (Ֆորմուլաներ)— $(a+b)$, $(a-b)$, $(a \pm b)^2$, $(a \pm b)^3$, $(a^3 \pm b^3)$: Բազմապատկում բանաձևերով: Բազմանդամանու բաժանումը միանդամանու վրայ: Բազմանդամանու բաժանումը բազմանդամանու վրայ: Բաժանում բանաձևերով: Հանրահաշուական արտայայտութիւնների բազմապատկիչների վերածելը: Բազմանդամանի հանրահաշուական կոտորակներ: Բազմանդամանի

կոտորակները կրճատումն և ընդհանուր յայտարարի բերելը: Բազմանդամանի կոտորակների չորս գործողութիւնները:

Յարաբերութիւններ և համեմատութիւններ: Քանորդական համեմատութեան յատկութիւնները: Անյայտ անդամի գտնելը: Բարդ և ածանցեալ համեմատութիւններ: Դրանց օգնութեամբ անյայտներ որոշելը:

Դ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Հաւասարացումն: Նոյնութիւն: Հաւասարութիւն: Հաւասարութեան գլխաւոր յատկութիւնները: Մէկ անյայտով առաջին աստիճանի հաւասարութիւններ վճռելը (գրաֆիկ եղանակով հաւասարութիւններ լուծելը): Երկու և շատ անյայտներով հաւասարութիւններ և դոցա վճռելու եղանակը: Խնդիրների պայմանից կազմել հաւասարութիւններ: Միանդամանիների աստիճան բարձրացնելը: Արտադրեալի, կոտորակի և աստիճանի աստիճան բարձրացնելը: Բազմանդամանու աստիճան բարձրացնելը: Արմատ հանել արտադրեալից, կոտորակից և աստիճանից: Արմատացոյցի և արմատատակ քանակութեան աստիճանացոյցի կրճատումը: Թուերից քառակուսի արմատ հանել: Թուերից մօտաւոր ճշտութեամբ քառակուսի արմատ հանել: Կոտորակ և աստիճանացոյց: Բազմանդամանիներից քառակուսի արմատ հանել:

Ե. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Արմատների թիւար (նորմալ) ձև տալը: Արմատների միացումն: Արմատների գումարումն, հանումն, բազմապատկումն և բաժանումն: Արմատների աստիճան բարձրացնելը: Արմատներից արմատ հանել: Կեղծ քանակութիւնների մասին հասկացողութիւն: Մէկ անյայտով քառակուսի հաւասարութիւններ: Լրիւ և թերի քառակուսի հաւասարութիւններ: Մէկ անյայտով քառակուսի հաւասարութեան լուծումն: Քառակուսի հաւասարութեան արմատների

յատկութիւնը: Եռանդամանին պարզ բազմապատկիչների վերլուծել: Խնդրի պայմանից քառակուսի հաւասարութիւններ կազմելը: Արմատական հաւասարութիւններ: Կրկնակի քառակուսի հաւասարութիւններ: Բարձր աստիճանի երկու անյայտներով հաւասարութիւնների մի քանի պարզ դէպքերը:

Զ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Տարբերական և քանորդական յառաջատուութիւն: Անվերջ քանորդական յառաջատուութիւն: Դիպահամար կամ թուանշանակ (լոգարիֆմ): Դիպահամարի գլխաւոր յատկութիւնը: Արտադրեալի, կոտորակի, աստիճանի և արմատի դիպահամարը: Տասնորդական դիպահամարներ: Դիպահամարի աղիւսակի կազմութիւնը և գործածումն: Օրինակներ և խնդիրներ: Բարդ տոկոսներ: Պարբերաբար զեղջ և աճումն (срочные уплаты и взносы):

ԾՐԱԳԻՐ

ԵՐԿՐԱՆՔԱՓՈԽԵԱՆ

Գ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Հասկացողութիւն երկրաչափութեան մասին: Կէտի, գծի մակերևոյթի և ծաւալի որոշումն: Ակսիոմա: Տեորեմա: Ուղիղ գիծ: Անկիւն: Գծերի և անկիւնների հաւասարութիւնը և անհաւասարութիւնը: Գծերի և անկիւնների հետ թուաբանական չորս գործողութիւնները: Կից անկիւններ: Ուղղաձիգ, հորիզոնական և թեք գծեր: Ուղղահայեաց գիծ: Ուղիղ անկիւններ: Ուղիղ անկիւնների յատկութիւնը: Կից անկիւնների յատկութիւնը: Հակադիր անկիւններ և նրանց յատկութիւնը: Գծից դուրս տուած կէտից թողնել գծին ուղղահայեաց և գծի որևիցէ մի կէտից կանգնեցնել գծին ուղղահայեաց: Եռանկիւններ և բազմանկիւններ: Հասկացողութիւն եռանկիւնների և բազմանկիւնների մասին: Եռանկիւնների տեսակները: Եռանկիւնների մէջ զլխաւոր գծերը: Հաւասարասրունք եռանկեան յատկութիւնը: Եռանկիւնների հաւասարութեան դէպքերը: Եռանկեան անկիւնների և կողմերի կապակցութիւնը: Եռանկեան մէջ կողմերի կապակցութիւնը: Երկու հաւասար համապատասխան կողմեր ունեցող եռանկիւններ: Ուղղահայեաց և թեք գծեր: Ուղղանկիւն եռանկեան հաւասարութեան դէպքերը: Կառուցման հիմնական խնդիրներ: Զուգահեռական գծեր և հիմնական տեորեմաներ: Համապատասխան զուգահեռական և ուղղահայեաց կողմերով անկիւններ: Եռանկեան և բազմանկեան անկիւնների գումարը: Զուգահեռակողմներ և նրանց զլխաւոր յատկութիւնները: Տեորեմաներ հիմնուած զուգահեռակողմների յատկութիւնների վրայ: Սեղանակերպ (տրապեցիա) և նրա զլխաւոր յատկութիւնը: Կառուցման և հաշուելու խնդիրներ:

Դ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Շրջագծի ձևը և դիրքը: Աղեղների հաւասարութիւնը և անհաւասարութիւնը: Աղեղների և լարերի մէջ եղած կապը ու լարի հեռաւորութիւնը կենդրոնից: Շօշափող գծի յատկութիւնը: Մեծութիւնների չափումն: Համաչափ և անհամաչափ գծեր: Անկիւնների չափումն աղեղներով: Ներգծեալ և արտագծեալ բազմանկիւններ: Եռանկիւնների և բազմանկիւնների նմանութիւնը: Մի քանի տեորեմաներ համեմատական գծերի վերաբերեալ: Եռանկեան տարրերի միմեանց հետ ունեցած թուական կապը: Պտղոմէոսի տեորեման: Շրջագծի մէջ մի կէտով անցնող լարերի կտորների յատկութիւնը: Շրջագծից դուրս մի կէտից անցնող շօշափող և հատող գծերի կտորների յատկութիւնը: Կանոնաւոր ներգծեալ և արտագծեալ բազմանկիւններ և նրանց յատկութիւնները: Մակարդակների չափումն: Բազմանկիւնների մակարդակները: Պիթագորոսի տեորեման: Նման ձևերի մակարդակների յարաբերութիւնը: Խնդիրներ կառուցման և հաշուելու:

Ե. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Սահմանների մասին դադափար: Շրջագծի երկարութիւնը: Շրջանի մակարդակը:

Հարաչափութիւն (ստերիոմետրիա):

Հարթութեան դիրքի որոշումը տարածութեան մէջ: Ուղիղ գծերի և հարթութիւնների փոխադարձ դրութիւնը տարածութեան մէջ: Երկերես և բազմերես անկիւնների զլխաւոր յատկութիւնները: Հասկացողութիւն կանոնաւոր բազմանիւստների մասին: Հատուածակողմի (պրիզմայի) և բուրգի մակերևոյթի և ծաւալի որոշումը: Ուղիղ զլանի, կոնի և գնդի մակերևոյթի և ծաւալի որոշումն: Հաշուելու խնդիրներ:

ԾՐԱԳԻՐ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՒԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Պատմութիւնը մարդկային քաղաքակրթութեան ընթացքի պատկերն է: Մարդկութեան իւրաքանչիւր հատուած այն չափով տեղ ունի պատմութեան մէջ, որչափ նպաստել է քաղաքակրթութեան ընթացքին: Պատմութիւնը ուսումնասիրում է մարդկային հասարակական կեանքի անցեալը՝ նպատակ ունենալով գիտնականօրէն գուշակել նրա ապագան:

Ամեն մի երևոյթի մասին գիտնականօրէն գուշակութիւն կարելի է անել միայն այն ժամանակ, երբ կան հաստատուն օրէնքներ, որոնցով պայմանաւորուում են նրա փոխակերպութիւնները: Այստեղից հետևում է, որ պատմութիւնն ուսումնասիրելու մեր նպատակը պիտի լինի պարզել, թէ ինչ գործօնների ազդեցութեամբ և ինչ օրէնքներով է լինում մարդկային հասարակական երևոյթների զարգացումը: Ուրիշ խօսքով՝ պատմութեան մէջ մենք պիտի վեր հանենք հասարակական շարժումների մղիչ ոյժերը, որոշենք նոցա փոխազդեցութեան սահմանները և այդպիսով գտնենք այն հաւասարակշիւը, որի ազդեցութեամբ անհրաժեշտօրէն պիտի գնայ մարդկութեան զարգացումը: Դասական դման ընթացքում անհրաժեշտ է յատկապէս շեշտել այն երևոյթները, որոնք սկիզբն են առել անցեալում, բայց ներկայիս համար ընթացիկ և չուծելի խնդիրներ են յարուցանում:

Բացի այս հիմնական նպատակից՝ պատմութիւնը հետապնդում է և մի քանի երկրորդական նպատակներ, որոնց մասին ևս պէտք է շեշտել այստեղ:

Նոցանից առաջինն այն է, որ պատմութիւնը տալիս է որոշ փորձառութիւն՝ հասարակական կեանքի այս կամ այն դժուարութիւնը հարթելու համար: Պատմութիւնը նոյնութեամբ չի կրկնում, բայց մարդկութեան անցեալի ու ներկայի մէջ կան քաղմածիւ նման խնդիրներ, դրութիւններ ու երևոյթներ: Եթէ

մենք գիտենք, թէ անցեալում հասարակական կեանքի առաջ բերած այս կամ այն դժուարութիւնն ինչպէս է լուծուել, այդ լուծումն ինչ արդիւնք է տուել, մեր ժամանակի նմանօրինակ դժուարութիւնները հեշտութեամբ կը լուծենք: Ուրեմն պատմութիւնն ուսումնասիրելիս պիտի միշտ համեմատութեան մէջ դնենք մարդկութեան անցեալի ու ներկայի նման խնդիրները և անցեալով ներկան պարզարանենք:

Պատմութիւնը մեզ տալիս է նոյնպէս որոշ ծանօթութիւններ ու գիտելիքներ անցեալի մասին և հարստացնում է մեր մտաւոր—հոգեկան պաշարը, ուստի և պատմութեան նպատակներից մէկն էլ մեր ներհունութեան (էթուդիցիայի) ճոխացումը պիտի լինի:

Վերջապէս պատմութիւնը հետապնդում է որոշ կրթական—գաստիարակչական նպատակներ: Անցեալում մարդկութիւնը ունեցել է և՛ լուսաւոր ու մռայլ շրջաններ, և՛ հերոսական ու ստրկահոգի դէմքեր, որոնց գործերի արդիւնքներն այժմ մեր առաջ են: Եւ ահա ուսուցչի համար մեծ յարմարութիւն է ներկայանում պատմական օրինակների վրայ պարզելու, թէ ինչն է լաւը և ինչը վատը մարդկային կեանքում, որով և աշակերտի բարոյական զգացողութիւնը բնականաբար պէտք է զարգանայ:

Թեմական դպրոցներում պատմութեան երեք ճիւղ կայ. Ընդհանուր պատմութիւն, Հայոց պատմութիւն և Ռուսաց պատմութիւն: Եկեղեցական պատմութիւնն ևս մարդկային պատմութեան անքակտելի մի մասն է, սակայն անհրաժեշտ է դնել կրօնական առարկաների շարքը, որովհետեւ նրա բնոյթը այդպէս է: Ի նկատի ունենալով մեր թեմական դպրոցների ընդհանուր նպատակը, պատմական առարկաներին յատկացրած ժամերի թիւը՝ իւրաքանչիւր ճիւղի մէջ նիւթերի ընտրութիւնը պիտի անել հետեւեալ եղանակով:

Ընդհանուր պատմութեան մէջ պիտի տեղ գտնեն միայն այն փաստերը, որոնք կամ բնորոշիչ են որեւէ դարաշրջանի համար և կամ նպաստում են հասկանալու հայոց պատմութեան որեւէ մասը: Առաջին տեսակէտի կիրառումը ազատում է աշակերտին երկրորդական փաստերի կուտակումից և նպաստում պատմութեան զարգացման ընթացքի մասին պարզ հասկացողութիւն կազմելու: Իսկ երկրորդ տեսակէտի կիրառումը պահանջում է, որ մենք աւելի կանգ առնենք արեւելեան ազգերի և Բիւզանդիոնի պատմութեան որոշ շրջանների վրայ, քան այդ տրամադրում է միջնակարգ դպրոցների ընդունուած սովորական ծրագիրը:

Հայոց պատմութեան դասաւանդութիւնն ևս պիտի ազատ լինի պատմական մանրամասնութիւնների պահանջից և յատկապէս կանգ առնի քաղաքակրթական նշանակութիւն ունեցող երևոյթների վրայ: Անհրաժեշտ է նաև նիւթերի ընտրութեան ժամանակ հայոց եկեղեցու պատմութեան սահմանները չթեւակոխել և խոյս տալ միեւնոյն նիւթի եկեղեցական ու հայոց պատմութեան մէջ կրկնուելուց: Պէտք է հայոց պատմութեանը կցել մեր հարեան ազգերի պատմութիւնից այն շրջանները, որոնք ընդհանուր պատմութեան հետ չեն կապուում, բայց հայոց պատմութեան լուսաբանութեան համար կարեւոր են:

Ռուսաց պատմութեան դասաւանդման ժամանակ պիտի յատկապէս կանգ առնել վերջին դարերի վրայ, երբ սկսում են ուսաց յարաբերութիւնները Կովկասի հետ ընդհանրապէս և Հայերի հետ մասնաւորապէս: Առանձնապէս պիտի ընդգծել այն բարենորոգումները, որ Ռուսները մտցրել են Կովկասում և այդ բարենորոգութիւնների արած ազդեցութիւնը երկրի զարգացման վրայ:

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Դ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2-դաս.

Հայաստանի պատմութեան աղբիւրները: Հայաստանի պատմութեան շրջանները: Հայաստանի աշխարհագրական առանձնաշատկութիւնների նշանակութիւնը և ազդեցութիւնը պատմական կեանքի վրայ (ազգաբնակչութեան պարապմունքի, բնաւորութեան, հասարակական և քաղաքական կեանքի, արտագաղթի և ներգաղթի վրայ):

Ա. ԽԱԼԴԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Խալդեի ծագումն ու լեզուն.—Նոցա քաղաքակրթութիւնը—Կրօնը, հասարակական և քաղաքական կազմը, նիւթական քաղաքակրթութիւնը (ժայռափոր և քարապատ շինութիւնները, ոռոգման միջոցները, պղնձէ և երկաթէ իրերը):

Խալդեի քաղաքական պատմութիւնը.—Նայիրի և Ուրարդի անունների աշխարհագրական նշանակութիւնը: Ուրարդի բարձրանալու պատճառները: Ասորեստանի թագաւորների առաջին արշաւանքները (Թուկլատ—Հաբալ—Ասար, Ասուր—Նազիր—Հաբալ): Ուրարդի նշանաւոր թագաւորները:

Սկիւթացոց և Կիմերիների արշաւանքները: Խալդական պետութեան անկումը:

Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Հայերի ծագման մասին եղած կարծիքները: «Արմեն» և «Հայ» բառերի մեկնութիւնը: Հնդկահարոյսի հայերի քաղաքակրթութեան

աստիճանը, ինչպէս ինքն իսկ խառնուելը. ինչպէս ինքն իսկ խառնուելը. ինչպէս ինքն իսկ խառնուելը.

Մար-Պարսկական խառնուելու օրինակը. — Հայոց թագաւորական տունը: Տիգրանը ըստ հայկական (Պորենացու) և պարսկական (Քսենոֆոնի) աւանդութիւններէ: Հայերի ապստամբութիւնը Գարեհ Վշտասպեանի օրով և պարսկական: Հայաստանի սատրապութիւնները (Արմենիա և Ալա-րոդիա): Հայաստանի սատրապները «Տասը հազարի նահանջ» ժամանակ: Հայոց զօրքի մասնակցութիւնը Գաւգամելայի ճակատամարտին:

Հայաստանի ներքին կեանքի հանգամանքները պարսից տիրապետութեան ժամանակ: Հայերի կախումը մար-պարսիկներէ մինչև սատրապութիւններին հաստատուելը: Սատրապների իշխանութիւնը: Հայոց զօրքի գէնքը: Հայաստանի գիւղերը (ըստ Քսենոֆոնի): Հայերի առևտուրը: Պարսկական լեզուի և կրօնի տարածուելը Հայաստանում:

Հայոց հեթանոսական կրօնը: Տարբերութիւնը պարսից զրաշտական կրօնից: Աստուածութիւնները (Անահտի պաշտամունքը): Երկրորդական ոգիներ: Պաշտամունքի վայրերը. տօներ: Քրմական տոհմեր:

Հայաստանի Սելևկեան Երջանում. — Գաւգամելայի ճակատամարտի նշանակութիւնն ու հետեանքները Հայաստանում: Տեղական իշխանութիւնների շարունակուելը: Որոնք: Արշամ և Քսերքսէս: Զարիադրէս և Արտաշիս: Մագնեսիայի ճակատամարտի նշանակութիւնը Փոքր Ասիայի համար ընդհանրապէս և Հայաստանի համար մասնաւորապէս: Սելևկեան պետութեան ներքին կեանքի գլխաւոր առանձնայատկութիւնները: Սելևկեան-յունական ազդեցութիւնը հայկական առևտրի, սովորութիւնների և կրօնի վրայ:

Արտաշեսեան հարստութեան բարձրացումը. — Պարթևների ծագումը, լեզուն և կրօնը: Պարթևական պետութեան ընդարձակուելը: Արշակ Մեծ-Միհրդատ: Արշակունիների հաստատուելը Հայաստանում ըստ Մ. Պորենացու և այդ աւանդութեան պատմական արժէքը:

Արտաշիս և Արտաշատի հիմնարկութիւնը: Նրա յարաբերութիւնները Հռոմի հետ և սահմանների ընդարձակումը Զարիադրէսի աջակցութեամբ:

Տիգրան Մեծ և Հայաստանի երկու մասերի միացումը ու

հարեան երկրների գրաւումը: Մասնակցութիւնը Միհրդատի պատերազմներին: Ընդհարումները Հռովմայեցոց հետ: Արտաշատի դաշնադրութիւնը և նրա նշանակութիւնը: Պոմպէոսի արշաւանքը դէպի Վրաստան:

Վրացի. — Նրանց ծագումը և լեզուն. հասարակական կազմը, կրօնը: Տեղեկութիւններ Վրացոց պետական կեանքի սկզբնաւորութեան մասին: Վրաստանի և Հռովմի մէջ սկսուած յարաբերութիւնները: Պոմպէոսի հեռանալը դէպի Ասորիք, Պաղեստին և ապա Հռովմ:

Արտաւազդ: Կրասոսի արշաւանքի վախճանը: Հայերն ու Պարթևները: Անտոնիոս և արևելեան գործերը: Արտաւազդի գերութիւնը:

Արտաշէս Բ., Տիգրան Գ.: Արտաշիսի սերնդի վերջին ներկայացուցիչները: Արտաշիսական սերնդի սպառուելը: Նոր հարստութիւն հիմնելու փորձերը:

Տրդատ Պարթև: Կորբուլան և հաշտութեան պայմանները: Ճանապարհորդութիւն դէպի Հռովմ: Աշխատար և Պարթամասիր: Տրայանոսի փորձը Հայաստանը Հռովմէական նահանգ դարձնելու: Սայեմոս, Սանատրուկ. Վաղարշ: Կարակալայի նոր փորձը Հայաստանը Հռովմէական նահանգ դարձնելու: Խոսքով Ա.:

Պարթևական պետութիւնը Ս. Եւ Բ. դարերում Քրիստոսի ծն. յետոյ. — Վարչական կազմակերպութիւնը, զօրքը, առևտուրը: Կրօնն ու գեղարուեստը: Հրէաների դերը Արշակունեաց պետութեան մէջ: Արշակունիների անկման պատճառները: Սասանեանների յաղթանակը պարսկաստանում և նրա անմիջական հետեանքները Հայաստանի համար: Հայաստանի գրաւումը Սասանեանների ձեռքով:

Հռովմայեցոց խառնուելու օրինակը. — Նոցա վերաբերմունքը դէպի հայոց թագաւորներն ու նախարարները: Փոքր Ասիայի ժողովուրդների վիճակը Հռովմէական կայսրութեան անմիջական իշխանութեան ներքոյ և զրա ազդեցութիւնը Հայոց ներքին կեանքի վրայ:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵՍՆ ՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տրդատ, Նրա դարձը Հայաստան: Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Քրիստոնէութեան տարածուելը Հայաստանում և պաշտօնական

կրօն դառնալը: Քրիստոնէութեան տարածման պատճառները ու հայոց կեանքի մէջ յառաջ բերած փոփոխութիւնները: Տրդատի յարաբերութիւնները Հռոմի հետ: Սկիւթացիների արշաւանքը: Նախարարների վերաբերմունքը դէպի նոր կրօնն ու հոգեւորականութիւնը: Տրդատի մահը:

Խոսքով Բ. Կոտակ: Վրթանէս կաթողիկոս: Ներքին խռովութիւններ: Մազգթաց արշաւանքը: Դուինի հիմնադրութիւնը: Սասանեանների քաղաքականութիւնը: Շապուհ Բ. և նրա կարգաւորութիւնները: Զրադաշտականութեան զարգացումը: Ազնուականութեան և հոգեւորականութեան դերը Սասանեան պետութեան մէջ:

Տիրան: Յուսիկ կաթողիկոս: Տիրանի ներքին և արտաքին քաղաքականութիւնը: Ընդհարում հոգեւորականութեան հետ: Գահից զրկուելը:

Արշակ: Նրա յարաբերութիւնները եկեղեցու և նախարարութիւնների հետ թագաւորութեան առաջին շրջանում: Այդ յարաբերութիւնների փոփոխութեան պատճառները: Վասակ Մամիկոնեան: Ներսէս Մեծ: Արշակի արտաքին քաղաքականութիւնն ու անկումը:

Պապ: Մուշեղ Մամիկոնեան: Բագաւանի ճակատամարտը: Ներքին ապստամբութիւնների զսպումը: Ներսէս Մեծի մահը: Պապի մահը:

Վարազդատ: Մուշեղ Մամիկոնեանի ծրագիրն ու մահը: Մանուէլ Մամիկոնեան: Արշակ և Վաղարշակ: Հայաստանի բաժանուիլը հռոմայեցոց ու պարսիկների մէջ:

Ե. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

ՊԱՐՍԻՑ ԲԱԺՆԻ ՀԱՅԵՐԸ

Խոսքով Գ.: Վռամշապուհ և տառերի դիւտի հասարակական նշանակութիւնը: Վերջին Արշակունիները: Արտաշէս վերջին: Արշակունեաց հարստութեան անկման պատճառները և հետեանքները:

Ներքին կեանքն Արշակունեաց թագաւորութեան շրջանում: Թագաւոր և պալատ: Գահաժառանգութիւն: Նախարարների ծա-

գումը, Տանուտէր և Սեպուհ: Նախարարների յարաբերութիւնը թագաւորի և ուրիշ նախարարների հետ: Նախարարների նիստ ու կացը: Գիւղացիք և քաղաքացիք: Հոգեւորականութիւնը և նորա յարաբերութիւններն ուրիշ դասակարգերի հետ: Թարգմանիչների և նոցա աշակերտների վերաբերմունքը դէպի ժամանակակից կեանքի զանազան երևոյթները, մասնաւորապէս դէպի թագաւորութեան անկումը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Առաջին մարզպաններ.— Մարզպանների իշխանութեան տարբերութիւնը թագաւորականից, վերաբերմունքը դէպի նախարարների տոհմական իրաւունքներն ու դէպի հոգեւորականութիւնը:

Սասանեանների քաղաքականութիւնը և. դաւում.— Կրօնական շարժումը Հայաստանում և Վրաստանում: Հայերի բռնած դիրքի կրօնական, տնտեսական և քաղաքական պատճառները: Առաջին շրջան.— Վարդան Մամիկոնեան և Վասակ Սիւնի: Աւարայրի ճակատամարտը: Հայաստանի վիճակը այդ ճակատամարտից յետոյ: Երկրորդ շրջան.— Վահան Մամիկոնեան: Նուարսակի դաշնադրութիւնը:

Հայաստանը Զ. դաւում.— Հայազգի և պարսիկ մարզպաններ, Խոսքով Ա. Նուշիրվանի ներքին կարգաւորութիւնները: Պարսկաստանի պետական շարժումը նորա ժամանակ: Խոսքով Բ.: Յոյն — Պարսկական կռիւները և հայերի բռնած դիրքն այդ կռիւների մէջ: (Գալլ Վահան): Հայերը Յունաց բաժնում: Կիւրապաղատութեան հաստատուիլը Հայաստանում: Բիւզանդական ազդեցութիւնը հայոց քաղաքակրթութեան վրայ: Քաղկեդոնական խնդիր. Վրաց եկեղեցու բաժանուիլը հայկականից և զորա քաղաքական հետեւանքները:

ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Արաբների առաջին աւելանքներն ու կռիւները Բիւզանդացոց հետ Հայաստանի համար.— Թէոդորոս Ռշտունու դաշնադրութիւնը: Առաջին վերակացունները: Արաբների վերաբերմունք դէպի

նախարարութիւնն ու հայ հոգեւորականութիւնը: Հայոց նախարար-
ներն ապստամբական փորձերը: Արասեանների քաղաքականու-
թիւնը: Նոցա վարչական եղանակը: Մութաւաքել ամիրապետի
կարգադրութիւնը: Իւսուֆի և արաբական պաշտօնեաների կո-
տորածը: Բուղայի արշաւանքը: Սմբատ Բագրատունի Ապլապա-
շայաստանի վիճակը Բուղայի արշաւանքից յետոյ:

Ներքին կեանքի հանգամանքներն արաբական վերակացունքի
կառավարութեան ժամանակ.—Վերակացու-ոստիկան: Արաբական
այլ պաշտօնեաները Հայաստանում: Ազնուականութիւն: Իշխանաց
իշխան: Սպարապետ: Հարկահաւաքութիւն: Զինուորական ծառա-
յութիւն: Հոգեւորականութիւն: Վաճառականութիւն և քաղաքացիք:
Արաբների ազդեցութիւնը հայոց քաղաքակրթութեան վրայ:

Արաբների իշխանութեան թուլանալը Հայաստանում և Իրա-
նում: Պարսկական աւանդութիւնների վերածնութիւնը: Գազնևեան
պետութեան հիմնարկութիւնը: Ատրպատական:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ

3. կարգ. — Կիթանմաններ՝ Կէտ.
4. կարգ. — Սմբակաւորներ՝ Սմբակաւորների վերջաւորութիւնները.

ա. Խնթակարգ. գուգասմբակաւորներ՝ Կով, խոզ, եղջերու, ուղտ.

բ. Խնթակարգ. անգուգասմբակաւորներ՝ ձի:

5. կարգ. — Կնճիթաւորներ՝ փիղ.
6. կարգ. — Կրծողներ՝ Մկիւռ, մուկ, նապաստակ:
7. կարգ. — Դիւթաթիչներ՝ Կատուազգիներ՝ կատու, վագր: Շնագլ՝ գինեթ, գայլ, շուն, արջ:
8. կարգ. — Տեմոտեաններ՝ փոկ,
9. կարգ. — Միջաօակներ՝ խլուրդ, ողնի:
10. կարգ. — Ձեռնաքիւեր՝ (Cheiroptera) չղջիկ.
11. կարգ. — Կապիկներ՝ Օրանգ-ուտանգ, Հորիլլա, Շիմպանզէ:

ԵՐԱԳԻՐ

Ֆ Ի Զ Ի Գ Ը Զ Ի ԵՆ Գ Ի Մ Ի Ը Զ Ի

Ն Պ Ա Տ Ա Կ Ը

Ֆիզիքան և քիմիան հիմնուելով փորձի վրայ զարգացնում են աշակերտի գգայարանները, սովորեցնում են աշակերտներին ճիշտ մտապատկերներից եզրակացութիւններ հանել, բացատրում են անօրգանական և օրգանական աշխարհում կատարուող երևոյթները և ուղղում են այն սխալ գաղափարները, որ կարող է աշակերտը կազմած լինել իր շրջապատող երևոյթները դիտելիս:

Սովորելով ֆիզիքական և քիմիական օրէնքները՝ աշակերտի համար միանգամայն պարզուում է կենդանիների և բոյսերի մէջ կատարուող պրոցէսների իմաստը, և կենսական պրոցէսները երևան են դալիս իրեն ֆիզիքական և քիմիական երևոյթներ:

Շնչառութիւնը, սննդառութիւնը, մարսողութիւնը, շարժումը առանց ֆիզիքայի և քիմիայի կը մնային անբացատրելի: Վերջապէս ֆիզիքան և քիմիան կարեւոր դեր են կատարում մարդու կեանքում: Նա ամեն քայլափոխում ընդհարում է այս կամ այն երևոյթի հետ, օգտուելով, կամ խոյս տալով նրանից: Բաւական է յիշել Էլեքտրականութեան, ջերմութեան և մեքենագիտութեան կիրառումը կեանքում: Այսպիսով ֆիզիքան և քիմիան ունին թէ կրթական և թէ գործնական նպատակ:

Բ Ա Յ Ա Տ Ը Ո Ի Թ Ի Ի Ն

Ֆիզիքան և քիմիան հիմնուած են անպայման փորձերի վրայ: Առանց փորձերի նրանք կը կորցնեն իրենց արժէքն ու հետաքրքրութիւնը:

Փորձերը պիտի լինեն պարզ և մատչելի: Աշակերտներն ամեն անգամ փորձից առաջ պիտի գիտենան փորձի նպատակը,

որպէսզի կարողանան հետեւել փորձին և տարբերեալ երկրորդականը հակառակը:

Նպատակայարմար է, որ աւելի պարզ փորձերը աշակերտներն իրենք կատարեն դասի ժամանակ. ինքնուրոյն աշխատանքները դիւրացնում են երևոյթի ըմբռնումը և ստեղծում են դասարանական լարուած տրամադրութիւն, որ անպայման նպաստում է առարկայի իւրացման: Այս վերաբերում է այն դպրոցներին, որոնք նիւթականի պատճառով անկարող են առանձին լաբորատորական աշխատանքներ ունենալու: Ուսուցիչը պէտք է օգտագործի աշակերտի փորձառութիւնը: Կան երևոյթներ, որոնք արդէն ծանօթ են աշակերտին կեանքից. այդպիսի դէպքերում աշակերտները բացատրում են ուսումնասիրուելիք երևոյթը, իսկ ուսուցիչը միայն ստուգում է:

Դասընթացքին բաւական նպաստում են վարժութիւնները. ուստի որոշ բաժին անցնելուց յետոյ պէտք է առաջարկել մի շարք խնդիրներ. վճռելու ժամանակ կարելի է թոյլ տալ օգտուել դասագրքից:

Բացի խնդիրներից ցանկալի են դանազան գիտական հարցերի մասին գրաւոր, տնային և դասարանական աշխատանքներ, որոնք կը սովորեցնեն աշակերտներին կենդրոնանալ որևէ նիւթի վրայ և մշակել համապատասխան ոճ:

Ի նկատի ունենալով դասերի թիւը և նիւթի մատչելիութիւնը, նպատակայարմար է ֆիզիքայի դասընթացքը բաժանել այսպէս.

Դ. դաս. 2 ժամով.—1. Մարմինների ընդհանուր յատկութիւնները: 2. Պարզ մեքենայագիտութիւն. 3. Հեղուկներ: 4. Դաշեր:

Ե. դաս. 3 ժամով.—1. Ջերմութիւն. Մագնիսականութիւն: 2. Ելեքտրականութիւն:

Զ. դաս. 2 ժամով.—1. Չափ: 2. Լոյս: 3. Բարդ մեքենագիտութիւն:

ԾՐԱԳԻՐ

Ֆ Ի Զ Ի Ք Ա Յ Ի

Դ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Ա. Ն Ե Ր Ա Ծ Ո Ի Թ Ի Ի Ն

1. Նիւթ կամ մատերիա: Ֆիզիքական կամ երկրաչափական մարմիններ: Երևոյթ: Ֆիզիքական և քիմիական երևոյթներ:

2. Մարմինների բնդիւնութիւնը յատկութիւնները.—տարածականութիւն, անանցելիութիւն, բաժանականութիւն, առաձգականութիւն, ծակոտկէնութիւն և ծանրութիւն: Երկարութեան և ծանրութեան չափեր (մետրական):

3. Մարմինների մասնաւոր յատկութիւններ:

4. Մարմինների մասսան, կշիռը եւ խտութիւնը:

5. Մարմինների տեսակարար կշիռը:

6. Ջերմութիւն. մարմինների ընդարձակուիլը ջերմութիւնից: Ջերմաչափեր—R, C, F և դրանց աստիճանների փոխադարձ վերաբերումը:

Բ. ՊԱՐԶ Մ Ե Ք Ե Ն Ա Յ Ա. Գ Ի Թ Ի Ի Ն

1. Շարժում: Դադար և շարժում: Իներցիա: Համաչափ և անհամաչափ շարժումներ: Արագութիւն: Արագացում: Համաչափ շարժման ֆորմուլա $S=vt$: Համեմատական շարժում:

2. Ուժեր: Ոյժ: Ոյժի ազդման կէտը, մեծութիւնը և ուղղութիւնը: Ուժի ազդման կէտի տեղափոխութիւնը: Ուժը և դիմադրութիւնը: Վայրկենապէս և անընդհատ ներգործող ուժեր: Հա-

ւասարագոր ոյժ: Մի ուղղութեամբ և հակառակ ուղղութեամբ ներգործող ուժերի գումարումը: Ուժերի վերլուծութիւնը: Զուգահեռական ուժերի ներգործութիւն: Զուգահեռական ուժերի գումարումն: Ուժերի զոյգ լծակներ Ա. և Բ. կարգի: Ճախարակներ. գաղափար աշխատանքի մասին:

3. Ծանրութիւն.—Երկրի ձգողական ուժը: Մարմինների ծանրութիւնը: Ծանրութեան ուժի ուղղութիւնը: Ծանրութեան կենդրոնը և նրա որոշման եղանակները: Մարմինների յենակէտը: Մարմինների հաւասարակշռութիւնը: Մարմինների անկումը օդի և դատարկութեան մէջ: Ծանրութեան ուժի չափելը: Լծակաւոր կամ հասարակ կշեռք: Տասնորդական կշեռք: Զսպանակաւոր կշիռ:

Գ. Հ Ե Ղ Ո Ի Կ Ն Ե Ր

Պասկալի Ա. օրէնքը: Զրաբաշխական մամուլ: Հեղուկների մակերեսի հորիզոնական դիրքը: Պասկալի Բ. օրէնքը: Սեղների անիւ: Միկնոյն և տարբեր հեղուկների հաւասարակշռութիւնը հաղորդակից անօթների մէջ: Արքիմեդի օրէնքը: Տեսակարար կշռի որոշումը: Մարմինների լողալը: Արէժօմետր կամ անօսրաչափ: Մազականութիւն: Օսմոս և Դիֆֆուզիա: Պլատօի փորձը: Հեղուկային հարթաչափ: Արտեզեան ջրհորներ:

Դ. Գ Ա Զ Ե Ր

Դաղերի յատկութիւնները: Դաղերի և օդի կշիռը: Պասկալի երկու օրէնքները: Արքիմեդի օրէնքը: Բարոսկոպ: Տարտիպելի փորձերը: Մթնոլորտի ճնշումը: Մթնոլորտի բարձրութիւնը: Սիֆոնաւոր և բաժակաւոր ծանրաչափեր: Մետաղեա ծանրաչափ: Օդաքնացութիւն: Բօլ և Մարիօտի օրէնքը: Դաղերի առաձգականութիւնը: Դաղերի փոխադարձ թափանցումն: Օդհան և օդմուղ մեքենաներ: Շատրուան դատարկութեան մէջ: Սիֆօն և Լիվեր: Ներոնի շատրուան: Զրհան և ջրմուղ մեքենաներ: Հրշէջ մեքենայ: Հասարակ և բարդ փութեր: Սրակիչ: Զրատոյզ դանդ:

Ե. Դ Ա Ս Ս Բ Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 3 դ ա ս .

Զ Ե Ր Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Պինդ մարմինների լայնացումը. հրաչափ. գծային և խորանարդ լայնացումը.

$$L = \frac{1}{100} \frac{100 - 1}{100} e. \quad l = l_0 (1 + Lt).$$

$$B = \frac{\sqrt{100 - V_0}}{100 \cdot \sqrt{0}} \cdot V = \sqrt{0} (1 + 30Lt).$$

Հեղուկների ընդարձակուիլը. ջրի առանձնայատուկ լայնացումը:

Գաղերի լայնացումը: Դէյ-Լիւսակի օրէնքը:

Մետաղեայ, maximum և minimum, սպիրտային ջերմաչափեր:

Զերմութեան տարածուիլը. ա) ջերմհաղորդութիւն, բ) կոնվէկցիա, գ) ճառագայթումն: Դէվիի լապտերը:

Զերմութեան քանակ: Զերմութեան միութիւն—կալորիա: Խառնուրդների միջին բարեխառնութիւն: Զանազան բարեխառնութեան ջրերի խառնուրդը: Տեսակարար ջերմութիւն: Կալորիմետր: Ռէյնիօի կալորիմետր: Սառցէ կալորիմետր: Հեղուկների և գազերի ջերմութիւնը:

Հալումն և պնդանալը: Հալման կէտը: Հալման թագուն: Ջերմութիւն: Մարմնի ծաւալի փոխուիլը հալման ժամանակ: Սառցի հալումը բարձր ճնշման տակ: Շոգիացում և եռումն բարձր ճնշման տակ: Պապինի կաթսան: Եռումն ցածր ճնշման տակ: Շոգիացման թագուն ջերմութիւնը: Բարեխառնութեան ցածրանալը գոլորշիանալիս:

Փաղեցեալ շոգի և նրա յատկութիւնները: Բացարձակ և համեմատական խոնաւութիւն: Ցօղակէտ: Սօսիտի և Աւզուտի խոնաւաչափեր:

Դաղերի հեղուկանալը և պնդանալը: Դաղերի և գոլորշիների խառնուրդը: Դալտոնի օրէնքը:

Մեքենայական շարժումից առաջացած ջերմութիւնը: Դա-

դափար ջերմութեան և աշխատանքի փոխադարձ յարաբերութեան մասին:

Շոգեմեքենաներ: Շոգեկաթսայ: Շոգեշարժ մեքենայ:

Մ Ա Գ Ն Ի Ս Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Բնական և արհեստական մագնիսներ: Բեռներ և անտառ-բեր գիծ: Բեռների փոխադարձ ներդրութիւնը: Կուլոնի օրէնքը: Մագնիսական դաշտ և սպեկտր: Մագնիսական ուժի գծերը: Մագնիսական ինդուկցիա: Մագնիսական էկրան: Մագնիսացման ձևերը:

Մագնիսի բաժանումը. մոլեկուլային մագնիսականութեան հիպոթեզ:

Նրկրի մագնիսականութիւնը. թեքումն և խոնարհումն:

Նրկրի մագնիսականութեան փոփոխուիլը: Պարա-և Դիա-մագնիսական մարմիններ:

Ե Լ Է Ք Տ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

1. Հիմնական փորձեր: Ելէքտրականութեան լաւ ու վատ հաղորդիչներ: Մեկուսացումն: Ելէքտրական ճօճանակ: Բացասական և դրական ելէքտրականութիւն: Ելէքտրականացած մարմինների փոխադարձ ներգործութիւնը: Ելէքտրական կայծ: Ելէքտրոսկոպ:

2. Ելէքտրականութեան բաշխումն: Ելէքտրական խտութիւն: Ելէքտրականութիւն ծայրերի վրայ:

3. Ելէքտրականութեան ներածումն: Ելէքտրոֆոր, ելէքտրոմետր: Ելէքտրական մեքենայ Հոլցի:

4. Ելէքտրական հաւասարակշռութիւնը: Ելէքտրական պոտենցիալ: Ուտացուցիչ: Լէյդենեան շիշ: Ելէքտրական մարտկոց: Ելէքտրական պարպում: Պարպիչ:

5. Ելէքտրական հոսանքը և նրա տարբերութիւնը ելէքտրոդական կայծից:

6. Գալվանիի փորձերը: Ելէքտրականացոյց ոյժ: Գալվանիի էլեմենտների բևեռացումը: Վոլտի սիւնը: Ելէքտրական հոսանքի ուժգնութիւնը և ուղղութիւնը:

7. Գալվանական էլեմենտները—Դանիելի, Բունզենի և Լեկան-

չէի: Էլէմէնտների զուգահեռական և յաջորդական միացումը: Ակումուլիատոր կամ հաւաքիչ:

8. Ելէքտրական հոսանքի ազդեցութիւնը մագնիտի վրայ: Ամպէրի փորձերը:

9. Գալվանոսկոպ: Գալվանոմետր: Գալվանական հոսանքի միութիւնները—ամպէր, վոլտ:

10. Գալվանական հոսանքի օրէնքները: Արտաքին և ներքին շղթաների դիմադրութիւնը: Մետաղեայ թելերի դիմադրութիւնը: Դիմադրութեան միութիւնը: Օմի օրէնքը:

11. Լոյսի և ջերմութեան առաջանալը ելէքտրական հոսանքի միջոցով: Ջաուլի և Լինցի օրէնքը: Վոլտեան աղեղը: Էդիսսոնի լամպերը:

12. Ելէքտրոլիզ և Գալվանոպլաստիկ:

13. Ելէքտրական հոսանք գազերի մէջ: Կրատի և Գէյլերի խողովակները: X ճառագայթները:

14. Ելէքտրոմագնիսականութիւն: Հոսանքի շուրջը առաջացած մագնիսական դաշտը: Ելէքտրոմագնիս: Ելէքտրական զանգ և հեռագիր (Մորզի): Սօլէնոիդ: Սօլէնոիդների փոխադարձ ազդեցութիւնը: Հոսանքների ելէքտրոմագնիսական ինդուկցիա. Լէնզի օրէնքը: Ռամկորֆի գործիքը: Հեռախօս: Անթել հեռագրի սկզբունքները: Դինամո-ելէքտրական և ելէքտրո-դինամի մեքենաներ: Գրամմի օդակը: Ելէքտրական էներգիա: Ջաուլ Ուատտ. Կիլո-Ուատտ: Ջերմութեան ելէքտրականութիւն փոխուիլը—Ջերմ-ելէքտրական հոսանքներ: Գաղափար թէորէայի և հիպոթեզի մասին:

Չ Ա Յ Ն

1. Չայնի ծագումը: Կամերտոն: Չայնի տարածուիլը օդի և դատարկութեան մէջ: Ծօճման ամպլիտուտ (լայնութիւնը): Ծօճման տևողութիւնը: Չայնի ալիքները: Ալիքի երկարութիւն: Տոն և աղմուկ: Տոնի բարձրութիւնը: Միաձայնութիւն: Չայնի ուժգնութիւնը: Չայնի արագութիւնը: Արձագանք: Չայնի կուտակումը: Չայնի ուժի փոփոխութեան պատճառները:

2. Ծօճումների չափիլը: Երաժշտական ձայնի յատկութիւնները—բարձրութիւն, զօրեղութիւն, տեմբր կամ բնոյթ: Սիրին (ալիքաչափ): Երաժշտական փուքսը: Լսելի ալիքների ամենաբարձր սահմանը: Երաժշտական ութնեակը: Հարմոնիա և դիսհարմոնիա:

(ներդաշնակութիւն և աններդաշնակութիւն)։ Լարերի ճօճումը։ Մոնախարդ (միալար)։ Հանգոյցներ և հանգուցաւոր գծերը։

3. Օդի շարժումը երաժշտական փողերի մէջ։ Երաժշտական գործիքների տեսակները։ Ձայնի ալիքների ինտերֆերնցիա։

4. Թիթեղների ճօճումները։

5. Ձայնի վերլուծութիւն։ Գրամմոֆոն։

6. Մարդու լսելիքի և ձայնի գործարանները։

2. ԴԱՍԱՐԱՆ

Շ ա բ ա թ ա կ ա ն 2 դ ա ս .

Լ Ո Յ Ս

1. Լուսատու մարմինները։ Լոյսի տարածուիլը միատեսակ միջավայրում։ Ստուեր և կիսաստուեր։ Անցքի միջով անցնող ճառագայթներից ասաջացած երևոյթները։ Լոյսի արագութիւնը։

2. Լուսաչափութիւն։ Լոյսի ուժգնութիւնը։ Լուսաչափութեան օրէնքները։ Ռումֆորդի և Բունզենի լուսաչափները։

3. Լոյսի անդրադարձումը։ Հարթ հայելիներ։ Լուսատու կէտի պատկերացումը հարթ հայելիների մէջ։ Կոր հայելիներ։ Տեսողութեան գլխաւոր և կողմնակի առանցքները։ Հայելիների կիզակէտը։ Իսկական և կարծեցեալ ֆօկուսներ։ Տեսողութեան կողմնակի առանցքի վրայ գտնուող ֆօկուսը։ Գոգաւոր և ուռուցիկ հայելիների գլխաւոր ֆօկուսները։ Ֆօկուսի գլխաւոր տեղափոխութիւնը։ Լծորդուած կէտեր։ Պատկերացումը գոգաւոր և ուռուցիկ հայելիների մէջ։

4. Լոյսի ճառագայթների բեկումը։ Սահմանային անկիւն։ Ծառագայթի բեկումից առաջացած երևոյթները։ Ներքին լիակատար անդրադարձում։ Լոյսի բեկբեկումը։ Նռանկիւն պրիզմա և Լոյսի բեկբեկումը նորա մէջ։

5. Լուսաբանական ապակիներ։ Ծառագայթներ հաւաքող ապակիներ—երկու-ուռուցիկ, հարթուռուցիկ և գոգաւոր ուռուցիկ։ Ծառագայթացիւր ապակիներ—երկգոգաւոր, հարթգոգաւոր և ուռուցիկ գոգաւոր։ Գլխաւոր և լծորդական ֆօկուսներ։ Ծառագայթների ընթացքը երկուռուցիկ և երկգոգաւոր ապակիների մէջ։ Ֆօկուսի տեղափոխութիւնը։ Կողմնակի առանցք։ Պատկերացում։

$$\text{Ֆորմուլա} - \frac{1}{d} + \frac{1}{f} = \frac{1}{F}$$

6. Լոյսի վերլուծութիւնը։ Գունաւոր ճառագայթներ, նրանց խառնուրդը և բեկումը։ Լրացուցիչ գունաւոր ճառագայթներ։ Մարմինների գոյնը ըստ Նիւտոնի։ Ֆրաունհոֆերի սև գծերը։ Ուլտրա—մանուշակագոյն և Ինֆրա—կարմիր ճառագայթները։ Սպեկտր։ Շիկացած մարմինների սպեկտրը։ Գունաւոր ճառագայթների կլանումը։ Շիկացած գազերի և գոլորշիների սպեկտրը։ Կլանող և արձակող ճառագայթների յարաբերութիւնը։ Ֆոսֆորէսենցիա և ֆլուատէսենցիա։

7. Տեսողութեան զգացողութիւնը։ Աչքի յարմարուիլը։ Ամենալաւ տեսողութեան սահմանը։ Հեռատեսութիւն և կարճատեսութիւն։ Ստերոսկոպ։ Սինեմատոգրաֆ։

8. Լուսաբանական գործիքներ։ Ուշորացոյց։ Մանրացոյց, աստղադիտակ, մոզական լապտեր։

Լուսանկարչական գործիք, լուսանկարչութիւն։

Բ Ա Ր Դ Մ Ե Ք Ե Ն Ա Յ Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն

1. Ուղղադիծ և կորագիծ, համաչափ և անհամաչափ շարժումներ։ Անհամաչափ շարժման արագութիւնը։ Արագացում։ Ատվուդի մեքենան։ Համաչափ արագացող շարժումէ ու նրա ֆորմուլան— $S=bt+at^2$ ։

2. Մարմինների ազատ անկումը։

3. Վեր նետուած մարմնի շարժումը։

4. Կենդրոնաձիգ և կենդրոնախոյս ուժեր։

5. Մաթեմատիկական և ֆիզիքական ճօճանակներ։ Ծօճման ժամանակամիջոցը (ամպլիտուտ)։ Ծօճման օրէնքները=առանց ֆորմուլայի։

6. Ուժի աշխատանքը և կենդրոնի ուժը։ Էներգիայի տեսակները—քիմիական, կէքտրական և այլն։

7. Հասարակ մեքենաներ։ Պոտուակ։ Թեք հարթութիւն։ Ատամաւոր անիւներ։ Սիւլ։

ԾՐԱԳԻՐ

Տ Ի Ե Զ Ե Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Զ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Տիեզերագրութեան առարկան: Ի՞նչ են նկատում երկնակամարը դիտելիս (արեգակի ծագումը և մայր մտնելը, արշալոյս և վերջալոյս, աստղեր, համաստեղութիւններ, մոլորակներ, գիսաւորներ և ասուպներ—վայր ընկնող աստղեր):

Արեգակի և երկնակամարի պտոյտը երկրի շուրջը: Էկլիպտիկա: Տօմար—Յուլիական և Գրիգորեան:

Երկնակամարի պտոյտը թուացող երևոյթ է: Երկրի շարժողութիւնը: Երկրագնտի բեռները: Հասարակածը և միջօրեականներ: Երկրի ձևը: Երկրագնտի պտտուելու ապացոյցները: Երկրագնտի պտտուելն արեգակի շուրջը: Տարուայ եղանակներ և կլիմայական գօտիներ:

Լուսնի պտտուելը երկրի շուրջը. Լուսնի ֆազերը. սինօդիկ և սիդերիկ ամիս, Լուսնի օրբիտան:

Լուսնի և արեգակի խաւարումներ:

Մոլորակների շարժումը: Պտղմէոսի և Կոպերնիկոսի սիստեմները: Կէպլերի օրէնքները: Շարժման հիմնական օրէնքները: Տիեզերական շարժման օրէնքը:

Մոլորակի խոտորումը: Մակընթացութիւն և տեղատուութիւն:

Արեգակնային սիստեմ:

Արեգակ. արեգակի շարժումը. արեգակի բծերը: Արեգակի սպեկտրը. արեգակի ջերմութիւնն ու էներգիա. թագ և պրօտուբերաններ:

Մոլորակներ և նրանց արբանեակները (ընդհանուր համառօտ ակնարկ):

Գիսաւորներ և վայր ընկնող աստղեր (ասուպներ):

Աստղեր, նրանց քանակութիւնն ու փայլը. նրանց հեռաւորութիւնը. աստղային հաւաքումներ. յարգագողի ճանապարհը: Տիեզերքի կազմը:



ԾՐԱԳԻՐ

Բ Ն Ա Լ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ե Ա Ն

(Ք Ի Մ Ի Ը Յ Ի)

(Նպատակի մասին տես բնագիտութեան բաժինը)

Բ Ա Յ Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Բնալուծութեան դասընթացը հիմնուած է ատոմականութեան վրայ: Զրի վերլուծութեան և բաղադրութեան (անալիզի և սինթէզի) միջոցով աշակերտները ծանօթանում են բնալուծութեան օրէնքների հետ, իսկ ծծմբի և մի որևէ (ալկալային) մետաղի միջոցով բնալուծական բաղադրութիւնների թթուտային և ալկալային յատկութիւնների հետ:

Ատոմականութիւն ընդունելով ըստ ջրածնի՝ մետաղանմանները աւանդում են խմբերով կանգ առնելով խմբի միայն կարևոր անդամի և նորա թթուութի վրայ:

Մետաղները նոյնպէս պէտք է անցնել խմբերով: Միավալէնտ մետաղներից յետոյ գաղափար է տրւում Մենդէլէևի սիստեմի մասին:

Մնացած մետաղների մասին տրւում է ընդհանուր գաղափար, կանգ առնելով գլխաւորապէս նրանց ստանալու և տուած կարևոր աղբրի վրայ, որովհետև յատկացրած ժամերը հնարաւորութիւն չեն տալ անցնելու կազմական (օրգանական) բնալուծութեան հիմունքները, որի անհրաժեշտութիւնը խիստ ղգալի է կեանքում:

Ե. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Համասեռ և տարասեռ նիւթեր: Բիւրեղաւոր և անկերպարան (ամորֆ) նիւթեր: Բնալուծական երկոյթներ:

Ջուր: Ջրի երեք վիճակը: Լուծուածք: Բնական ջուր: Ջրի թորելը և քամելը: Ջրի տարրալուծելը ելէքտրական հոսանքով: Վերլուծութիւն և համադրութիւն (անալիզ և սինթեզ):

Պարզ (մեքանիկական) խառնուրդ և բնալուծական բաղադրութիւն: Նիւթի պահպանման օրէնքը:

Կշիռների որոշ յարաբերութեան օրէնքը: Պարզ և բարդ կամ բաղադրեալ նիւթեր: Ատոմական տեսութիւն, ատոմական քաշ: Բնալուծական նշաններ և բանաձևեր (ֆորմուլա):

Ծանօթութիւն մետաղների և մետաղակերպերի (մետալօիտների) մասին (բնագիտական յատկութիւնները):

Թթուածին: Տարածումն: Ստանալը: Բնագիտական յատկութիւնները: Բնալուծական յատկութիւնները: Արագ և դանդաղ այրումն: Սքսիտացում, օքսիտներ: Շնչառութիւն: Բնալուծական ազդակցութիւն: Օդոն: Ջրածին: Ստանալը: Ջրածնի այրումն=ջուր: Ջրածնի գերօքսիդ:

Բաղմապատիկ յարաբերութեան օրէնք:

Ծծումբ: Տարածումութիւն: Ստանալը: Բնագիտական յատկութիւնները: Բնալուծական յատկութիւնները: Ծծմբային օքսիդ (SO_2): Ծծմբային թթուութիւն: Ծծմբական թթուութիւն ազդեցութիւնը մետաղների վրայ: Աղեր և թթուութիւն: Ալկալի: Չեղոքացումն:

Մ Ե Տ Ա Ղ Ն Ե Ր Ե Ի Մ Ե Տ Ա Լ Օ Ի Տ Ն Ե Ր

Ա. Քլորի խումբը: Քլորի բնագիտական և բնալուծական յատկութիւնները: Քլոր-ջրածնական կամ աղային թթուութիւն: Սովորական աղ: Միւս անդամների (I, Br) գործնական նշանակութիւնը: Ոյժի (էներգիայի) ուղղումն ատոմական քաշի մեծանալուն հետ:

Վ Ա Լ Ե Ն Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Բ. Երկվալենտ մետաղակերպեր—թթուածին և ծծումբ:

Գ. Եռավալենտ մետաղակերպեր—օդ. կազմութիւնը: Բորա-կածին ստանալը օդից: Բորականի բնալուծական և բնագիտական յատկութիւնները: Բորակի թթուութիւն: Անուշադրի (ամֆիակ), ոգի: Ծաւալների որոշ յարաբերութեան օրէնքը: Բորականի նշանակութիւնը բնութեան մէջ: Բորակացումն (նիտրոֆիկացիա):

Լուսածին, մկնդեղ. լուցիկ:

Դ. Քառավալենտ մետաղակերպեր: Ածխածին: Ածխածիւթութեան գազ: Ածխածիւթութիւն: Ածխածիւթութեան գազի առաջնալը և տարրալուծութիւնը բնութեան մէջ: Ածխածնի միացումը ջրածնի հետ: Կազմական (օրգանական) նիւթեր:

Քարածուխի առաջնալը:

Ոյժի (էներգիայի) պահպանման օրէնքը. քիմիական էներգիա: Սիլիցիում, գայլախազ, ապակի:

Մ Ե Տ Ա Ղ Ն Ե Ր

Միավալենտ մետաղներ: Կալիոն և նատրոն: Դրանց անցած թթուութիւնների հետ կազմած կարեւոր աղերը: Բոցի գունաւորումը: Մէնդէլեւի սխեմա:

Երկվալենտ մետաղներ: Կալցիոն. կրաքար. կիր: Կալցիոնի խմբի միւս անդամները (Sr, Ba) շատ համառօտ:

Պղինձ, սնդիկ, ցինկ, արծաթ, ոսկի, երկաթ, ալիւմինիոն: Սոցա ստանալը, ֆիզիքական յատկութիւնները և կարեւոր գործնական նշանակութիւնը ունեցող բաղադրութիւնները:

Օ Ր Գ Ա Ն Ա Կ Ա Ն Ք Ի Մ Ի Ա

Ածխաջրածիններ. ճահճային գազ: Նաւթ: Գաղափար ալքոհոլների մասին: Գինու ոգու (ալքոհոլի) ստանալը և յատկութիւնները: Գաղափար կազմական թթուութիւնների մասին: Քաղախի թթուութիւն: Գաղափար ճարպերի մասին: Սապոնի ստանալը: Ածխաջրեր, շաքար, օսլա, փայտանիւթ. դոցա յատկութիւնները: Թմորումն: Գաղափար սպիտակուցային նիւթերի մասին:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ, ԲՆԱԽՍՍՈՒԹԵԱՆ ԵՒ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Զ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 3 դաս.

Ներածութիւն: Բջիջի մորֆոլոգիական և բնալուծական կազմը և նորա մէջ տեղի ունեցող կենսական երևոյթները:

Հիւսուածքներ՝ մառային (էպիտելիան), միաւորող, մկանային և նեարդային: Դոցա կազմը և գլխաւոր յատկութիւնները:

Արիւն, նորա բաղադրութիւնը և յատկութիւնները: Մարդու մարմնի կազմութեան ընդհանուր կարգաւորութիւնը (պլանը) և գործարանների համակարգութիւնը:

Կմախքը և նորա գլխաւոր մասերը: Ոսկրի ձևն ու կազմութիւնը: Ոսկրամաշկ և ոսկրածածկ: Դոցա դերը: Ոսկրների յօդաւորութիւն:

Մկաններ, կմախքի մկանների կազմութիւնը, նոցա ձևը և միացումը ոսկրներին: Մկանների կծկումն, մկանի ոյժը, մկանի աշխատանքը: Մարդու շարժման զանազան ձևեր: Մկանի մաշը, դիակի փայտացումն: Կմախքի և մկանների անկանոն զարգացման պատճառները և մարմնամարդութեան նշանակութիւնը:

Արիւն, նորա բաղադրիչ մասերը և դերը: Արեան շրջանառութեան գործարաններ: Սրտի և արեան անոթների կազմութիւնը: Գլխաւոր զարկերակները և երակները: Սրտի գործողութիւնը: Արեան հոսանքն անոթների մէջ: Արեան ճնշումը և նորա

հոսանքի արագութիւնը: Զարկ: Սրտի և անոթների թուլացում (իներւացիան):

Աւիշ: Աւշային անոթներ և դեղձեր: Աւիշի հոսանքը անոթներով: Աւիշի դերը:

Վարակիչ հիւանդութիւններ և մարմնակազմի մրցութիւնը դոցա դէմ: Մարդու մրցումը վարակիչ հիւանդութիւնների դէմ:

Շնչառութեան գործարաններ: Թոքերի օդատար ուղիների կազմութիւնը: Շնչառութեան յօրինուածքը (մեխանիզմը) և բնալուծութիւնը: Ներշնչած և արտաշնչած օդի քանակութիւնը: Շնչառութեան թուլացումն: Շնչառութիւն մաշկի միջոցով:

Մանդառութեան գործարաններ: Բերանի խոռոչը, ատամների կազմութիւնը և նոցա փոփոխուիլը: Մանդառութեան գործարանի անդամագիտական (անատոմիական) կազմութիւնը:

Կերակրային նիւթեր: Բուսական և կենդանական ուտելիքներ: Գլխաւոր կերակրային նիւթերի բաղադրութիւնը: Թքագեղձեր, թքի գործողութիւնը կերակրի վրայ: Կուլ տալը:

Ստամոքս: Ստամոքսահիւթ և նորա ներգործութիւնը կերակրի վրայ: Ենթաստամոքսային դեղձը և նորա նիւթի ներգործութիւնը կերակրի վրայ: Աղիքահիւթը և նորա դերը:

Լեարդ, Լեղին և նորա դերը մարսողութեան գործում: Ներծրծումն: Աղիքի պտուղների դերը: Նիւթերի փոխանակութիւնը մարմնակազմի (օրգանիզմի) մէջ և լեարդի դերն այդ գործում:

Կենդանական ջերմութիւն: Մարմնի ջերմութիւնը: Մարմնի ջերմութեան կարգաւորումն:

Արտաթորութիւնների գործարաններ, երկամուկների կազմութիւնը: Մէզ: Նորա բաղադրութիւնը և յատկութիւնը: Մէզի գոյանալու յօրինուածքը (մեխանիզմը): Որտեղ են գոյանում և արտադրում մէզի բաղադրիչ մասերը:

Մաշկի կազմութիւնը: Մաշկը որպէս արտաթորութեան գործարան: Մաշկը որպէս պաշտպանողական գործարան: Մազեր, եղունգներ:

Նեարդային սխտեմ: Կենդրոնական նեարդային սխտեմ: Զգացող, շարժող և խառն նեարդներ: Նեարդային առանցքի գլխաւոր յատկութիւնները: Գրգռի տեղափոխութեան արագութիւնը: Կենդրոնական նեարդային սխտեմի անդամագիտական (անատոմիական) և հիւսուածարանական (հիստոլոգիական) կազմութիւնը: Մոխրագոյն և սպիտակ նիւթ: Ողնուղեղ, որպէս անդրադարձումների (րէֆլէքսների) կենդրոն և որպէս գրգռների հաղորդիչ:

Երկայն ուղիղի, փոքր ուղեղի, տեղական ուսուցիչների և քառաբլթակի գործողութիւնները:

Մեծ ուղեղը, որպէս գիտակցական զգացումների կենդրոն և կեանքի մղումների (իմպուլսների) տեղ: Մեծ ուղեղի կիսագնդերի արգելող դերը:

Նեարդային համակարգութեան (սիստեմի) յոգնածութիւնը: Համակրական նեարդային համակարգութեան (սիստեմի) կազմութիւնը և գործողութիւնը:

Զգայարաններ: Աչքի կազմութիւնը: Լոյսի բեկումը աչքի մէջ: Յարմարաւորումն (ակկոմոդացիա): Աչքի թերութիւնները՝ կարճատեսութիւն և հեռատեսութիւն: Գոյների իւրացումը: Տեսողութիւն երկու աչքով: Աչքի պաշտպանողական գործարանները:

Լսողութեան զգայարանի կազմութիւնը: Նորա տարրեր մասերի նշանակութիւնը և ձայնի գրգիռների ընդունելը:

Ճաշակի և հոտառութեան զգայարանների կազմութիւնը և գործողութիւնը:

Մաշկը որպէս շօշափելիաց զգայարան:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌԱՐԱՆՆԵՐԻ

Բ Ա Յ Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հոգեբանութեան նպատակը պէտք է լինի աշակերտներին ծանօթացնել անհատ մարդու հոգեկան ընթացքների (պրոցեսների) հետ, դադարաւոր տալ նոցա մանուկների հոգեկան զարգացման ընթացքի մասին և նախապատրաստել աշակերտներին՝ մանկավարժական սկզբունքները դիտակցաբար իւրացնելու:

Ընդհանուր մանկավարժութեան և ուսուցման արուեստի (դիտակտիկայի) նպատակը պէտք է լինի՝ ծանօթացնել աշակերտներին դաստիարակութեան և դասաւանդման սկզբունքներին, իսկ մեթոդիկան մասնաւորապէս պէտք է առաջնորդ հանդիսանայ ապագայ ուսուցիչներին՝ ծխական դպրոցներում աւանդուող առարկաներն ուսուցանելու լաւագոյն եղանակները գործադրելու:

Բուն մանկավարժական տարրերն ըստ իրենց էութեան պէտք է աւանդուեն այսպէս. նախ աշակերտներին պէտք է ծանօթացնել մանկավարժական դիտութեան սկզբունքներին (ընդհանուր մանկավարժութիւն), յետոյ՝ դաստիարակութեան էութեան և ապա թէ՛ անցնել առարկաների աւանդման եղանակի (մեթոդիկային) և գործնական պարապմունքներին:

Սակայն այն հանգամանքը, որ բոլոր մանկավարժական տարրերը (բացի հոգեբանութիւնից) ծրագրով զետեղուած են միայն վերջին, է. դասարանում, բոլորն էլ պէտք է աւանդուեն զուգընթացաբար: Այս հանգամանքներում, որպէսզի փորձնական դասերն ըստ հնարաւորութեան շուտ սկսուեն, սկստեմբեր ամսում բոլոր դասերը պէտք է յատկացնել միայն ընդհանուր դիտակտիկայի այն մասերին, որոնք անմիջական կապ ունեն դասաւան-

դուժեան հետ (ծրագրով՝ սկզբից մինչև «Դիսցիպլինա» հատուածը) և ապա մի գլխաւոր առարկայի (հայոց լեզուի) մեթոդիկային, որպէսզի գոնէ հոկտեմբեր ամսից սկսուեն փորձնական դասերը: Մինչև փորձնական տարին սկսելը աշակերտները վարժոցում ունկնդիր կլինեն միայն հայոց լեզուի դասերին (շաբաթական 1—2 ժամ): Այնուհետև հոկտեմբեր ամսից կը սկսուի միւս մասնական վարժական առարկաների զուգընթաց աւանդումը:

Գործնական պարապմունքները պէտք է կազմակերպուեն հետեւեալ կերպով. շաբաթական 7 ժամից մէկ ժամը աշակերտները պէտք է վարժոցում ունկնդիր լինեն վարժոցի ուսուցչի դասերին, երեք ժամ փորձնական դաս պէտք է տան աշակերտները հերթով և երեք ժամ էլ պէտք է նուիրուի փորձնական դասերի քննադատութեանը: Աշակերտներից մէկը պէտք է գրաւոր մանրամասն քննադատութիւն ներկայացնէ, իսկ միւսները պէտք է անեն իրենց դիտողութիւնները: Թէ փորձնական դասերին և թէ քննադատութեան միջոցին ներկայ պէտք է լինի ամբողջ դասարանը և մեթոդիկայի ուսուցիչը:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Հ Ո Գ Ե Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Զ. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն Յ դ ա ս .

- Հոգեբանութեան որոշումը և նշանակութիւնը:
- Հոգեբանական եղանակներ (մեթոդներ):
- Հոգեբանութեան ուրիշ գիտութիւնների հետ ունեցած յարաբերութիւնը:
- Հոգեբանական ուղղութիւններ:
- Մարմնի և հոգու փոխադարձ յարաբերութիւնը:
- Նեարդային համակարգութիւն:
- Զգայութիւն:
- Մտապատրանք (իլլիւզիա) և ցնորք (հալլեցինացիա):
- Զգայաւորաններ (տեսողական, լսողական, շօշափելիքի, հոտոտելիքի, ճաշակելիքի զգայութիւններ):
- Մտապատկեր:
- Զուգորդում և տեսակներ:
- Իւրացում (ապերցեպցիա):
- Յիշողութիւն:
- Երեւակայութիւն:
- Գաղափար. գաղափար և լեզու:
- Դատողութիւն — եզրակացութիւն:
- Մտածողութիւն:
- Ուշադրութիւն:
- Զգացմունքներ. (բարոյական, գեղարուեստական, կրօնական զգացմունքներ):
- Անդրադարձ, ինքնաբեր (ռէֆլէկս, աւտոմատ) շարժումներ և բնագր:

Կամք. (կամքի զարգացումը, ուժը և ազատութեան խնդիրը):
«Ես»-ի գաղափար:
Խառնուածք (տեմպերամենտ) և բնաւորութիւն:
Երազ. հիպնոտիզմ:

Մ Ա Ն Կ Ա Ն Հ Ո Գ Ե Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Մանկան հոգու զարգացման աստիճանները մինչև սեռական
շրջան:

Սեռական կեանքի առաջին և երկրորդ շրջանը: Պատանու
և երիտասարդի հոգեբանութիւն: Դպրոցական տիպեր:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ը Ն Դ Ն Ա Ն Ո Ւ Ր Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ա Ե Ն

Ի. Դ Ա Ս Ս Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն $\frac{11}{4+7}$ դ ա ս .

Մանկավարժութեան ընդհանուր նպատակը. տեսական և
գործնական մանկավարժութիւն: Մանկավարժութեան յարաբե-
րութիւնը այլ դիտութիւնների հետ:

Մանկավարժական մեթոդներ (էքսպերիմենտալ ուղղութիւն):
Անհատական և հասարակական (սոցիալական) մանկավար-
ժութիւն:

Մանկավարժութեան ստորաբաժանումը:

Մանկավարժութեան ոյժը և կարողութեան սահմանները:

Դաստիարակութեան նպատակը: Ընտանեկան և դպրոցական
դաստիարակութիւն: Ֆիզիքական կրթութիւն:

Մտաւոր դաստիարակութիւն և տեսակները:

Զգացմունքների դաստիարակութիւն և տեսակները:

Բարոյական դաստիարակութիւն և կամքի կրթութիւն:

Աշխատանքի սկզբունքը ուսուցման և դաստիարակութեան
մէջ:

Դաստիարակչական հիմնական ձևերի պատմութիւնը:

Մանկավարժական գլխաւոր սխառեմների պատմութիւնը
(Կոմենիւս, Պեստալոցցի, Ռուսսօ, Հերբարտ, Ֆրէօբէլ):

Դ Ի Տ Ա Կ Տ Ի Կ Ա

Դասաւանդման ընդհանուր նպատակը. Դպրոցական ծրագիր-
ա. Նիւթերի ընտրութեան հիմնական սկզբունքներ, համա-
կենդրոն շրջաններ և կենդրոնացում:

բ. Հումանիտար և ոչալական կրթութիւն:

գ. Դասարաշխման առարկայական և դասարանական սխառեմ-
ա. Հայոց եկ. Ծխական դպրոցների ծրագիրը:

Մեթոդի անհրաժեշտութիւնը դասաւանդման ժամանակ:

Հերբարտ-Յիլլերեան ձևական աստիճաններ:

Դիտակտիկայի հիմունքները:

Դասական դման մեթոդներ՝ վերլուծութիւն (անալիզ), համադրութիւն (սինթէզ), վերացում (աբստրակցիա), մասնաւորման մեթոդ (դիտերմինացիա): Ներածութիւն (ինդուկցիա), մակածութիւն (դետուկցիա): Դասական դման պատմողական եղանակ: Հարց և պատասխան:

Դ Ի Ս Յ Ի Պ Լ Ի Ն Ա

ա. Կարգապահութիւն.

բ. Պատիժներ.

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

ա. Դպրոցական զրօսանքներ և ճանապարհորդութիւններ:

բ. Աշակերտական միութիւններ.

գ. Դպրոցական տօներ և հանդէսներ.

դ. Աշակերտական խաղեր:

Դ Պ Ր Ո Յ Ի Տ Ի Պ Ե Ր

ա. Մանկապարտէզ.

բ. Տարրական դպրոցներ.

գ. Միջնակարգ դպրոցներ.

դ. Բարձրագոյն դպրոցներ.

Հայոց Եկ. Ծխական դպրոցներ, Թեմական դպրոցներ և Ճեմարան (ծրագիր, կանոնադրութիւն և ներկայ վիճակը):


Դպրոցական շէնք և հաստատութիւններ (Թանգարան, աշխատանոց (լաբորատորիա), սլարտէզ—բուսաբանական և կենդանաբանական):

Կահաւորում.

Դպրոցական պիտոյքներ:

Մ Ե Թ Ո Դ Ի Կ Ա

Ծխական դպրոցներում աւանդուող բոլոր առարկաների աւանդման եղանակները (մեթոդիկաները):



ԾՐԱԳԻՐ

Ե Ր Ա Ժ Շ Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

(Ե Ր Գ Ե Ց Ո Ղ Ո Ւ Թ Ե Ը Ն Ե Ի Չ Ը Ց Ն Ը Գ Ր Ո Ւ Թ Ե Ը Ն)

Բ Ա Ց Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Երաժշտութեան այս ծրագիրը իրագործելիս պէտք է ի նկատի ունենալ, որ տեսականի ուսմունքը նպատակ չէ, այլ միջոց երգեցողութիւնը խաղերով (նօտաներով) շարունակելու համար:

Զբաղմունքի գլխաւոր նիւթը կենդանի երգը պիտի լինի, որը կրթում է աշակերտի երաժշտական ճաշակը, միևնոյն ժամանակ տալով նորան և նոտաներով երգելու որոշ աստիճանի վարժութիւն, պատրաստութիւն: Զոր վարժութիւններ թոյլատրելի են միայն այն չափով, որ չափով որ հարկաւոր է մի նոր կանոն բացատրելու գրատախտակի վրայ:

Գերադասելին հայ դպրոցում պիտի լինի անշուշտ ամենից առաջ հայ ժողովրդական և ազգային երգը և ապա միայն օտարը:

Ա. Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն Յ դ ա ս.

Տեսական.—Երաժշտական ձայն. նորա յատկութիւնները՝ բարձրութիւն, տեղութիւն, ոյժ և գոյն:—Ձայնաշար (եօթը հիմնական ձայները), ութնեակ (օկտաւ), ձայներանգ (գամմա). նօտային սիստեմ. օժանդակ գծիկներ, սօլի բանալի. փոքր, առաջին, երկրորդ և երրորդ ութնեակների գրութեանց տեղերը:—Գրութեան կրճատ ձևեր՝ reprise, Ա. և Բ. վերջաւորութիւն (Volta I և II):

Տեղորոշեան նշանները. կէտ, կէտով կազմուող տեղորոշիւնները. զիգո, սինկոպ. տրիօլ' (ի տեղեկութիւն՝ դուօլ', քվարտոլ' և այլն): Տակտ. պակասաւոր տակտ, նախատակտ, տակտի շեշտուած և անշեշտ մասերը:—Չափ. պարզ և բարդ չափեր՝ $2/2$, $2/4$, $3/2$, $3/4$, $5/8$, $4/4$, $4/8$, $6/4$, և $6/8$. չափ տալու ձևերը:

Կէս և ամբողջ տօներ. փոփոխիչներ՝ դիեզ, բէմօլ' և բէքառ (ի տեղեկութիւն դուբլ' դիեզնիւ և դուբլ' բէմօլ'ներ):

Մաժօր և մինօր դամմա. դօ, սօլ', ֆա մաժօր և լ'եա, մի, բէ մինօր դամմաները:

Գործնական. — Մանկական երգեր՝ միաձայն, թուով 20-ից ոչ պակաս, զրուած դօ, սօլ', ֆա մաժօր և լ'եա, մի, բէ մինօր դամմաներով:

Չայնագրութեան (թելագրութեան) բանաւոր ու գրաւոր վարժութիւններ՝ անցած երգերին համապատասխան:

Բ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Տեսական. — Ինտրիլաներ, նոցա անունները, տեսակները. կօնսօնանս և դիսսօնանս. դիատօնիկ դիսսօնանսների լուծումը:

Տեմպօ (արագութիւն)՝ *largo*, *andante*, *moderato* և *allegro*: *Zenuto*, *ritenuto*. Ֆերմատօ: Մենցելի մետրօնօմը:

Էքսպրեսիօն (ոյժ)՝ պիանօ, պիանիսսիմօ (P, PP), ֆօռտէ, ֆօռտիսսիմօ (F, FF), *crescendo*, *decrescendo*, *mf*, *mp*, *sf*:

Արտիկուլասիօն՝ լիգատօ, ստակկատօ, պօստամօնտօ:

Մելիսմներ՝ ֆօրշլալ (սահում և ընդհարում), ի տեղեկութիւն գրուպպետօ, տրել, մօրզան:

Երկու, երեք դիեզ և բէմօլ' ունեցող մաժօր և մինօր դամմաներ: Մելօդիկ և հարմօնիկ մաժօր և մինօր դամմաներ:

Գործնական. — Մանկական և պատանեկական երգեր՝ միաձայն և երկձայն, թուով 15-ից ոչ պակաս, զրուած երկու, երեք դիեզ և բէմօլ' ունեցող մաժօր և մինօր դամմաներով:

Չայնագրութեան (թելագրութեան) գրաւոր վարժութիւններ անցած երգերին համապատասխան:

Գ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

Տեսական. — Դիփինտային շրջան. — ֆա-ի բանալի. կօնտրօկ-տուի, մեծ օկտաւի և փոքր օկտաւի գրութեանց տեղերը: — Տրանսպօզիցիա տարրեր բանալիներով և դամմաներով:

Հայկական ձայնագրութիւն. խաղերը, տեղորոշեան նշանները. կիսվեր և կիսվար: — Ութն ձայն եղանակները և նոցա դարձուածքները, դոցա վերլուծութիւնը: — Փոխադրութիւն հայկականից եւրոպական: (ի տեղեկութիւն յունական, լատինական, նէւմային, տառային և թուանշանական սիստեմների մասին):

Գործնական. — Պատանեկական և աւելի լուրջ երգեր՝ երկձայն և եռաձայն, զրուած նախորդ տարիներում անցած դամմաներով և ֆա-ի բանալիով:

Իսկ հայկական ձայնանիշներով երգել եկեղեցական երաժշտութիւնից վերոյիշեալ ութ ձայները և դարձուածքները բնորոշող հոգեւոր երգերից և շարականներից:

Չայնագրութեան (թելագրութեան) գրաւոր վարժութիւններ անցած երգերին համապատասխան:

ԽՄԲԱԿԱՆ ԵՐԳԻ ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 4 դաս.

Միաձայն (ունիսօնօ) և բազմաձայն երգեր՝ ա կապիլա և նուագարանների ձայնակցութեամբ՝ հոգեւոր, աշխարհիկ, ժողովրդապահան-հայկական և եւրոպական:

Ամբողջական բազմաձայն պատարագ:

Խմբական երգեցողութիւնը պէտք է անցնել նոյնպէս նօտաներով:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ն Կ Ա Ր Զ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ա. Ն Պ Ա Տ Ա Կ

Նկարչութիւն աւանդելու նպատակը հանրակրթական դպրոցներում պէտք է լինի նախ՝ զարգացնել աշակերտների դիտողութիւնը, դիտողութիւնից ստացած տպաւորութիւնների գիտակցական իւրացումը և նոցա պատկերաւոր կերպով ցուցադրելու ընդունակութիւնը:

Նկարչութիւնը բնութեան և երեակայութեան մէջ եղած առարկաների գծագիր պատկերացումով՝ կաւագործութեան հետ միասին հանդիսանում է որպէս համաշխարհային լեզու, հետեալը այս արուեստը բոլորը պէտք է սովորեն:

Երկրորդ՝ նկարչութիւնը սկսնակների մէջ զարգացնում է տեսողական տպաւորութիւնների գծագրային պատկերացումները:

Արուեստը մարդկային կեանքի անհրաժեշտ լրացուցիչ մասն է և նորա հոգեկան կարողութիւնների ներդաշնակ զարգացման ազդակը:

Նկարչութիւնը իւր ուսուցանելիք նիւթը վերցնելով բնութիւնից ու արձանագործութեան արուեստից, զարգացնում է մարդու մէջ նաև գեղեցիկը ճանաչելու կարողութիւնը:

Երրորդ՝ նկարչութիւնը զարգացնում է մարդու գեղարուեստական ճաշակը:

Բնութեան մէջ նկարելու անհամար նիւթ կայ. բոյսը, ծաղիկը, պտուղը, թռչուններն ու բզէզները, կենդանիները և այլն զպրոցական խիստ նպատակայարմար նիւթեր են թէ գեղարուեստական զարգացման և թէ գծագրելու տեսակէտից: Իսկ եթէ վերոյիշեալ առարկաները դիտողութեան ենթարկուեն ուսումնասիրելու նպատակով, այդ դէպքում աշակերտը նկարելով՝ անմիջապէս աւելի մօտիկ և լաւ կճանաչէ առարկան, քան թէ մի այլ եղանակով: Ըստ ինքեան հասկանալի է, որ բնութեան ուսումնասիր-

րութիւնը արուեստի ուսումնասիրութիւն չէ, բայց պէտք է ընդունել, որ բնութիւնը մշտապէս անսպառ աղբիւր է եղել արուեստի համար:

Աշխարհագրութեան ուսուցման ժամանակ նկարչութեան կիրառումը մեծ չափով բնութեան ուսումնասիրութիւն է: Բոլոր դրօսանքների ժամանակ մատիտն ու նկարչատետրը (ալբոմ), իսկ հնարաւոր դէպքերում նաև ջրաներկն ու վրձինը մշտական ուղեկիցներ պէտք է լինեն դրօսանք ելնողների՝ ուրուագծելու համար աշխարհագրական բազմաթիւ նիւթերը. և որքան նկարչատետրը արագ լցուի, այնքան էլ ուրուագծերն աւելի կատարեալ կդառնան, ուրեմն և օգտակար գործի համար:

Պատմութեան ուսուցման ժամանակ նոյնպէս նկարչութիւնը պատուաւոր տեղ պիտի գրաւէ. աւելի մեծ նշանակութիւն կունենայ ալբոմում նկարել հին ճարտարապետական մի որևէ կառուցուածք կամ նրա մի մասը, կան կարասիք, հագուստ, զարդանկար, պատմական արժէք ունեցող մի յուշարձան և այլն, քան թէ նկարագրել նոցա որևէ լեզուով, որովհետև գրուածքի ընթերցումը պահանջում է նոյն լեզուի գիտութիւնը, մինչդեռ նկարը բոլորին հասկանալի է:

Ֆիզիքայի դասերի ժամանակ անհրաժեշտ է, որ ուսուցիչը մի որևէ գործիքի մասին բացատրութիւններ տալիս՝ նախապէս ինքը նկարէ գրատախտակի վրայ այդ գործիքը և ապա պահանջէ, որ աշակերտներն էլ կարողանան նկարել նոյնը, որով թէ զարկ կատանայ նկարչութիւնը և թէ ֆիզիքայից անցած նիւթը լաւ կիրաւանայ:

Նոյնպէս պիտի վարուի և բնագիտութեան ուսուցիչը. օրինակ մի ծաղիկ բացատրելիս՝ նա նախ պիտի նկարէ ծաղիկի մասերն առանձին-առանձին, ապա ամբողջ ծաղիկը և պահանջէ, որ աշակերտներն արտանկարեն յատուկ բնագիտութեան համար պատրաստած իրենց տետրերում. այսպիսով ահա անցած նիւթն աւելի լաւ կը մտնեն:

Նկարչութիւնն իւր կատարեալ լրութեամբ կիրառուում է անհատական կեանքում, բայց մանաւանդ արդիւնագործութեան մէջ:

Մարդկային ձեւերի բոլոր ստեղծագործութիւններն իրենց ծնունդն առել և առնում են նախ գիտակցութեան մէջ, ապա նկար-պատկերներում արտայայտուելով՝ դառնում են ձեռնարկ վարպետի կամ գործադրողի համար:

Մի որևէ աշխատութեան դժագիր պատկերն աւելի արտա-
յայտիչ է, քան թէ մարդկային լեզուն:

Վերոգրեալներից հետևում է այն եղբայրացութիւնը, որ
նկարչութիւնը մի անմասն յենարան է դպրոցական շատ առար-
կաների դասընթացն յաջողութեամբ անցնելու համար, այլ և
նպաստում է տեխնիքական ու գեղարուեստական արդիւնագոր-
ծութեան զարգացման:

Բ. Բ Ա Յ Ա Տ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Նկարչութեան ծրագրի մէջ յիշուած կադապարներին կարող
են փոխարինել ուրիշները, եթէ միայն իրենց հիմնական ձևերով
համապատասխանում են ծրագրայինին և առ հասարակ նկարելու
առարկաների դասաւորութիւնը կարելի է փոփոխել ըստ յարմա-
րութեան:

Զպահանջելով մանրակրկիտ աշխատանք, բայց և թոյլ չտա-
լով անհոգութիւն և անմաքրութիւն, աշակերտների ուշադրութիւնը
պէտք է կենդրոնացնել նկարուող ձևի բնորոշ առանձնայատկու-
թիւնները ճիշտ արտայայտելու վրայ:

Պէտք է նկարել տալ թէ սպիտակ և թէ գունաւոր թղթի
վրայ՝ մատիտով, ածուխով, գրչով, կաւիճով, վրձինի օգնութեամբ
զանազան գոյներով ու գոյնզգոյն կաւիճներով, որպէսզի աշակերտ-
ները ծանօթանալով նկարչական աւելի շատ նիւթերի հետ, նկա-
րելու նիւթերն ընտրեն իրենց ներքին հակումով և տուած խնդիր-
ներին համապատասխան:

Ստուերներից պէտք է ամենից առաջ նկարեն առարկայի
ստուերը, յետոյ վայր ընկնող ստուերները և ապա, աստիճանաբար
վարժուելով անցնեն կիսաստուերներին և արտացոլման (рефлексы):

Զանազան գոյներով նկարելը բոլոր դասարաններում պէտք
է սկսել դասատուութեան հէնց առաջին տարուանից:

Ուսուցիչը պէտք է հետևի, որ աշակերտները ընականից
նկարեն տան ու դպրոցի շրջապատում գտնուող և առ հասարակ
իրենց շատ մօտիկ ծանօթ առարկաներ:

Շատ օգտակար է յաճախ ուրուագծել առարկաները զանա-
զան դիրքերում, իսկ կատարեալ կերպով աւարտել տալ միևնոյն
առարկայի միայն մի նկարը:

Յիշողութեամբ, տպաւորութեամբ և հրեակայութեամբ նկա-

րելը պէտք է գործադրել լայն ծաւալով, որը շատ օգտակար է թէ
ընդհանուր և թէ մասնաւորապէս դիտելու ընդունակութեան
զարգացման տեսակէտից:

Թոյլատրելի է, որ աշակերտները դասարանում արտանկա-
րեն օրինակ-նկարներից: Օրինակ նկարները հարկաւոր են միմիայն
նկարչական ոճի, գոյների և տեխնիքական զանազան մանրամաս-
նութիւնների բացատրութեան համար:

Միախնդրի ուղղումները կատարուելու են բանաւոր:

Ուսուցիչը ցուցադրում է նկարելու տեխնիքական այլ և այլ
միջոցները միայն:

Բարձր դասարաններում (Գ. դաս.) դասատուութիւնը կարող
է լինել խմբական և առանձին-առանձին աշակերտների հետ:

Ցանկալի է, որ աշակերտներն արդէն մի անգամ նկարած
առարկան յիշողութեամբ վերարտադրելով կրկին նկարեն զանա-
զան դիրքերով, որով թէ հրեակայութիւնը կզարգանայ և միևնոյն
ժամանակ կստուգուի թէ ինչ չափով նոքա իւրացրել են անցած
նիւթը:

Նկարչութեան ուսուցիչներն իրենց դասերին կարող են օգ-
տուել դպրոցում գտնուող ուսումնական բոլոր այն պիտոյքներով,
որոնք յատկացուած են այս կամ այն առարկային. օրինակ բնա-
գիտական, աշխարհագրական, ֆիզիքական և այլն: Այլ և պատ-
կերազարդելու նիւթեր կարող են ընտրել լեզուների ու պատ-
մութեան դասերին անցած դասընթացից:

Անհրաժեշտ է, որ նկարչութեան ուսուցիչն իւր դասերին
բացատրէ աշակերտներին նկարչութեան նշանակութիւնը և դա-
սերից դուրս զրոյցներ ունենայ նոցա հետ գեղարուեստի պատ-
մութեան շրջաններից, ծանօթացնելու գեղարուեստական արտա-
դրութիւնների կամ նոցա ընդօրինակումների հետ. այս ճանա-
պարհով աշակերտների համար աւելի կպարզուի նկարչութեան
նշանակութիւնը:

Նկարչութեան մէջ ընդունակ աշակերտների համար առար-
կայի դասատուութիւնը չպէտք է վերջանայ Գ. դասարանում, այլ
այդպիսի աշակերտների հետ և նոցա ցանկութեամբ, հարկաւոր
է շարունակել դասերից դուրս պարապելը շաբաթական գոնէ
երկու անգամ, որով առանձին ընդունակութիւն ունեցողներին
հնարաւորութիւն կտրուի զարգանալու և կատարելագործուելու
արուեստի մէջ, որքան այդ թոյլ կտայ դպրոցական միջավայրը:

Այս ծրագիրը կազմելիս նկատի ենք ունեցել այն հանգա-

մանքը, որ թեմական դպրոցի Ա. դասարան մտնողները ծխական դպրոցում անցած պիտի լինեն նկարչութիւն այն չափով, որ կարողանան այնուհետեւ անսայթաք շարունակել թեմական դպրոցների համար ծրագրուածը:

Ա. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

1. Աշակերտները դասարանում պիտի նկարեն թէ բնականից և թէ իրենց յիշողութիւններից ու տպաւորութիւններից:
 2. Նկարել բնական դիրքով ու ձևով բարդ տերևներ, օրինակ՝ վարդենու, վայրի շագանակի, վայրի խաղողի, սօսենու և այլն:
 3. Նկարել իրենց կազմութեամբ աւելի պարզ ծաղիկներ:
 4. Նկարել տնային գործածութեան մէջ եղած աւելի բարդ իրեր:
 5. Ծանօթացնել աշակերտներին դիտողական կամ զննական (наглядное) հեռանկարի կանոնների հետ:
 6. Ուրուագծել ընկերներին:
 7. Լեզուի կամ պատմութեան անցած դասերից նպատակաշարմար նիւթերը պատկերազարդել:
 8. Զարգանկարչութիւն: Տարրական ծանօթութիւն դարդանկարներ կազմելու եղանակի մասին (ритмъ, симметрия):
 9. Կաւագործութիւն (лѣпка):
 10. Ի մօտոյ ծանօթութիւն գեղարուեստական նկարների կամ նոցա պատճէնների հետ:
- Նկարչութեան դասերին իբրեւ նկարելու նիւթ կարող են ծառայել.
1. Գլանաձև առարկաներ, գլանաձև ամաններ, գործիքներ, փայտի կտորներ և այլն.
 2. Կոնաձև առարկաներ. շշեր, կողովներ, գլխարկներ, կուժ, սրճաման և այլն.
 3. Գնդաձև առարկաներ. թէյամաններ, ճապօնական լապտերներ, մարմնամարդութեան համար գործադրուող երկաթէ գնդեր և այլն.
 4. Հարթ մակերևոյթ ունեցող առարկաներ. արկղներ, արկղիկներ, նստարան, սեղան, պատի դարակ և այլն.

5. Կաւագործութեան համար որպէս կաղապար (модель) կարող են ծառայել.— թարմ տերևներ, թաց մրգեր ու ելակներ և բնութեան մէջ գտնուող դանազան առարկաներ:

Բ. ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դաս.

1. Նկարել բնական առարկաներ, այլ և յիշողութիւններ ու տպաւորութիւններ:
 2. Նկարել ծառի ճիւղեր տերևներով ու մրգերով, բանջարեղէններ, ծաղիկներ, թիթեռներ ու բզէզներ:
 3. Նկարել աւելի տեղական բնոյթ ունեցող տնային իրերի հաւաքածու, 2—3 իր միասին:
 4. Ուսուցանել հեռանկարի կանոնները՝ բնական իրեր նկարելու ժամանակ:
 5. Նկարել զաճից (դիպսից) պատրաստած 2—3 մարմիններ (орнаментъ):
 6. Կազմել զարդարանքի բնոյթ կրող եզրազարդեր (декоративная), գրքերի շապիկ, պնակի և օրացոյցի նկարներ:
 7. Ծանօթացնել նկարչական ոճերի (стилизация) և ձևերի հետ:
 8. Պատկերազարդել դասարանում անցած նիւթերից:
 9. Ուրուագծել ընկերներին:
 10. Նկարել բացօդեայ:
 11. Կաւագործութիւն:
 12. Գեղարուեստական նկարների կամ նոցա պատճէնների ուսումնասիրութիւն:
- Իբրեւ նկարելու նիւթ կարող են ծառայել Ա. դասարանում նկարած իրերից՝ մի քանիսը միասին. դարակ, գրակալ, կլոր քուրսի, տակառ, աստիճանաւոր սանդուխտ, աւելի բարդ առարկաներ շրջապատից վերցրած.— ամաններ, անօթներ (վազեր), տնային բոյսեր, դրուագներ (օրնամենտներ), թիթեռներ, բզէզներ և այլն:

Գ. ԴԱՍԱՐԱՆ

Շ ա բ ա թ ա կ ա ն 2 դ ա ս .

1. Նկարել բնականից, յիշողութիւններից ու ստղանքութիւններից:

2. Նկարել շրջապատող բնութիւնը և տնային կահաւորութիւնը:

3. Նկարել խրտուիլակ (чучело), գանգեր, կենդանիների գլուխներ և տեղային բնոյթ կրող դրուադներ (օրնամենտներ):

4. Ուրուադծել կենդանիներ, բոյսեր, տեսարաններ, ընկերներին,—հեռանկարի կանոններով:

5. Նկարել բացօդեայ:

6. Պատկերադարդել սովորած նիւթերից:


7. Կազմել զարդանկար (сочинение декоративного и живописного характера), ամսաթերթի շապիկ, երեկոյթի ծրագիր, շրջանակ, կոճկամայր (չափրաստ) և այլն:

8. Գեղարուեստական նկարների տեսութիւն:

9. Կաւագործութիւն:

Իբրև նկարելու նիւթ կարող են ծառայել գեղարուեստական —արդիւնագործական (художественно-промышлен.) իրեր, գանազան նիւթերից, երաժշտական գործիքներ, թռչունների խրտուիլակ, գազաններ, գանգեր, թարմ բոյսեր և ճարտարապետական մանրամասնութիւններ (գէտայլներ):

Կաւագործութեան նիւթն ընտրում է ուսուցիչը:



Ծ Ր Ա Գ Ի Ր

Մ Ա Ր Մ Ն Ա Մ Ա Ր Զ Ո Ր Թ Ե Ա Ն

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԿԵՏԵՐ

Դպրոցական մարմնամարզութիւնը ձգտում է ընդհանուր առողջապահական նպատակի. նա աչքի առաջ ունի պահպանել և զարգացնել աշակերտների առողջութիւնը, ոյժը, մարմնի ճկունութիւնն ու վայելչակազմութիւնը և հետևում է, որ աշակերտները մարզուեն ընդհանուր կարգապահութեան մէջ: Նաև որոշ դէպքերում, մարմնամարզութեան միջոցով աշակերտութիւնից վերանում են յետամնացութեան, կամքի թուլութեան, մոտւոր և մարմնական յոգնածութեան, թմրութեան, անդուսպ ու ակամայ շարժումների և ուրիշ բացասական արտայայտութիւններ՝ վերահաստատելով բնական (նորմալ) դրութիւն և «առողջ հոգին առողջ մարմնի մէջ» ասացուածի իմաստը:

Վերոյիշեալ նպատակը կարող է բաւարարութիւն ստանալ, եթէ մարզանքի ամենօրեայ կանոնաւոր դորձադրութիւնը ներքին պահանջ դառնայ աշակերտների համար և՛ դպրոցն աւարտելուց յետոյ, միշտ նկատի ունենալով սակայն, որ մարմնամարզութեան անտեղի ու չարաչար գործադրութիւնը չափազանց վնասակար է:

Մարմնամարզութեան կից պէտք է անցնել չափկական, Ասիական և ընդհանուր Եւրոպական պարեր, որովհետև սոքա նոյնպէս մարմնակազմի կանոնաւոր շարժողութեան վարժութիւններ են:

Մարմնամարզութիւնը դպրոցներում պէտք է անցնել բացօդեայ և միայն աննպաստ եղանակներին մարզարանում:

Բ. „Ս Օ Կ Օ Լ Ա Կ Ա Ն“ Ս Ի Ս Տ Ե Մ

«Սօկօլական» սխտեմը պարունակում է գործիքների վարժութիւններ: Միեւնոյն ժամանակ այս սխտեմը ծաղկաքաղ անելով մարմնամարզութեան «Շուէդական», «Միւլլերական», «Զինուորական» և «Անգլիական» սխտեմներից նպատակաշարմար և լաւագոյն տարրերը՝ կազմել է դպրոցական մարմնամարզութեան մի ամբողջացած ծրագիր, հետեւաբար մեր դպրոցներում այս առարկան պէտք է աւանդել «Սօկօլական» սխտեմով:

1. Զինուորական սխտեմի վարժութիւններից անցնել ամենակարեւորները:

2. «Սօկօլական» գործիքային մարմնամարզութիւնը կարօտ է աւելի ուշադիր վերաբերմունքի. կան գործիքներ, որոնք պահանջում են յատուկ վարժուած մկաններ, ուստի գործիքների մէջ խիստ յաջորդական կարգ պահպանելով, ամէն դասի բաւական է 3—4 գործիքի վարժութիւններ անել տալ, իւրաքանչիւրը 7—8 բոպէ տևողութեամբ:

3. «Միւլլերեան» սխտեմը պարունակում է բնական ու հասարակ վարժութիւններ և պէտք է յանձնարարել աշակերտներին, որ այդ վարժութիւններն իրենց տներում անցնեն ինքնուրոյն կերպով, իսկ մարմնամարզութեան դասերին երբեմն խմբական կրկնութիւններ անել տալ:

4. «Շուէդական» սխտեմը պարունակում է գործիքաւոր կամ անգործիք վարժութիւններ:

5. «Անգլիական» սխտեմը պարունակում է հասարակական խաղեր, որոնք պէտք է անցնել ի նկատի ունենալով աշակերտների տարիքը:

Որովհետև աշակերտների կազմութեանը ու առողջութիւնը տարբեր են իրարից, ուստի մարզանքների ժամանակ իւրաքանչիւր դասատան աշակերտներին անհրաժեշտ է բաժանել խմբերի, ընդունելով ամէն մի խմբում մօտաւոր համաչափ զարգացմամբ 8—10 աշակերտ և կարգելով նրանց վրայ մի—մի խմբապետ դասընկերներից՝ մարմնամարզութեան մէջ աւելի հմուտներին:

Խմբապետների համար հարկաւոր է շաբաթական մէկ կամ երկու անգամ առանձին դասեր սահմանել, որպէսզի նոքա նախապէս անցնեն այն վարժութիւնները, որ յետոյ անցնելու է ամբողջ դասարանը:

Գ. Դ Ա Ս Ի Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ի Բ Պ Ա Տ Կ Ե Ը

Վերոյիշեալ սխտեմների վարժութիւնները մարմնամարզութեան բոլոր դասերին պէտք է կիրառուեն հետեւել յաջորդակա՝ նութեամբ ու տևողութեամբ.

1. «Զինուորական» մարմնամարզութիւն . . . 5—7 բոպէ

2. «Սօկօլական» գործիքային 20—25 »

3. «Շուէդական» և «Միւլլերի» 5—7 »

4. «Անգլիական» և պարեր 10—15 »

և 5. Դասավերջին 2—3 բոպէ մնացած պէտք է դադարեցնել վարժութիւնները և աշակերտներին շարք կանգնեցնելով քայլել տալ նոցա տյնքան, որ բաւականաչափ հանգստանան իրենց միւս պարապմունքներն սկսելու համար:

Դ. Ծ Ի Ա Գ Ի Բ Ա. Դ Ա Ս Ա Տ Ա Ն

Շ ա բ ա թ ա կ ա ն 2 դ ա ս .

1. «Զինուորական» վարժութիւններ. շարք կանգնել, քայլել, վազել, պտոյտ անել (поворотъ) և այլն:

2. «Սօկօլական» գործիքային վարժութիւններ. սողալու ձող (шесть), ուղղահայեաց սանդուխ (вертикальная лестница), վերիք (подъемъ), իշուկ (козелъ), պարան (канатъ), ցատկել դէպի առաջ և դէպի վեր (прыгание въ длину и вышины):

3. «Շուէդական» և «Միւլլերական» սխտեմների վարժութիւններ առանց գործիքների կամ գործիքներով. ծանրաքարեր, փայտեր, շշեր և այլն. պարզից անցնելով բարդ վարժութիւններին:

4. «Անգլիական» սխտեմից՝ խաղեր և հայկական ու ասիական պարեր:

Բ. Գ. և Դ. դասարաններում շաբաթական երկուական դասով պէտք է անցնել «Զինուորական», «Շուէդական» և «Անգլիական» սխտեմների հետզհետէ բարդացող վարժութիւնները:

Բ. դասարանում շարունակել հայկական ու ասիական պարերը:

Գ. և Դ. դասարաններում անցնել ընդհանուր եւրոպ. կենս. պարեր:

«Սօկոլական»-ի գործիքային վարժութիւններից անցնել Բ. դասարանում— թեք սանդուխ (наклонная лестница), ցանկափայտ (барьер), սեղան (стол):

Գ. դասարանում՝ դառնակ (гиря), ծանրաքարեր (гири тяжести):

Դ. դասարանում՝ օղակներ (кольца), զուգափայտեր (бруссы):

Ե. Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Մարմնամարզական վարժութիւններն աւելի աջողութեամբ կատարելու համար ցանկալի է, որ աշակերտները հագնեն «չուստեր» և թեթեւ հագուստ: Ընդունելով չափի (ритм) մեծ կարեւորութիւնը առ հասարակ աշխատութեան ժամանակ, ցանկալի է մարմնամարզի խմբական որոշ վարժութիւնները (օրինակ «Շուէգականը») անցնել երաժշտական մի որևէ գործիքի նուագածութեամբ:

Հարկաւոր է խրախուսել աշակերտներին սովորելու մարզանքի (սպորտային) բոլոր տեսակի խաղերը: օրինակ՝ թիավարել, լող տալ, ոտգնդի (ֆութբոլ) ամուճ (lawn-tennis) և այլն:

Մարմնամարզութեան ուսուցչի ղեկավարութեամբ քաղաքից դուրս զբօսանքներ կազմակերպելը ցանկալի է համարում աշակերտների պնդանալու և արագ ու անընդհատ քայլել վարժուելու համար:

Ցանկալի է նոյնպէս տարին մէկ կամ երկու անգամ մարմնամարզական հանդէսներ կազմակերպել, ուր հրապարակ բերուին մարմնամարզութիւնից աշակերտների անցած բոլոր վարժութիւնները:



ՀՀ Ազգային գրադարան



NL0239137

53. 677